

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Ե Ս

2005

5

Հրատարակվում է
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլխավոր խմբագիր՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ նախագահի առաջին օգնական

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ նախագահի օգնական

ՄԱՆՎԵԼ ԲԱԴՍՅԱՆ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի
նախագահ

ՎԱՐԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
(պատասխանատու քարտուղար)

ԷՂՈՒՐԴ ՕՐԴՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՄՎՐՏՈՒՄՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ

քաղաքագիտության դոկտոր

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
Երևան

ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЕ

Главный редактор:

Армен Арутюнян доктор юридических наук, профессор

Совет редакторов:

Армен Геворгян первый помощник президента РА

Виген Саргсян помощник президента РА

Манвел Бадалян председатель Совета гражданской службы РА

Ваге Степанян доктор юридических наук, профессор

Гагик Арутюнян доктор юридических наук, профессор

Гарник Сафарян доктор юридических наук, профессор

Юрий Суварян доктор экономических наук, профессор
(ответственный секретарь)

Эдуард Ордян доктор экономических наук, профессор

Грант Аванесян доктор психологических наук

Мелс Мкртумян доктор психологических наук, профессор

Гарик Керян доктор политических наук

Мариам Маргарян кандидат философских наук, доцент

*Public Administration Academy of the
Republic of Armenia*

PUBLIC ADMINISTRATION

Chief editor:

Armen Harutyunyan, doctor of Sciences (Law), Professor

Board of editors:

Armen Gevorgyan chief assistant to the President of the RA

Vigen Sargsyan assistant to the President of the RA

Manvel Badalyan president of Civil Service Council of the RA

Vahe Stepanyan doctor of Sciences (Law), Professor

Gagik Harutyunyan doctor of Sciences (Law), Professor

Garnik Safaryan doctor of Sciences (Law), Professor

Yuri Suvaryan doctor of Sciences (Economics), Professor
(responsible secretary)

Eduard Ordyan doctor of Sciences (Economics), Professor

Hrant Avanesyan doctor of Sciences (Psychology)

Mels Mkrtyunyan doctor of Sciences (Psychology), Professor

Garik Keryan doctor of Sciences (Political Sciences)

Mariam Margaryan doctor of Philosophy, Docent

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարում	6
<hr/> <hr/>	
Ս. ԵՄԻՆ	
<i>Ֆինանսավան Կերպարանության Արձանագրություններ</i>	6
Իրավագիտություն	14
<hr/> <hr/>	
ՀՐԱՆՈՒՇ ՀԱՎՈՐՅԱՆ	
<i>Ազգային ժողովի Աշխատակազմի Դերը Խորհրդարանի Գործունեության Արձանագրության Գործում</i>	14
ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ	
<i>Օրենսդրական Նախաձեռնությունների Իրավունք (Համեմատական վերլուծություն)</i>	40
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ	
<i>Բանկային Իրավունքի Հասկացություններ ԵՎ Հասկարգը</i>	52
Տնտեսագիտություն (Կառավարում)	61
<hr/> <hr/>	
ՍԵՐՁԵՅ ՊԵԼԻՒ, ՍԵՐՁԵՅ ՊԵՄԿՈՎ	
<i>Դրամավարկային Ուղորդի Ձեռնարկում Հասկարգային Մոտեցումը Հեծանքի Արձանագրության Երկրներում</i>	61
Օ. ՊՐԻՆՈՂՉԵՆԿՈ, Տ. ՆԻԿԻՏԻՆԱ	
<i>Բեռնափոխակա Բեռնափոխարկների Դիրքը Միջազգային Ափսոսալի Մոտեցումներ Ծանոթությունների Միջակայքին Շոխայում</i>	71
ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ	
<i>Արձանագրության Տեսանկյուն Կարգերի Կառավարում Խնդիրները ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ</i>	83
Հոգեբանություն	97
<hr/> <hr/>	
ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	
<i>Մոտեցումային Կարգերի Կառավարում Գործընթացների Միասնություններ Որդի Որդեղություններ Զարգացում Նախարարություն</i>	97
Քաղաքագիտություն	105
<hr/> <hr/>	
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ	
<i>Քաղաքային Գործընթացները ՀՀ Ժողովրդավարական Անճամ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ</i>	105
Գրքերի տեսություն	122
<hr/> <hr/>	
Հուշագիր հեղինակին	125
<hr/> <hr/>	

СОДЕРЖАНИЕ

Публичное управление	6
С. ЕСИН <i>ЭФФЕКТИВНОСТЬ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ</i>	6
Юридические науки	14
Г. АКОПЯН <i>РОЛЬ АППАРАТА НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПАРЛАМЕНТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ</i>	14
Г. КОСТАНЯН <i>ПРАВО ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ИНИЦИАТИВЫ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)</i>	40
С. МУРАДЯН <i>Ի Դ Դ ԲՕԷՆ Է ՆԵՆՈՒԻ Ը Ա ԱԻ ԷԻ ԱՆԷԻ ԱԻ Ի ՎԱՒԱ</i>	52
Экономика (управление)	61
С. ПЕЛИХ С. ДЕМКОВ <i>СИСТЕМНЫЙ ПОДХОД К ФОРМИРОВАНИЮ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ СФЕРЫ ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКИХ СТРАН</i>	61
О. ПРИХОДЧЕНКО Т. НИКИТИНА <i>ПОЗИЦИЯ БЕЛОРУССКИХ ГРУЗОПЕРЕВОЗЧИКОВ НА КОНКУРЕНТНОМ РЫНКЕ МЕЖДУНАРОДНЫХ АВТОТРАНСПОРТНЫХ УСЛУГ</i>	71
Т. МАНАСЕРЯН <i>ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ В АРМЕНИИ</i>	83
Психология	97
С. АРУТЮНЯН <i>ЕДИНСТВО ПРОЦЕССОВ СОЦИАЛИЗАЦИЯ-ИНДИВИДУАЛИЗАЦИЯ КАК ПРЕДПОСЫЛКА РАЗВИТИЯ ДУХОВНОСТИ</i>	97
Политология	105
М. МАРГАРЯН <i>ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В УСЛОВИЯХ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА РА</i>	105
Обзор книг	122
Памятка автору	125

CONTENTS

Public Administration	6
<hr/>	
S. YESIN <i>REGULATION OF PUBLIC SERVICES IN THE SPHERES OF NATURAL MONOPOLIES OF THE REPUBLIC OF ARMENIA</i>	6
Law	14
<hr/>	
H. HAKOBYAN <i>THE ROLE OF THE STAFF OF THE NATIONAL ASSEMBLY IN ENSURING ACTIVITIES OF THE PARLIAMENT.</i>	14
G. KOSTANYAN <i>LEGISLATIVE INITIATIVE LAW (COMPARATIVE ANALYSIS)</i>	40
S. MURADYAN <i>CONCEPTION AND SYSTEM OF BANKING LAW</i>	52
Economics (management)	61
<hr/>	
S. PELIKH S. DEMKOV <i>SYSTEM APPROACH TO ESTABLISHMENT OF MONETARY SPHERE IN POST-SOCIALIST COUNTRIES</i>	61
O. PRIKHODTCHENKO T. NIKITINA <i>POSITION OF THE BYELORUSSIAN MOTORTRANSPORT INTERNATIONAL CARRIERS AT THE COMPETITIVE MARKET OF THE TRANSPORT SERVICES</i>	71
T. MANASERYAN <i>FOREIGN ECONOMIC RELATIONS MANAGEMENT ISSUES IN ARMENIA</i>	83
Psychology	97
<hr/>	
S. HARUTYUNYAN <i>UNITY OF SOCIALIZATION-INDIVIDUALIZATION PROCESSES AS A PRECONDITION OF DEVELOPMENT OF SPIRITUALITY</i>	97
Political science	105
<hr/>	
M. MARGARYAN <i>POLITICAL PROCESSES IN TERMS OF THE RA DEMOCRATIC TRANSITION</i>	105
The review of books	122
<hr/>	
Instruction to the author	125
<hr/>	

ЕСИН С. О.

*Проректор Академии управления при
Президенте Республики Беларусь*

ЭФФЕКТИВНОСТЬ ФИНАНСОВОГО КОНТРОЛЯ

1. При рассмотрении вопроса об эффективности любой общественной деятельности, прежде всего имеют в виду адекватность достигнутых в процессе ее осуществления положительных результатов намеченным целям, степень приближения результата к цели с учетом произведенных затрат (времени, материальных и денежных средств, трудовых ресурсов и т. д.). Эффективность финансового контроля — сложное понятие, которое характеризуется определенными критериями, выявлением и оценкой ряда показателей, на уровень которых влияют различные социальные, экономические и иные факторы [1]. Несмотря на наличие монографической литературы и учебных пособий [2, 3] по обсуждаемой проблеме, вопросы эффективности финансового контроля в них не рассматриваются. Следует отметить, что подобного понятия эффективности придерживаются многие ученые: философы, экономисты, социологи, юристы. Разделяя их точку зрения, можно сказать, что эффективность контроля — это соотношение результата контролирующего органа и поставленной перед ним задачи, достижение этой задачи с наименьшими затратами времени, сил и средств [4].

В своей работе мы исходим из того, что общей целью единого механизма государственного и финансового контроля является обеспечение четкого, бесперебойного функционирования каждого органа управления, каждого должностного лица, аппарата государственного управления в целом на основе соблюдения законодательства, определяющего их задачи, функции и правомочия. Более конкретно следует иметь в виду целевое назначение каждого органа или должностного лица, выполняющего контрольные функции, каждого вида контроля, каждой системы контроля, каждой отдельной проверки. От того, в какой мере эти цели достигаются, зависит эффективность проводимого ими контроля.

Конечный результат, т. е. совокупность объективных последствий контроля, — это главный критерий определения его эффективности. Получение данных о таком результате требует знания конкретного содержания деятельности контролирующего органа или лица, реакции на их действия проверяемого, изменений, происходящих под влиянием контроля в управленческой деятельности. Невозможно судить о резуль-

татах контроля без выявления практических последствий, которые он оказал на содержание деятельности проверяемого объекта или должностного лица. Учет практических последствий контроля для управленческой деятельности тем более необходим, что под эффективностью контроля подразумевается достижение не всякого положительного результата, а только того, который является следствием контроля. Если контрольный орган обнаружил какие-то недостатки или нарушения, выяснил, кто в них персонально виноват, он обязан не только принять меры к виновным, но и указать пути и способы улучшения дела, указать, как и кто их должен устранить, установить для этого определенный срок, а затем проверить, что вышло на деле. Цель контроля — не фиксировать недостатки, собирать различные справки и составлять решения, а оказывать реальную помощь в их устранении, причем, делать в этом отношении максимум возможного.

2. Однако результаты контроля будут неточными, если при их подведении не учитывать сопровождающие проведение контроля затраты-длительность проверок, число участвующих в проверках лиц, различного рода расходы (транспорт, командировки). Затраты на проведение контроля могут быть большими или меньшими, но должны соизмеряться с его результатами. Степень эффективности контроля тем выше, чем меньше усилий и средств затрачивается на достижение положительного результата. Оценка воздействия контроля на объект контроля всегда связана с изменениями, которые последовали после его проведения. Такие критерии эффективности контроля, как результативность, действенность, позволяют судить о ней только в общей форме. Конкретно оценивать сами практические результаты контроля помогает разработка и использование устойчивых показателей. Если критерии достижения цели контроля имеют общий характер, то для показателей характерно раскрытие внутреннего содержания контрольной работы, показ составных частей, из которых складывается полученный положительный результат, что и дает возможность оценивать качество контроля. Показатели играют двойную роль- свидетельствуют об уровне работы контролирующих органов и являются основой оценки его работы, а кроме того— помогают направлять их работу, выявлять и устранять возникающие неполадки. Показатели всегда должны содержать в себе оценку проводимой контрольным органом работы.

3. Общие критерии эффективности контроля обладают гораздо большей стабильностью, чем показатели, т.к. показатели многочисленнее и разнообразнее, отражают различие задач конкретных органов и проверок, специфику деятельности органов управления различными отраслями экономики, социально-культурной и административно-политической деятельности. Например, для администрации промышленных предприятий — это показатели роста производительности труда рабочих и служащих, использование основных фондов, рентабельность, соблюдение

качества выпускаемой продукции, в других — количество и качество коммунальных и иных услуг на определенное число граждан. Таким образом, если критерии эффективности контроля отличаются общим характером, то для показателей эффективности характерны конкретность, множественность и разнообразие. На практике эффективность контроля часто оценивается по общим экономическим или иным результатам деятельности проверенного объекта. Однако определение степени эффективности контроля в зависимости от общих итогов работы подконтрольного объекта имеет немало трудностей, потому что успехи того или иного органа управления, администрации производственного предприятия зависят не только от позиции контрольных органов, но и прежде всего от усилий самих проверяемых. Трудность заключается в разграничении результата контрольной деятельности и всего того, что является результатом работы других органов и лиц, коллективов, общественных организаций.

4. Сложнее обстоит дело с установлением эффективности контроля в сферах социально-культурной и административно-политической деятельности, где учета одних экономических показателей нередко бывает недостаточно или они вообще неприменимы. Например, в области торговли наряду с экономическими показателями учитывается число нарушений правил торговли, ассортимент товаров широкого спроса, культура обслуживания покупателя, в области образования — качество обучения и трудового воспитания учащихся и т.д.

Главную трудность при проведении такой работы составляет разнообразие показателей, с которыми приходится иметь дело. Причем в зависимости от целей и задач контроля одни и те же показатели применительно к разным органам управления, их разным звеньям могут оцениваться неодинаково. Показатели, отражающие степень воздействия контролирующего органа на деятельность подконтрольного объекта или лица, его влияние на содержание управленческой деятельности, ее стиль, могут быть подразделены на количественные и качественные. Те и другие характеризуют деятельность органов управления, администрации предприятий и организаций уже после проверки по тем или иным вопросам.

5. Правильная оценка результатов деятельности контрольных органов связана с выявлением и учетом таких показателей, которые характеризуют затраты, связанные с осуществлением контроля. Они включают число проверяющих и число работников проверяемого органа, которые готовят необходимые материалы, затраченное теми и другими время, полноту даваемых сведений, общее число участников проверки и т. д. Изучение подобных показателей позволяет устанавливать соразмерность произведенных затрат и реальных результатов контроля. В ряде случаев сопоставление затрат и достигнутых результатов показывает, что контроль проводился наспех или, наоборот, было затрачено много времени, привлечено значительное число людей, а результаты оказались

ничтожными. Практика показывает, что при хорошей организации затраты на контроль обычно являются небольшими. Выявление и разработка показателей контроля, их систематизация, установление взаимосвязи и взаимозависимости между различными показателями контроля и его результатами -- комплексная задача. Для ее решения необходим учет целого ряда условий. Неэффективность или низкая эффективность контроля в ряде случаев являются следствием несоблюдения условий его правильной организации и проведения.

6. В первую очередь следует четко установить структуру эффективности финансового контроля, которая, по нашему мнению, состоит из двух частей: народнохозяйственная эффективность и эффективность работы органа финансового контроля.

Народнохозяйственная эффективность - это сумма эффектов, полученных от проведения финансового контроля. В нее входят: социальный эффект, организационный эффект, экономический эффект. Социальный эффект финансового контроля проявляется в том, что по его результатам применяются меры к лицам, допустившим нарушение финансового законодательства, включая увольнение и привлечение к уголовной ответственности. Таким образом, в результате финансового контроля улучшается социальная структура коллективов, руководящие должности занимают более квалифицированные, ответственные и честные люди. В обществе в целом формируется большее доверие к власти, поскольку оно (общество) видит действенность власти, а это является одной из основ социальной справедливости в государстве. Организационный эффект заключается в том, что по итогам контрольных мероприятий, проводимых, в частности, Комитетом государственного контроля (КГК) Республики Беларусь предлагаются и реализуются меры по улучшению структуры власти, в результате чего повышается управляемость в государстве, сокращаются излишние звенья или создаются новые, необходимые для экономики, повышается оперативность управления. Это подтверждается ускорением подготовки постановлений Правительства по конкретным экономическим проблемам. Так, по предложениям (КГК) Правительством республики принят ряд постановлений, которые без финансового контроля вообще не были бы приняты или приняты в сроки, когда актуальность вопросов уже отпала. Экономический эффект проявляется в том, что обеспечивается возврат средств, использованных не по целевому назначению, и штрафных санкции за это в республиканский бюджет. Эти средства составляют значительные суммы. Кроме того, экономический эффект получается в результате улучшения деятельности органов исполнительной власти в части экономии бюджетных и внебюджетных средств, повышения рентабельности производства, снижения себестоимости продукции и т. д. Что касается экономической эффек-

тивности финансового контроля, то она может быть определена по следующей формуле: $\mathcal{E}_{\text{эф}} = (\mathcal{E}_c + \mathcal{E}_o + \mathcal{E}_s) / 3$, (1)

где $\mathcal{E}_{\text{эф}}$ - экономическая эффективность, \mathcal{E}_c - денежное выражение социального эффекта, \mathcal{E}_o - денежное выражение организационного эффекта, \mathcal{E}_s - денежное выражение экономического эффекта, 3- затраты на содержание органа финансового контроля.

Не все показатели в формуле (1) и не всегда можно оценить количественно и в денежной форме. Поэтому в практической деятельности наиболее приемлем упрощенный расчет экономической эффективности:

$$\mathcal{E}_{\text{эф}} = (\mathcal{E}_b + \mathcal{E}_c) / 3, \quad (2)$$

где \mathcal{E}_b - средства, возвращенные в бюджет, \mathcal{E}_c - средства, полученные в результате улучшения деятельности объекта контроля. В том случае, если сложно определить и \mathcal{E}_c - эффективность рассчитывается по формуле:

$$\mathcal{E}_{\text{эф}} = \mathcal{E}_b / 3 \quad (3)$$

Для повышения эффективности финансового контроля необходимо повышать качество работы контролирующего состава, который должен выявлять максимально возможное количество нарушений и снижать себестоимость контрольной работы. В идеальном варианте, контроль должен привести к сокращению выявленных нарушений, т. е. в перспективе он должен иметь характер профилактический.

7. Основываясь на изложенных выше теоретических положениях, попытаемся сформулировать критерии и показатели эффективности финансового контроля. Критериями являются- результативность, действенность и экономичность. Каждый из названных критериев может быть оценен количественно, и это весьма важно для оценки эффективности финансового контроля. В этой связи предлагаются следующие показатели эффективности финансового контроля.

Критерий результативности должен включать:- выявленный объем средств, использованных с нарушениями законодательства выявленный объем неэффективно использованных средств, -выявленный объем средств, использованных не по целевому назначению, -количество подготовленных представлений и предписаний.

Критерий действенности должен включать: - количество исполненных представлений и предписаний, - объем средств, возвращенных в федеральный бюджет и на бюджетные счета организаций, - количество структурных преобразований в министерствах, ведомствах и на предприятиях, осуществленных по представлениям и предложениям, - увеличение доходной части бюджета или экономии его расходной части, полученные по представлениям и предложениям, - количество поправок к действующему законодательству, - количество постановлений Правительства РБ, принятых по представлениям и предложениям, - количество

решений (приказы, распоряжения, нормативные акты), принятых по представлениям и предложениям, - количество уголовных дел, открытых по представлениям и предложениям.

Критерий экономичности должен включать: - объем средств, затраченных на осуществление финансового контроля, - объем средств, затраченных проверяемым субъектом контроля на подготовку материалов для проверяющих, - уровень экономичности - отношение полученного экономического эффекта от реализации представлений и предложений к затратам на содержание органа финансового контроля.

Таким образом, представленные методические основы определения эффективности государственного финансового контроля позволяют оценить эффективности финансового контроля как управленческого действия (функции), так и деятельности органа финансового контроля. Кроме того, они дают возможность сквозной оценки, т. е. приемлемы на различных уровнях управления органа финансового контроле (от инспектора до органа контроля в целом), а также количественно определимы, что позволяет оценивать деятельность органа финансового контроля в динамике.

8. Для оценки эффективности работы инспекторского состава может быть использована следующая методика. Сначала определяются показатели, применяемые при расчетах, которые должны охватывать основные результаты деятельности инспекторского состава: - объем проверенных средств, - количество проведенных контрольных мероприятий, - объем нецелевого использования бюджетных средств, выявленных при проведении контрольного мероприятия, и сумма начисленных штрафных санкций, - количество представлений, подготовленных по итогам контрольных мероприятий, - объем средств, возвращенных в бюджет по итогам контрольных мероприятий. По нашему мнению, на основании этих показателей можно проводить расчет коэффициентов эффективности работы каждого инспектора:

9. Таким образом, предложенные подходы к оценке эффективности государственного финансового контроля могут позволить существенно повысить ответственность за результативность контроля и увеличить эффективность деятельности органа финансового контроля.

ЛИТЕРАТУРА

1. Князев С.Н. Управление: искусство, наука, практика: Учебное пособие. – Мн., 2002.
2. Румянцев А.В. Финансовый контроль: Курс лекций. -М., 2003.
3. Грачева Е.Ю. Финансовый контроль: М.: Издательский дом «Камерон», 2004.
4. Князев С.Н. Организация управленческой деятельности: Научные труды Академии управления при Президенте Республики Беларусь. Вып.4. -Мн., 2004.

S. YESIN

*Vice-rector in general matters,
Academy of Public Administration under
the aegis of the President of the Republic of Belarus*

FINANCIAL CONTROL EFFICACY

Different approaches to financial control efficacy determination and its methods are analyzed in the article. Efficacy appreciation criteria on the whole as well as in separate spheres are given. The author proposes also the general appreciation of work of public servants who are exercising financial control.

ՀՐԱՆՈՒՇ ՀԱՎՈՐՅԱՆ

*ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ԴԵՐՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Պաշտամենտարիզմը, որպես ժողովրդավարական հասարակության հիմք, իրավական պետության անբաժան մասն է: Այն և՛ տեսական, և՛ գործնական առումներով շաղկապված է իրավական ու ժողովրդավարական պետության կառուցման խնդրի հետ: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական պետություններում բուռն զարգացում ստացավ պաշտամենտարիզմը, սակայն խորհրդային երկրում պաշտամենտարիզմը որպես համակարգ բացառում էին: Այստեղ պաշտամենտարիզմի հիմքերը դրվեցին XX դարի վերջին տասնամյակում, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը և 15 միութենական հանրապետությունները ձեռք բերեցին անկախություն և դարձան միջազգային իրավունքի սուբյեկտներ: Այս երկրներում խորհրդարաններն իշխանության տարանջատման, հավասարակշռության և հակակշիռների սկզբունքով բազմակուսակցական համակարգի պայմաններում սկսեցին գործել որպես իրավական ինստիտուտներ, պետական իշխանության ներկայացուցչական նարմիններ՝ ստեղծելով ազգային օրենսդրություն: Անկախության, ազատության գաղափարներից ոգեշնչված ժողովուրդը, պետական անփորձ իշխանավորները բախվեցին չլուծված բազում հարցերի, դժվարությունների, ու հին սովորույթներով ապրելու, ինչու չէ, նաև հին օրենքներով առաջնորդվելու իներցիան ստեղծեց հակասական իրավիճակ: Պետական պաշտոնյաները, խորհրդարանականներն իրենց գործունեությունը կառուցում էին տեղական պայմաններին նորը հարմարեցնելու, միջազգային փորձն ուսումնասիրելու, պրակտիկայում տեղ գտած սխալներից և բացթողումներից դասեր քաղելու սկզբունքներից ելնելով: 1991 թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեց նախագահական ինստիտուտ, և երկրում, իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա, սկսեցին գործել նախագահը, խորհրդարանը, կառավարությունը և խորհրդային

օրենքներով գործող, դեռևս որևէ բարեփոխման չենթարկված, դատական մարմինները: Ժամանակի թելադրանքով աստիճանաբար դրվում էին անկախ հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հիմքերը:

Գաղտնիք չէ, որ պետական իշխանության ցանկացած մարմնի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչպիսին են պետական ապարատի՝ աշխատակազմի մասնագիտական կարողությունները, ինչպես են կարողանում այլ երկրների կուտակած փորձից օգտվել, ինչպիսին է տեղեկատվության ստացման և վերլուծության մակարդակը, տվյալ մարմինն ինչքանով է ապահովված ժամանակակից տեխնիկական սարքավորումներով և այլն:

Իրավաբանական գրականության, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրների օրենսդրության մեջ օգտագործվող «հանրային ծառայություն», «պետական ծառայություն», «հանրային ծառայողներ», «պետական ծառայողներ», «արհեստավարժ չինովնիկներ», «համայնքային ծառայողներ» հասկացությունները բնորոշում են պետական կամ համայնքային մարմիններում իրականացվող մասնագիտական գործունեությունը՝ ուղղված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների լուծմանը, գործառույթների կենսագործմանը, սահմանում են պետական կամ համայնքային ծառայության սկզբունքները, իրականացման կարգը, ծառայողների իրավական կարգավիճակը: Մարդու, ինչպես նաև հասարակության ու պետության նպատակային կանորագույն գործունեությունից մեկը ծառայությունն է: Այս հասկացությունն օգտագործվում է իմաստային տարբեր նշանակությամբ. որպես մարդու գործունեության ձև, որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, որպես պետական հատուկ մարմինների համակարգ, որպես հոգևոր գործունեություն և այլն: Ծառայությունը նաև ղեկավարում է և նպատակ ունի ապահովելու մարդկանց կառավարումը, սոցիալ-մշակութային սպասարկումը [1, էջ 97]: Պետական ծառայությունն իր մեջ ներառում է սոցիալական, քաղաքական, իրավական, կազմակերպական, բարոյական, ավանդույթային և այլ ասպեկտներ: Ըստ Ա.Պ. Ալյոխինի և Յու.Ս. Կոզլովի՝ պետական ծառայությունը նեղ իմաստով ներառում է միայն պետական մարմիններում ծառայությունը [2, էջ 135]: Ինչպես նշում է Վ. Մանոխինը, «պետական ծառայություն» հասկացությունը, դրա հիմնական հատկանիշները, խնդիրները և գործառույթները կարելի է պարզաբանել միայն փոխադարձ կապերի, պետական ծառայության խնդիրների և պետության գործունեության ձևերի փոխկապակցվածության բացահայտմամբ [3, էջ 5]:

1990-1995 թթ. ՀՀ Գերագույն խորհրդի, այնուհետև Ազգային ժողովի գործունեությունն ապահովվեց խորհրդարանի աշխատակազմի միջոցով: Պետականության, անկախության ջատագովների, իսկական արհեստավարժների մի խումբ նվիրեց իրեն այս անչափ կարևոր և բարդ գործին ու նաև նրանց օգնությամբ է, որ կայացավ օրենսդիր

մարմինը և պառլամենտարիզմը դարձավ գործող իրողություն: Ազգային ժողովը նպաստեց նաև պետական ծառայության զարգացմանն ու փորձի կուտակմանը:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետության քաղաքացիները մասնակցում են երկրի կառավարմանը: Երկրում ընթացող քաղաքական և տնտեսական բարեփոխումներին զուգահեռ մշակվեցին և ընդունվեցին օրենքներ, որոնք վերաբերում էին նաև կադրային քաղաքականությանը, կադրերի ընտրությանը, պաշտոնի նշանակմանը, վերապատրաստմանը, մասնագետների ատեստավորմանը, աշխատանքից ազատմանը, պետական ծառայության կազմակերպման ու ղեկավարման հարաբերությունների կարգավորմանը: Հասարակության առջև ծառայած խնդիրների լուծումը միտված է հանրային ծառայությանը: «Հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը», - սահմանված է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում [4, էջ 5]: «Հանրային ծառայությունը» սեռային հասկացություն է, իսկ «պետական ծառայությունը»՝ տեսակային, որը նշանակում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը նպատակաուղղված մասնագիտական գործունեություն: Իր հերթին պետական ծառայությունը դասակարգվում է բազմաթիվ ենթատեսակների. այն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետև՝ Աշխատակազմ) ծառայությունը, հատուկ ծառայություններ, այն է՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում իրականացվող ծառայությունները, դիվանագիտական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը և ՀՀ օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

Այսպիսով, Աշխատակազմում պետական ծառայությունը լայն առումով վերջինիս տեսակներից մեկն է: Պետական ծառայության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով: Պետական ծառայության, քաղաքացիական ծառայության, մաքսային, հարկային ծառայության, դիվանագիտական, ոստիկանական, ազգային անվտանգության ծառայության մասին և նմանատիպ այլ օրենքները կայունություն մտցրեցին պետական մարմինների աշխատակազմերի գործունեության մեջ, առավել անկախ գործելու հնարավորություն տվեցին դրանց (քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունները չեն կարող ազդել ծառայողների դասի

վրա), ինչպես նաև խթանեցին աշխատակիցների՝ ծառայողական սանդուղքով բարձրանալուն, աշխատանքային առաջընթացին:

Ազգային ժողովը, որպես պետական իշխանության օրենսդիր մարմին, պետք է որ կարգավորեր նաև իր Աշխատակազմի գործունեությունն առանձին օրենքով: Եվ, ահա, 2002 թ. դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովն ընդունեց «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքը (այսուհետև՝ Օրենք): Աշխատակազմը ՀՀ օրենսդրությամբ ստեղծված պետական կառավարչական հիմնարկ է, որը գործում է Օրենքով և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 23.10.2001 թ.), այլ օրենքներով և իրավական ակտերով: Օրենքին համապատասխան՝ իրավական, կազմակերպչական, տեղեկատվական, վերլուծական, ֆինանսական և այլ խնդիրներ լուծելու նպատակով աշխատակազմում ստեղծվում են կառուցվածքային ստորաբաժանումներ՝ քարտուղարություն, վարչություններ, բաժիններ, ծառայություններ:

Օրենքը սահմանեց, որ անկախ երկրում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից, անկախ ընտրությունների արդյունքներից Աշխատակազմում պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որի նպատակն է ապահովել Ազգային ժողովի լիազորությունների և գործունեության իրականացումը Սահմանադրության և ՀՀ օրենսդրության համապատասխան: Օրենքն անդրադառնում է Աշխատակազմում պետական ծառայողների պաշտոնների դասակարգման և դասային աստիճանների, պաշտոնների նշանակման, վերապատրաստման, ատեստավորման, իրավական կարգավիճակի, ինչպես նաև այստեղ պետական ծառայության կազմակերպման և ղեկավարման հարցերին: Այսպիսով, Ազգային ժողովի գործունեությունն ապահովելու, կայուն և արհեստավարժ չինովնիկների բանակ ունենալու համար իրավական հիմք ստեղծվեց: Խորհրդարանում քաղաքական ուժերի յուրաքանչյուր հարաբերակցություն, փոփոխություն չի կարող աշխատակիցների ազատման պատճառ դառնալ: Օրենքը սահմանում է նրանց նյութաֆինանսական, տեխնիկական, տեղեկատվությամբ ապահովման, ինչպես նաև տնտեսական, կենցաղային, կազմակերպչական և այլ իրավունքները, որոնք նպաստում են նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Պարզ է, որ Աշխատակազմի աշխատանքից է կախված ոչ միայն ներկայացուցչական մարմնի գործունեության մակարդակն ու որակը, այլ ինչ-որ տեղ նաև մշակվող պետական քաղաքականությունը:

Աշխատակազմը գործում է նաև Ազգային ժողովի նախագահի հաստատած Կանոնակարգով: Այն իր մեջ ներառում է Աշխատակազմի գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները, գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման կարգը, Աշխատակազմի կառուցվածքը, նրա ղեկավարի, ստորաբաժանումների գործառույթները, պետական ծառայողի գործունեության շրջանակները, նախատեսում է, թե ինչպես են ծառայողներն ապահովվում Ազգային ժողովի ու

պատգամավորների գործունեությունը և ինչպես են աջակցում նրանց: Յուրաքանչյուր ստորաբաժանում ունի Աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատված կանոնակարգ: Աշխատակազմի գործունեությունը վերահսկվում է Ազգային ժողովի նախագահի, նրա հանձնարարության մասնա փոխնախագահների կողմից: Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատակազմում պետական ծառայության հիմնական սկզբունքներն են.

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.

2) Աշխատակազմում պետական ծառայության կայունությունը.

3) Աշխատակազմում պետական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև պետական ծառայողների իրավահավասարությունը.

4) Աշխատակազմում պետական ծառայության հրապարակայնությունը.

5) Աշխատակազմում պետական ծառայողների քաղաքական գսպվածությունը.

6) Աշխատակազմում պետական ծառայողների արհեստավարժությունը.

7) Աշխատակազմում պետական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.

8) Աշխատակազմում պետական ծառայողների պատասխանատվությունն իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

9) Աշխատակազմում պետական ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը [4, էջ 7]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահը տնօրինում է Ազգային ժողովի նյութական և ֆինանսական միջոցները, գույքը: Այս դրույթը հիմք է տալիս, որպեսզի Ազգային ժողովի նախագահը հաստատի Աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքները, վարձատրության չափը և կարգավորի նյութատեխնիկական ապահովվածության հարցերը:

Ե՛վ Աշխատակազմի, և՛ ընդհանրապես Ազգային ժողովի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագիծը կազմում է Աշխատակազմը և նրա ղեկավարը: Ազգային ժողովում Կառավարության կողմից ներկայացված պետական բյուջեի բյուջետային քննարկումների ժամանակ այն զեկուցվում է ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի ու պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ միստում: Ազգային ժողովի բյուջեն, կազմելով պետական բյուջեի մի մասը, քննարկվում է Ազգային ժողովում և հաստատվում պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնները դասակարգվում են՝

1. պետական ծառայության բարձրագույն պաշտոններ,
2. պետական ծառայության գլխավոր պաշտոններ,
3. պետական ծառայության առաջատար պաշտոններ,
4. պետական ծառայության կրտսեր պաշտոններ [4, էջ 7]:

Պետական ծառայության անցած աշխատողներին ըստ զբաղեցրած պաշտոնների և օրենսդրությամբ սահմանված կարգով շնորհվում են պետական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի պետական խորհրդականի, 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններ և պետական ծառայողի 1-ին, 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճաններ (Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետեր): Նույն կերպ սահմանվում են կրտսեր պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողների դասային աստիճանները:

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, ըստ որի պետական ծառայողն այն անձն է, ով կարող է անմիջականորեն մշտական կամ ժամանակավոր ձևով իրականացնել մասնագիտական գործունեություն պետական ապարատում, ունենալ պարտականություններ (պետական ֆունկցիաներ): Պետական ծառայողն անձ է, ով զբաղեցնում է հիմնական կամ ժամանակավոր պաշտոն պետական ապարատում և ստանում է վարձատրություն իր աշխատանքի դիմաց [5, էջ 90]: Անձը, Աշխատակազմում զբաղեցնելով պաշտոն, կատարում է որոշակի աշխատանք և այդպիսով գործառույթներ իրականացնում [5, էջ 198-217]:

Պետական յուրաքանչյուր ծառայող ունի իր պաշտոնի անձնագիրը, որը պետք է հանձնվի տվյալ պաշտոնի համար Օրենքով պահանջվող չափանիշներին, ներառյալ՝ ստաժը, փորձը պետական ծառայության ավելի ցածր պաշտոններում, քաղաքացիական ծառայության, քաղաքական կամ հայեցողական պաշտոններում: Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձանց համար սահմանվում են նաև հետևյալ չափանիշները. նրանք պետք է համապատասխանեն պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին և լինեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներ: Այստեղ, անշուշտ, էական չէ սեռը, դավանանքը, ազգությունը, քաղաքական կամ այլ հայացքները, սոցիալական ծագումը: Օրենքն ամրագրում է, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, դատական կարգով պետական ծառայության պաշտոնից զրկված կամ հոգեկան այնպիսի հիվանդությամբ տառապող անձը, որը չի կարող պետական ծառայություն կատարել, սահմանված կարգով չհանված կամ չմարած դատվածություն ունեցող, զինվորական ծառայությունից խուսափած անձինք իրավունք չունեն լինելու պետական ծառայողներ և զբաղեցնել որևէ պաշտոն այդ համակարգում:

Աշխատակազմի մեծամասնությունը, բացառությամբ խմբակցությունների և պատգամավորական խմբերի աշխատակիցների, աշխա-

տանքի են նշանակվում մրցութային սկզբունքով: Հասարակության բոլոր շերտերը, խավերը հանդիսանում են պետական ծառայության սոցիալական բազան: Պետության կադրային քաղաքականությունը չի կարող հիմնվել առանձին դասի կամ սոցիալական խավի վրա: Դա նշանակում է, որ պետության և հասարակության գործերի կառավարմանը քաղաքացիների ներգրավումը համարվում է կադրային քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Պետությունն իրական հնարավորություն է ստեղծում, որ բոլոր քաղաքացիները մասնակցեն երկրի կառավարմանը: Մրցույթը լինում է փակ կամ բաց: Փակ մրցույթ է անցկացվում այն նպատակով, որպեսզի նրանց համար ծառայողական սանդուղքով վեր բարձրանալու պայմաններ ստեղծվեն, ինչը խրախուսման և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության բարձրացման կարևորագույն հնարավորություն է տալիս: Փակ մրցույթը չկայանալու դեպքում Աշխատակազմի ղեկավարը զանգվածային լրատվության միջոցներում հայտարարություն է տալիս բաց մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ: Յուրաքանչյուր մրցույթի և ատեստավորման համար համակարգչում զետեղված ու պատահական ընտրված թեկնածուներից 24 ժամ առաջ կազմում են հանձնաժողովները: Մրցույթը հիմնականում անցկացվում է թեստավորման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հարցազրույցի միջոցով: Թեստավորումը կատարվում է գրավոր, իր մեջ ներառում է Սահմանադրության, պետական ծառայության առանձին տեսակների մասին ՀՀ օրենսդրության, Աշխատակազմի գործառույթներին, ՀՀ օրենսդրության այլ ոլորտներին վերաբերող հարցեր, որոնք տեղադրվում են համակարգչում: Մրցույթի համար նախատեսված հարցաշարը ևս մեկ ամիս առաջ պետք է հրապարակվի: Հաղթող կամ հաղթողներ են ճանաչվում հարցերի 90%-ին և ավելիին ճիշտ պատասխանած անձինք: Մեկից ավելի հաղթողի դեպքում նշանակումը կատարվում է Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պայմաններին համապատասխան, այսինքն՝ նա, ով ունի.

1. պետական ծառայության առավել բարձր դասային աստիճան,
2. Աշխատակազմում պետական ծառայության առավել երկար ստաժ,
3. քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ,
4. առավել բարձր գիտական աստիճան և գիտական կոչում:

Իսկ եթե թվարկված պայմանները հավասար են, ապա կազմակերպվում է հարցազրույց, որի ընթացքում ստուգվում է տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված լիազորությունների վերաբերյալ նրանց իմացությունը, մասնագիտական ունակությունները և կարողությունները: Հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անցկացվում է գաղտնի քվեարկություն: Մրցույթի արդյունքում հաղթող չլինելու դեպքում անցկացվում է կրկնակի մրցույթ: Կրկնակի մրցույթ է անցկացվում նաև այն դեպքում, երբ որևէ դիմում տվյալ մրցույթի հայտա-

րարման ընթացքում չի ներկայացվել: Չնարավոր է, որ մրցույթն անվավեր ճանաչվի դատական կարգով:

Վերլուծելով աշխատանքի նշանակվելու վերը նկարագրված կարգը՝ պետք է արձանագրել, որ թեստավորման վրա մեծ ուշադրություն դարձնելով՝ փորձ է արվել բացառել սուբյեկտիվ գործոնը: Սակայն պրակտիկական ցույց է տալիս, որ քաղաքացին կարող է ունենալ լավ հիշողություն, սովորել հարցաշարն ամբողջությամբ և հաղթել մրցույթում: Սակայն նրա աշխատանքն Աշխատակազմում կարող է չստացվել, քանի որ, դիցուք, նա լավ չի տիրապետում հայերենին, չի կարողանում կատարել վերլուծական լուրջ աշխատանք, ծանոթ չէ օրենսդրությանը, նրա փորձագիտական ուսումնասիրությունները, կարծիքները չեն ծառայում իրենց նպատակին, նա կարող է անտեղյակ լինել Ազգային ժողովի մարմինների գործունեությանը, լիազորություններին և այլն: Գտնում ենք, որ թեստավորումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Կարծում ենք, տվյալ ստորաբաժանման ղեկավարն անձամբ պետք է գրուցի թեկնածուների հետ և տա գրավոր կարծիք: Բացի թեստից, անհրաժեշտ է, որ թեկնածուն կատարի որևէ օրենքի փորձաքննություն, վերլուծություն և գրավոր տեսակետ ներկայացնի տրված մյուսի մասին: Իհարկե, խոսքը վերաբերում է այն մասնագետների ընտրությանը, որոնց զբաղեցրած պաշտոնի անձնագրում նախատեսված են ստեղծագործական, վերլուծական և ոչ թե միայն կազմակերպչական աշխատանքներ:

Պետական ծառայության անցնելիս՝ թեկնածուն պետք է տիրապետի իրավաբանական, տնտեսագիտական, քաղաքագիտական գիտելիքների: Պետական ծառայողը պետք է լինի արհեստավարժ, կարողանա իր գործառույթները պատշաճ իրականացնել՝ իր լիազորությունների շրջանակներում:

Պետական ծառայության մասին օրենսդրության մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պետական ծառայությունը՝ ներկայացուցչական, գործադիր և դատական իշխանության մարմիններում՝ ծառայողի արհեստավարժ գործառույթն է [6, էջ 137]:

Թեպետ պրակտիկայում դեռևս մեծ նշանակություն չի տրվում պետական պաշտոնյայի երդմանն ու այդ արարողության հանդիսավոր կազմակերպմանը, սակայն Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատակազմում պետական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնը ստանձնում է հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ հավատարիմ ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, արժանապատվորեն կրել պետական ծառայողի բարձր կո-

չունը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականություններս» [7, էջ 13]:

Վերապատրաստման, ատեստավորման, ինչպես նաև ծառայության ընթացքում հարկ է պաշտոնյային հիշեցնել, որ նա երդվել է ծառայել ժողովրդին, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականությունները: Քիչ չեն դեպքերը, որ պետական պաշտոնյան ոչ թե պահպանում, այլ ոտնահարում է մարդու իրավունքներն ու ազատությունները և գրեթե միշտ պատասխանատվության չի ենթարկվում նման արարքների համար: Երդման ստորագրված տեքստը ոչ թե պետք է միայն կցել անձնական գործին, այլ հարկ է նաև փակցնել աշխատասենյակում, որպեսզի նա ամեն օր հիշի իր տված երդումը:

Պետական ծառայության ողջ ժամանակաշրջանը համարվում է ստաժ և հաշվարկվում պետական ծառայողի ընդհանուր ու մասնագիտական աշխատանքային ստաժում: Ստաժի մեջ մտնում են նաև պետական գործուղումների, վերապատրաստման ժամանակաշրջանը, որը կարող է տևել մինչև մեկ տարի: Մեկից-երեք տարի ժամկետով գործուղումը թույլատրվում է Ազգային ժողովի նախագահի կողմից:

Էական է պետական ծառայողների ատեստավորման ինստիտուտը: Ատեստավորման անցկացման կանոնների և կարգի մշակումը սերտորեն կապված է ծառայողի առաջխաղացման ընթացակարգի հետ: Այդ պատճառով պետական ծառայողի ատեստավորման ինստիտուտը ստանում է համապատասխան իմաստ և նշանակություն միայն այն դեպքում, երբ որոշվում է նրա տեղը պետական ծառայության համակարգում, իսկ ավելի ճիշտ՝ նրա դերը ծառայության ընթացքում [8, էջ 101-102]: Ի տարբերություն խորհրդային ժամանակների՝ ատեստավորման կարգն ուղղակի սահմանվում է Օրենքով և ոչ թե՝ կանոնադրությամբ: Ազգային ժողովում հերթական ատեստավորումներն անցկացվում են 3 տարին մեկ անգամ, իսկ արտահերթ ատեստավորումը՝ նախորդից մեկ տարի անց: Այն կարող է իրականացվել ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի գրավոր պատճառաբանված որոշմամբ կամ պետական ծառայողի ցանկությամբ: Օրենքը (18-րդ հոդված) սահմանում է այն դեպքերը, երբ ատեստավորման ենթակա չեն տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող, հղի և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող ծառայողները: Ատեստավորումից առաջ անմիջական ղեկավարը ծառայողին տալիս է ծառայողական բնութագիր, որը կազմվում է յուրաքանչյուր կիսամյակը մեկ պաշտոնյայի տված հաշվետվությունների եզրակացությունների հիման վրա: Ծառայողն ատեստավորումից մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր բնութագրին: Անմիջական ղեկավարի կողմից ծառայողական բնութագիր չներկայացնելը դեռևս հիմք չէ ատեստավորման անցկացման համար:

Ատեստավորումը կազմակերպվում է փաստաթղթային, թեստավորման և հարցազրույցի կարգով: Դասային աստիճան ունեցողները ենթակա են փաստաթղթային ատեստավորման՝ հարցազրույցի միջոցով: Եթե հարցազրույցի արդյունքները բավարար չլինեն, ապա հանձնաժողովը կարող է առաջարկել թեստային ատեստավորման տարբերակը: Ատեստավորումն անցկացնում է ատեստավորման հանձնաժողովը՝ կոլեգիալ կարգով, կրում է պարբերական բնույթ, հիմնավորված է և եզրակացությունները բխում են իրական վիճակից: Ծառայողը կարող է բողոքարկել ատեստավորման արդյունքները: Աշխատակազմում պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (բարձր պաշտոններում՝ Ազգային ժողովի նախագահը, մնացած դեպքերում Աշխատակազմի ղեկավարը) եռօրյա ժամկետում Օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) Աշխատակազմում պետական ծառայողին պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճան շնորհելու կամ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասու մարմնին համապատասխան,

2) Աշխատակազմում պետական ծառայողի վերապատրաստում անցնելու մասին,

3) Աշխատակազմում պետական ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին: Նման որոշում կայացվում է նաև, եթե Աշխատակազմում պետական ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական [7, էջ 16]:

Խորհրդային տարիներին կադրերի պատրաստումը և վերապատրաստումը համակարգված բնույթ էր կրում, լուրջ ուշադրություն էր դարձվում նրանց աճին ու քաղաքական հասունացմանը: Անկախության առաջին տարիներին ամեն ինչ փոխելու, նորացնելու, նոր համակարգեր ներդնելու գործընթացում կարծես աչքաթող արվեց կադրերի պատրաստումը: Միայն 1994 թ. սկսեց գործել կադրերի պատրաստման դպրոցը՝ կառավարման դպրոցը, որը 2002 թ. վերակազմակերպվեց ՀՀ պետական կառավարման ակադեմիայի: Վերջինիս գլխավոր գործառույթներից է պատրաստել և վերապատրաստել քաղաքացիական ծառայողներին, պետական այլ ծառայողներին: Մի կողմից այն ապահովում է հետբուհական կրթություն, մյուս կողմից՝ վերապատրաստում պետական, քաղաքացիական ծառայողներին, իրականացնում լրացուցիչ կրթական ծրագրեր: Ատեստավորման նպատակն է գնահատել մարդու գործնական, բարոյական, անձնական հատկանիշները, որոշել պետական ծառայողի.

1. համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին,
2. պրոֆեսիոնալ պատրաստվածության աստիճանը,
3. առաջարկ ներկայացնել դասային աստիճան շնորհելու կամ փոխելու մասին,
4. երաշխավորել առաջխաղացման համար,
5. երաշխավորել խրախուսման ներկայացնելու համար,

6. ծառայողի ուշադրությունը հրավիրել իր պրոֆեսիոնալ հատկանիշների բարձրացման խնդրին, ինչպես նաև նպաստել աշխատանքին առավել պատասխանատու վերաբերվելուն:

Օրենքը նախատեսում է նաև սահմանափակումներ պետական ծառայողի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Այս նորմը ներառված է Օրենքում և գործում է պետական ծառայողի համար ևս: Արգելվում է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ նա գտնվում է ծառայության մեջ կամ որն անմիջականորեն վերահսկելի է իր կողմից, ցուցաբերել քաղաքական զսպվածություն, կամ քաղաքական, կրոնական քարոզչություն և գործունեություն ծավալել: Եթե ծառայողն առևտրային կազմակերպություններում ունի 10%-ից ավելի կապիտալ, ապա պարտավոր է այն մեկ ամսվա ընթացքում հանձնել հավատարմագրային կառավարման: Օրենքը սահմանափակում է ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից նվերներ, գումարներ կամ ծառայություններ ստանալը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Օրենքը նաև նախատեսում է պետական ծառայողի սոցիալական երաշխիքներ, աշխատանքային նորմալ պայմաններ, ժամանակին և համարժեք վարձատրություն, ամենամյա վճարովի արձակուրդ, ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդանության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում, ինչպես նաև ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բնականաբար, աշխատանքի ընթացքում առանձնանում են իրենց գործին նվիրված, գրագետ, պատասխանատու մարդիկ, որոնց անհրաժեշտ է տարբերել մյուսներից, խրախուսել, որպեսզի նրանք լավ օրինակ դառնան մյուսների համար: Խրախուսանքի ձևերն են՝ շնորհակալության հայտնումը, միանվագ դրամական պարգևատրումը, հուշանվերով պարգևատրումը, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրումը, կարգապահական տույժի հանումը: Իսկ պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու, աշխատանքային ներքին կանոնները խախտելու դեպքում պետական ծառայողի նկատմամբ կիրառվում են տույժեր՝ նախազուլաացում, նկատողություն, խիստ նկատողություն: Մինչև տույժի նշանակումը՝ բացատրություն է պահանջվում տվյալ ծառայողից, և տույժը նշանակելուց հետո եռօրյա ժամկետում տեղյակ է պահվում նրան: Եթե մեկ տարվա ընթացքում ծառայողը տույժի չի ենթարկվում, ապա այն համարվում է հանված:

Օրենքը նախատեսում է նաև պետական ծառայողին աշխատանքից ազատելու դեպքերը: Ծառայողն աշխատանքից ազատվելու հրամանը կարող է բողոքարկել դատական կարգով:

Աշխատակազմում պետական ծառայողի առավելագույն տարիքը 65-ն է: Պայմանագիրը կարող է մեկ տարով, պայմանագրային կարգով երկարացվել՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ:

Աշխատակազմում օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են պետական ծառայության մասին օրենսդրությամբ, ինչպես նաև դատական կարգով:

Պատգամավորական խմբակցությունների աշխատակազմերը ձևավորվում են ընտրություններից անմիջապես հետո, իսկ խմբերինը՝ համապատասխան խմբի կազմավորման մասին Ազգային ժողովում հայտարարելուց հետո:

Խմբակցությունների, խմբերի, հանձնաժողովների աշխատանքների մեծապես օգնում են դրանցում ընդգրկված մասնագետները, փորձագետները, գործավարները: Նրանք զբաղվում են համապատասխան կառույցի գործավարության, փաստաթղթերի, իրավական խորհրդատվական ապահովման, փորձագիտական եզրակացությունների պատրաստման, տեխնիկական, կազմակերպչական և այլ հարցերով: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի (այսուհետև՝ կանոնակարգ) 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «խմբակցության և պատգամավորական խմբի գործավարը և փորձագետներն աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ համապատասխան խմբակցության, պատգամավորական խմբի ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, ինչպես նաև նրա հանձնարարությամբ քննարկում են խմբակցության, պատգամավորական խմբի անդամների աշխատանքին: Մինչև 10 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար և մեկ փորձագետ, 11-ից 14 անդամ ունեցող խմբակցությունը, պատգամավորական խումբն ունենում են մեկ գործավար և երկու փորձագետ, իսկ 14-ից ավելի անդամ ունեցողները՝ մեկ գործավար և 3 փորձագետ» [9, էջ 15]: Խմբի գործունեության դադարեցման դեպքում՝ օրենսդրության համաձայն, խմբի աշխատակազմն ազատվում է աշխատանքից:

Օրենքի համաձայն՝ Ազգային ժողովի 6 մշտական հանձնաժողովների աշխատակազմերի աշխատակիցները պետական ծառայողներ են և բացի կառույցի ղեկավարին ենթարկվելուց՝ ենթակա են նաև Աշխատակազմի ղեկավարին:

Դեռևս պրակտիկա չի դարձել առանձին փորձագետների, մասնագետների ժամանակավորապես աշխատանքի ընդունումն ինչպես Աշխատակազմում, այնպես էլ պատգամավորական միավորումների, հանձնաժողովների աշխատակազմերում: Խնդիրն այն է, որ հաճախ որևէ ոլորտի մասին օրենք մշակելիս կամ առաջարկված նախագծի վրա աշխատելիս տվյալ բնագավառին քաջատեղյակ մասնագետներ

իրավիքները և լուրջ փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտություն է զգացվում: Այս տեսակետից պետք է հանձնաժողովի նախագահին տալ ժամանակավորապես փորձագետներ հրավիրելու հնարավորություն: Այսինքն՝ Աշխատակազմի ղեկավարը համապատասխան կառույցի առաջարկությամբ պետք է ընդունի ժամանակավոր փորձագետներ, և այս մոտեցումը կարող է պաշլամենտարիզմի զարգացման կարևոր գործոն հանդիսանալ:

Պակաս կարևոր չէ պետական ծառայողի նյութական ապահովվածության խնդիրը: Թեև այսօր Արևմուտքում բանավիճում են, թե անհրաժեշտ է արդյոք չինովնիկներին տալ արտոնություններ, վե՛լացնել նրանց թիվը, թե՛ ոչ, այնուամենայնիվ, կան հարցեր, որ մեզանում հրատապ լուծում են պահանջում: Մասնավորապես, ծառայողների աշխատավարձի բարձրացման հարցն օր առաջ պետք է լուծել: Այսօրվա աշխատավարձի գումարը կարող է ծառայել միայն աշխատակցի նվազագույն կարիքները հոգալու և չի բավարարում նրա ընտանիքի անդամների սոցիալ-կենցաղային խնդիրների լուծման համար: Իսկ եթե ծառայողն իր ընտանիքի միակ կերակրողն է, ապա նրանից նվիրված և հետևողական աշխատանք նման վարձատրությամբ՝ չի կարելի ակնկալել: Լուծված չէ նաև ծառայողի և նրա ընտանիքի անդամների բժշկական ապահովագրության հարցը: Այս առումով ուսանելի է Գերմանիայում ներդրված միասնական համակարգը պետական ծառայողների համար, որտեղ սահմանված են նույն դասային աստիճանները՝ ռանգերը, նույն մակարդակի համար, նույն կանոնները ծառայության անցնելու համար, ամրագրված են նույն պարտականությունները, երաշխիքները, սահմանափակումները, կենսաթոշակային ապահովությունը, աշխատավարձը և նույնիսկ բժշկական ապահովագրությունը:

Աշխատակազմը մշտական գործող մարմին է, որն ունի պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակ: Աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունի: Իր իրավասության սահմաններում այն կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կատարել իր պարտականությունները, որպես հայցվոր կամ պատասխանող հանդես գալ դատարանում: Հիմնարկի անվանումն է՝ «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ»: Աշխատակազմը չի կարող իրականացնել գերատեսչական գործունեություն:

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Աշխատակազմն իր կարիքների համար գնումներ կատարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով: Այն իրականացնում է իրավական, կազմակերպական, փաստաթղթային, ֆինանսական, նյութատեխնիկական, վերլուծական-տեղեկատվական գործունեություն, ապահովում է Ազգային ժողովի նիստերի կազմակերպումը, արձանագրումը, սղագրումը և արձանագրությունների կազմումը, աջակցում է պատգամավորներին՝ իրենց գործառույթներն իրականացնելիս: Աշխատակազմում չեն կա-

րող գործել կուսակցական, կրոնական, հասարակական կազմակերպություններ: Աշխատակազմն իր գործունեության ընթացքում համագործակցում է Հանրապետության Նախագահի, Կառավարության, պետական այլ մարմինների աշխատակազմերի հետ:

Աշխատակազմը ղեկավարում է Ազգային ժողովի նախագահի կողմից նշանակված Աշխատակազմի ղեկավարը, ով Օրենքով սահմանված կարգով հաղթել է մրցույթում: Աշխատակազմի ղեկավարն ունի տեղակալ: Աշխատակազմի ղեկավարն Օրենքով սահմանված կարգով ղեկավարում է կառույցի ընթացիկ գործունեությունը և պատասխանատվություն է կրում օրենքների, հիմնադրի, պետական մարմինների որոշումների, Աշխատակազմի կանոնադրության պահանջների չկատարման դեպքում: Աշխատակազմի ղեկավարն իր լիազորությունների շրջանակներում նշանակում և ազատում է Աշխատակազմի աշխատողներին՝ կիրառելով համապատասխան խորհուրդի միջոցներ և կարգապահական տույժեր: Օրենքի պահանջներից ելնելով՝ սահմանում է կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, մրցույթի արդյունքներից ելնելով՝ նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին: Նրա կողմից տրված հրամանները, ցուցումները պարտադիր են կատարման Աշխատակազմի պաշտոնյաների և աշխատակիցների համար:

Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ քարտուղարությունը, յոթ վարչությունները, գործերի կառավարչությունը, առաջին բաժինը: Պատգամավորական խումբ-խմբակցությունների, մշտական հանձնաժողովների աշխատակազմերը ևս համարվում են Աշխատակազմի մաս: Քարտուղարությունը և գործերի կառավարչությունը, ինչպես նաև որոշ վարչություններ, ունեն իրենց բաժինները, ծառայությունները, ստորաբաժանումները:

Աշխատակազմի ամենակարևոր ստորաբաժանումներից է քարտուղարությունը, որը հիմնականում կազմակերպում է Ազգային ժողովի նիստերի անցկացման տեխնիկական ողջ ապահովումը. նախօրոք հանձնաժողովներից հավաքում է Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում առաջարկվող հարցերը, կազմում օրակարգի նախագիծը և ներկայացնում Ազգային ժողովի նախագահի կողմից ԱԺ նիստերին նախորդող ուրբաթ օրվա խորհրդակցության ժամանակ: Քարտուղարությունն Ազգային ժողովի նախագահին ապահովում է համապատասխան փաստաթղթերով, տեղեկատվությամբ, մշակում է փոստը, կազմակերպում քաղաքացիների ընդունելություն, նամակներին ընթացք է տալիս: Քարտուղարության կարևորագույն մասն է կազմում համակարգչային ցանցի սպասարկումը: Ազգային ժողովի գործունեության մասին պատմող վերլուծական-տեղեկատվական թողարկում է 2003 թ. լույս տեսնող «Ազգային ժողով» ամսագիրը:

Տեղեկատվությանը մեծապես նպաստում է Ազգային ժողովի ինտերնետային կայքը, որտեղ տեղադրվում է Ազգային ժողովի մասին ամբողջ տեղեկատվությունը: Առանձին մաս է հատկացված Աշխատա-

կազմի վարչություններին, քարտուղարությանը: Բոլոր օրենքների նախագծերը դրվում են համացանցում: Էլեկտրոնային կայքի էջերում լուսաբանվում են հանդիպումները, միջոցառումները, խորհրդարանական լսումները, հանձնաժողովների նիստերը:

Քարտուղարությունը ստեղծում է բոլոր պայմանները՝ Սահմանադրության և Կանոնակարգի պահանջներին համապատասխան Ազգային ժողովի նիստերն անցկացնելու համար, իրականացնում է նիստերի սղագրությունը, համապատասխան արձանագրությունների կազմումը, համագործակցում է Հանրապետության Նախագահի և Կառավարության աշխատակազմերի համապատասխան կառույցների հետ:

Ընդհանուր բաժնի հիմնական խնդիրն է իրականացնել միասնական գործավարություն, գրանցել փաստաթղթերը, ապահովել դրանց մուտքն ու ելքը: Ազգային ժողով մուտք գործած և Ազգային ժողովից առաքված գրությունների, նամակների, դիմումների թիվը գնալով ավելանում է, ինչը ցույց է տալիս Ազգային ժողովի դերի, հեղինակության բարձրացման, բնակչության կողմից իր ընտրողների առջև հարցերի բարձրացման ավելացման և ընդունվող օրենքների ու որոշումների թվի ավելացման մասին: Այսպես, եթե 2000-ին Ազգային ժողովում մուտքագրվել է 6732 գրություն, ապա 2004-ին՝ 8014, իսկ 2005-ի 1-ին կիսամյակում՝ 6528: Նորմատիվ ակտերի թիվը նկատելիորեն ավելացել է, եթե 2004-ին 3528-ն է եղել, ապա միայն 2005-ի 1-ին կիսամյակում դրանց թիվը շուրջ 1000-ով ավելացել է: Եթե համեմատելու լինենք 2004-2005 թվականների 1-ին կիսամյակների ընթացքում Ազգային ժողովում եղած փաստաթղթերի վիճակագրությունը, ապա այն համապատասխանաբար եղել է 20773 և 24299-ը: Գրությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ բավականին ծանրաբեռնված են աշխատում մշտական հանձնաժողովները, խմբակցությունները: Արձանագրային բաժնի խնդիրն է վերծանել, կազմել Ազգային ժողովի նիստերի արձանագրությունները, արխիվավորել, ինչպես նաև օրենքները լեզվաճական խմբագրման ենթարկել: Արձանագրային բաժնում կատարվում է նաև օրենքների ռուսերեն թարգմանությունը, որը, ցավոք, չի հրատարակվում: ԳԽ-ի ժամանակ (1990-1995 թթ.)՝ առանձին հրատարակությամբ տպագրվում էր:

Աշխատակազմի կառուցվածքային կարևոր ստորաբաժանումն է օրենսդրության վերլուծության և զարգացման վարչությունը, որն ունի յոթ բաժին: Վարչության հիմնական գործառույթն այն է, որ իրավական փորձաքննության է ենթարկում յուրաքանչյուր օրենքի և Ազգային ժողովի որոշման նախագիծ, իրավաբանական խորհրդատվություն տալիս Ազգային ժողովի նախագահին, նրա տեղակալներին, Աշխատակազմի ղեկավարին՝ նրանց կարգադրությունների և հրամանների՝ օրենքներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև աջակցում է պատգամավորներին, հանձնաժողովներին: Ստորաբաժանման գործառույթների մեջ է մտնում օրենքների և Ազգային ժողովի որո-

շունների նախագծերում հակասությունների հայտնաբերման ու վերացման, օրենքների և որոշումների իրավաբանական տեխնիկայի կանոնների պահպանման համար միջոցների ձեռնարկումը: Եզրակացություն է ներկայացնում օրենքների՝ Սահմանադրությանը և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի համապատասխանության մասին: «...Վարչության հիմնական գործառույթն օրենքների և Աժ որոշումների նախագծերի մասնագիտական փորձաքննության իրականացումն է և այդ առումով միայն 2004 թվականի ընթացքում վարչության կողմից ավելի քան 182 փորձաքննական եզրակացություններ են տրվել ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ, որոնցում արված դիտողություններն ու առաջարկությունները հիմնականում հաշվի են առնվել մշտական հանձնաժողովների կողմից օրենքների նախագծերը քննարկելիս և ընդունելիս: Այս տարվա ընթացքում վարչության կողմից մինչ օրս փորձաքննության է ենթարկվել 90 նախագիծ» [10, էջ 37]:

Հաջորդ ստորաբաժանումն արտաքին հարաբերությունների վարչությունն է, որը նախապատրաստում է Ազգային ժողովի միջազգային գործունեության ամենամյա ծրագիրը: Ազգային ժողովն անդամակցում է մի շարք խորհրդարանների, միջազգային կառույցների, այդ թվում՝ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովին, Միջխորհրդարանական միությանը, Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովին, Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովին և այլն: Վարչությունը խորհրդատվական և կազմակերպական լուրջ աշխատանքներ է տանում միջազգային խորհրդարանական կազմակերպություններում Ազգային ժողովի պատվիրակությունների արդյունավետ գործունեությունն ապահովելու համար, նպաստում է խորհրդարանական դիվանագիտության զարգացմանը, նախապատրաստում տեղեկատվական և վերլուծական բնույթի անհրաժեշտ նյութեր: Վարչության գործառույթների մեջ է մտնում նաև միջխորհրդարանական բարեկամության խմբերին ու միջխորհրդարանական հանձնաժողովներին (Ռուսաստանի, Վրաստանի, ԼՂՀ-ի) աջակցությունը: Կան առանձնացված բաժիններ՝ Եվրախորհրդան, Ամերիկայի, ԱՊՀ երկրների, Արևելյան, Ասիայի և Աֆրիկայի պետությունների հետ հարաբերություններին առնչվող:

Տեղեկատվական, վերլուծական աշխատանքն էական է Ազգային ժողովի աշխատանքները կազմակերպելու համար: Այս առումով առանձնանում է տեղեկատվական վարչությունը, որի կազմի մեջ մտնում են գրադարանային, արխիվային, հետազոտությունների և տեղեկատվության ծառայությունները: Վարչությունը Ազգային ժողովի նախագահին և տեղակալներին, պատգամավորներին, հանձնաժողովներին ապահովում է համապատասխան տեղեկատվությամբ, վերլուծական նյութերով, ամփոփում է տեղական, հանրապետական և միջազգային փորձը, կատարում օրենսդրության համեմատական վերլուծություն-

ներ, ուսումնասիրում այլ երկրների խորհրդարանների փորձը: «Վարչության հիմնական խնդիրն է կատարել տեղեկատվական պահանջարկի ուսումնասիրություն, որոնք, համակարգել և Ազգային ժողովի մարմիններին ու աշխատակազմին տրամադրել օրենսդրական գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ տեղեկատվություն, հետազոտական-վերլուծական նյութեր, փաստաթղթեր, նաև սեփական նախաձեռնությամբ պատրաստել փաթեթներ՝ արդիական հնչեղություն ունեցող թեմաներով» [10, էջ 27]: Վարչության նպատակն է ժամանակին մատուցել օբյեկտիվ, հիմնավորված տեղեկատվություն, որը հիմնված կլինի այլ երկրների խորհրդարանների փորձի վերլուծության համեմատության վրա: Վարչությունը կազմակերպում է «Ազգային ժողովի տարեգրություն» էլեկտրոնային էջը:

Տեղեկատվական-իրավական կարևոր կենտրոն է գրադարանը: Շատ երկրներում խորհրդարանների գրադարանները և՛ իրենց հազեցվածությամբ և՛ իրենց նշանակությամբ առաջնային տեղ են զբաղեցնում երկրի քաղաքական, մշակութային կյանքում: Այսպես, ԱՄՆ-ում Կոնգրեսի գրադարանում կուտակված է աշխարհում տպագրվող գրեթե բոլոր հրատարակությունները, տեսալսողական ժողովածուները: Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի գրադարանը կարևոր դեր ունի օրենսդրական աշխատանքներում: Այստեղ ոչ միայն տեղեկություն է կուտակվում, այլև գիտական վերլուծություններ են կատարվում, կոնֆերանսներ կազմակերպվում որոշակի բնագավառի և նույնիսկ մեկ օրենքի կամ օրենքի նախագծի վերաբերյալ: Անդրադառնում են օրինաստեղծման պատմությանը, այդ թեմայով հիմնախնդրի վերաբերյալ չհաջողված նախագծերին, այդ նախագծի և եվրոպական իրավունքի համապատասխանությանը, արձանագրում դրա կապն այլ օրենքների հետ: Անդրադարձ է կատարվում նաև, թե նախագիծն ինչքանով է շոշափում մարդու իրավունքները և քննարկվում են այլ հարցեր: Վերը նշված աշխատառձը, վերլուծականների պատրաստումը, իրոք, կարող են օգտակար լինել նաև ՀՀ Ազգային ժողովում, նպաստել օրենսդիրների գործունեությանը:

Որպես կարևորագույն տեղեկատվական կենտրոն գրադարանում արմատավորվում է թվային գրադարանային մոդելը, որի շնորհիվ այն դառնում է առանց սահմանների տեղեկատվության մի մասը: ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություններ՝ անկախ պետության սահմաններից: «Սա նշանակում է, որ յուրաքանչյուրը՝ անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, քաղաքացիությունից, կարող է բոլոր աղբյուրներից տեղեկություններ պահանջել, ստանալ և տարածել ցանկացած միջոցով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տեղեկություն ստանալու իրավունքը յուրաքանչյուրի՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ, ֆիզիկական անձանց իրավունքն է՝ անկախ նրանից, թե անձը տվյալ պետության քաղաքացի է, օտարերկրացի, թե՛

քաղաքացիություն չունեցող անձ: Հասարակական, քաղաքական և առևտրային կազմակերպությունները նույնպես ունեն տեղեկատվություն ստանալու իրավունք» [11, էջ 26]: Առավել ևս, դեռևս քաղաքական կայուն համակարգ չունեցող երկրում, երբ հասարակության մեջ չափից ավելի շերտեր, խմբավորումներ են փորձում զբաղվել քաղաքականությամբ, նրանց հետաքրքրությունների և քննադատության կիզակետում է գտնվում հենց խորհրդարանը: Այդ տեսակետից էլեկտրոնային էջում տեղադրված ողջ տեղեկատվությունն անհրաժեշտ է հասարակության հետաքրքրությունը բավարարելու համար:

Աշխատակազմում էական աշխատանքներ է ծավալում **հասարակայնության հետ կապերի վարչությունը**, որն Ազգային ժողովի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունն օպերատիվ տարածում է լրատվամիջոցներով, խորհրդարանում ապահովում է զանգվածային տեղեկատվության միջոցների ներկայացուցիչների աշխատանքը, կազմակերպում է մամուլի ասուլիսներ, ճեպագրույցներ, պատրաստում տեղեկատվական վերլուծական նյութեր:

Կանոնակարգի 111-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Ազգային ժողովի խմբակցությունների և պատգամավորական խմբերի խորհրդարանական գործունեության լուսաբանումն իրականացնում է Աշխատակազմը «խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի միջոցով:

Յուրաքանչյուր շաբաթ հավաքական ձևով բնակչությունը ծանոթանում է Ազգային ժողովում կատարված կարևորագույն իրադարձություններին, ընդունված օրենքներին, ինչպես նաև լսում տարբեր քաղաքական ուժերի վերլուծություններն ու գնահատականները երկրի ներքին և արտաքին իրավիճակի մասին:

Արարողակարգի վարչությունը ևս խիստ ծանրաբեռնված է գործում: Այն ապահովում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, հանձնաժողովների նախագահների, նրանց մասնակցությամբ Ազգային ժողովի պատվիրակությունների և՛ հանրապետությունում, և՛ օտարերկրյա պետություններում կատարած այցերի արարողակարգային միջոցառումների նախապատրաստումն ու իրականացումը:

Կադրային ողջ բազայի հավաքումը, մրցույթի (փակ, բաց) կազմակերպման, հրամանների նախապատրաստման, պետական ծառայողներին և աշխատակիցներին աշխատանքի ընդունման և ազատման, փաստաթղթերի ապահովման ողջ պատասխանատվությունը կրում է **կադրերի կառավարման վարչությունը**:

Աշխատակազմում գործում է նաև **տարածքային քաղաքականության վերլուծության վարչություն**, որը հետադարձ կապ է ապահովում տարածքների, համայնքների հետ, ամփոփում և Ազգային ժողովի ղեկավարությանն է ներկայացնում տեղերում կուտակված հիմնախնդիրները, իսկ **սոցիալական հիմնախնդիրների հետազոտության վարչությունն** աշխատանքներ է տանում սոցիալական քաղաքականությանն առնչվող պետական կառավարման մարմինների, հասարակա-

կան կազմակերպությունների հետ, նախապատրաստում ոլորտին վերաբերվող հաղորդումներ, վերլուծություններ:

Կարևոր դեր է խաղում հրատարակչական ծառայությունը, որի կազմում է նախ տպարանը և, իհարկե, թարգմանչական բաժինը, որը զբաղված է ինչպես հրատարակչական գործունեությամբ, այնպես էլ Ազգային ժողովի ինտերնետային կայքի նյութերը ռուսերեն և անգլերեն թարգմանելով:

Ինչ վերաբերում է **գործերի կառավարչությանը**, ապա այն կարգավորում է պատգամավորների, հանձնաժողովների, Ազգային ժողովի ֆինանսատնտեսական, կենցաղային և այլ խնդիրները, զբաղվում է պաշտոնական հանդիպումների, խորհրդարանական լսումների նյութատեխնիկական ապահովածությամբ, պատգամավորների, Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների և Աշխատակազմի աշխատակիցների գործուղումների կազմակերպմամբ, իրականացնում է պաշտոնական միջոցառումների արարողակարգային ապահովումը, Ազգային ժողովի նիստերի, տրանսպորտային սպասարկումը, իրականացնում է նաև հրատարակչային գործունեություն, շենքերի վերանորոգում և շահագործում, ինչպես նաև ապահովում է Ազգային ժողովի հանձնաժողովների, խմբակցությունների, պատգամավորական խմբի և Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների տեղեկատվական-տեխնոլոգիական ու հեռահաղորդակցության միջոցների անխափան աշխատանքը:

Հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարչությունը ապահովում է հաշվապահական հաշվառման կազմակերպումը և նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների տեղաշարժերի, փոփոխությունների ժամանակին և ճիշտ արտացոլումը, վերահսկողություն է իրականացնում առկա գույքի և նրա շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման նկատմամբ, ինչպես նաև իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ:

Աշխատակազմում այսօր աշխատում է 491 անձ, որոնցից 238-ը կանայք են, իսկ 253-ը՝ տղամարդ. այստեղ վատ չի լուծված գենդերային հիմնախնդիրը: Բավական է նշել, որ 7 վարչությունների պետերից 3-ը կանայք են:

Վ. Յուլյևը նշում է, որ Ռուսաստանի Դաշնության Պետական դոմայում գործունեության արդյունավետությունը շատ բանով պայմանավորված է նրա իրավական, տեղեկատվական, կազմակերպական, նյութական, ֆինանսական, տեխնիկական և այլ ապահովածությամբ, որակով և դրանց մակարդակով: Հետաքրքիր է, որ Պետական դոմայի աշխատակազմում (վերը թվարկված բնագավառներում) աշխատում են շուրջ 1800 մարդ, որոնցից 250-ը գիտությունների թեկնածու կամ դոկտոր են, իսկ 1432-ն ունեն բարձրագույն կրթություն: Գրեթե լուծված է գենդերային խնդիրը՝ կանայք կազմում են աշխատակազմի

56%-ը, իսկ տղամարդիկ՝ 44%-ը: Ուշադրության է արժանի նաև այն, որ աշխատակիցների միջին տարիքը 44-ն է [12, էջ 12]: Նման պաշտոնյաները ոչ միայն ապահովում են Դաշնային ժողովի, այլև հանձնաժողովների, կոմիտեների, խմբակցությունների, խմբերի, պատգամավորների գործունեությունը և մասնագիտական աջակցություն ու օգնություն են ցույց տալիս նրանց:

Պետական մարմիններում կանանց թիվը մեծացնելու համար Ռուսաստանի Դաշնության նախագահը հրամանագիր է ստորագրել (1996 թ. հունիսի 30-ին, N 1005) Դաշնային պետական մարմինների համակարգում և ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմիններում կանանց դերի բարձրացման մասին [13, էջ 3238]: Հրամանագրով սահմանվել են նվազագույն քվոտաները պետական մարմինների աշխատակազմերում կանանց մասնակցության համար: Երաշխավորվել է պետական մարմիններին, ՌԴ սուբյեկտներին, տեղական ինքնակառավարման մարմիններին մշակել անհրաժեշտ միջոցներ՝ կանանց դերը բարձրացնելու նպատակով:

Աշխատակազմում բացի Օրենքով սահմանված պետական պաշտոնյաներից կան նաև տեխնիկական աշխատողներ, որոնց գործունեությունը կարգավորվում է «Աշխատանքային օրենսգրքով», Աշխատակազմի կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

Այսպիսով, Աշխատակազմի իրական գործառույթն է օգնել, աջակցել օրենսդիր մարմնի բնականոն աշխատանքներին և նպաստել նրա աշխատանքի գլխավոր «արդյունքը» հանդիսացող օրենքների ու որոշումների որակյալ և ժամանակին ընդունմանը:

Ամփոփելով կատարված վերլուծությունը, Աշխատակազմում պետական ծառայության սկզբունքների և խորհրդարանի ու պառլամենտարիզմի կայացման գործում ծառայողների դերի մասին, կարծում ենք, որ.

1. Անհրաժեշտ է պետության մեջ ներդնել պետական ծառայության միասնական համակարգ ինչպես աշխատանքի ընդունման, այնպես էլ նրանց գործունեությանը, աշխատանքի բովանդակությանը ներկայացվող պահանջներով, խրախուսանքի և տույժերի նույնատիպ պայմաններով, դասային աստիճաններով, պաշտոնի անձնագրերով, նյութական ապահովվածությամբ, նաև աշխատանքից ազատման կարգով:

2. Օրենքների, որոշումների մշակման, դրանց մասին եզրակացություններ տալու առումով Աշխատակազմում պետական ծառայողների հետ առավել հաճախ առնչվում են հանձնաժողովները, հետևաբար, մեր կարծիքով, ճիշտ կլիներ Օրենքում կատարել փոփոխություն և Աշխատակազմի, հատկապես, մասնագիտացված ստորաբաժանումների աշխատանքի բովանդակային վերահսկողությամբ զբաղվել նաև համապատասխան մշտական հանձնաժողովը:

3. Հարկ է, որ Աշխատակազմում վերանայվի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության կառուցվածքն այն կտրված-

քով, որ այնտեղ գործեն առանձին բաժիններ յուրաքանչյուր հանձնա-
ժողովին աջակցելու և սպասարկելու համար: Անհրաժեշտ է Օրենքում
ամրագրել այնպիսի նորմեր, որ այդ ստորաբաժանումներն ամենօրյա
աշխատանքային կապի մեջ լինեն հանձնաժողովների հետ և վերջին-
ներիս իրավասությանը վերաբերող հարցերով հաշվետու լինեն
դրանց:

4. Կարծում ենք, Աշխատակազմի կանոնակարգը պետք է քննար-
կել նաև Ազգային ժողովի նախագահին կից ստեղծվելիք խորհրդում:
Ինչպես նշված է «ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ և լրա-
ցումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, «Ազգային ժող-
վի գործունեությունը կազմակերպելու համար ստեղծվում է Ազգային
ժողովի խորհուրդ, կազմված՝ Ազգային ժողովի նախագահից, նրա տե-
ղակալներից, խմբակցությունների ղեկավարներից, մշտական հանձ-
նաժողովների նախագահներից: Խորհուրդը հավանություն է տալիս
Ազգային ժողովի Աշխատակազմի ղեկավարի մշանակմանը, հաստա-
տում է աշխատակազմի կառուցվածքը, թվաքանակը և Ազգային ժող-
վի ծախսերի նախահաշիվը: Խորհրդի գործունեության կարգը սահ-
մանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով» [14, էջ 61]: Այս
խորհուրդը սահմանադրական ամրագրում կստանա սահմանադրա-
կան փոփոխություններն ընդունելուց հետո:

5. Ազգային ժողովը քննարկում և հաստատում է պետական բյու-
ջեն, սահմանում պետական բոլոր մարմինների ֆինանսական հատկա-
ցումները, դրանց ծախսերը. ընդհանուրի մեջ քննարկվում է նաև Ազ-
գային ժողովի բյուջեն: Նպատակահարմար է, որ Ազգային ժողովում
առանձին լսվի Աշխատակազմի ղեկավարի հաղորդումը Աժ բյուջեի և
դրա կատարման վերաբերյալ:

6. Անհրաժեշտ է վերանայել Աշխատակազմի կառուցվածքը, քա-
նի որ առանձին բաժիններ, վարչություններ կրկնում են միմյանց գոր-
ծառույթները: Ժամանակն է Աշխատակազմում ստեղծել իրավագիտա-
կան կենտրոն-ինստիտուտ, որը կզբաղվի և՛ իրավական վերլուծութ-
յամբ, և՛ օրենքների, որոշումների փորձաքննությամբ, և՛ օրենքի հակա-
սությունների վերհանմամբ ու կնպաստի օրենսդրության համակարգ-
մանը՝ կողիֆիկացիային և ինկորպորացիային:

7. Անընդունելի է, որ XXI դարում Աշխատակազմը, խմբակցու-
թյունների, պատգամավորական խմբի, հանձնաժողովների աշխատա-
կազմերը հագեցված չեն ժամանակակից տեխնիկայով, աշխատանք-
ների կազմակերպման համար անհրաժեշտ պիտույքներով:

Աշխատակազմն առավել պատասխանատու պետք է վերաբերվի
ՀՀ քաղաքացիների դիմում-բողոքներին, ընդունելության ժամանակ
բարձրացված հարցերին և աջակցի պատգամավորներին սահմանված
կարգով դրանց ընթացք տալուն:

8. Անհրաժեշտ է կրճատել Աշխատակազմի պետական ծառայող-
ների թիվը և կարևորագույն ոլորտ կարգավորող օրենքների նախագ-
ծերի մշակման, եզրակացությունների կազմման համար պայմանագ-

րային հիմունքներով աշխատանքի իրավիրել ոլորտի հայտնի մասնագետների, գիտնականների, իրավաբանների: Դրանով մեծապես կբարելավվի ընդունվող իրավական ակտերի որակը:

9. Հարկ է օգտագործել հնարավոր բոլոր միջոցները (երկկողմանի, բազմակողմանի կապերը, միջազգային պայմանագրերը, փորձի փոխանակումները) այլ երկրների խորհրդարաններում, միջազգային կառույցներում պետական ծառայողների վերապատրաստումը կազմակերպելու համար:

10. Լուրջ վերանայման կարիք ունեն պետական ծառայողների սոցիալական պաշտպանվածության հարցերը, աշխատավարձի բարձրացման, բժշկական ապահովագրության, հանգստի կազմակերպման և սոցիալական այլ խնդիրները: Պետական ծառայողների աշխատանքը պահանջում է ծանոթանալ հատուկ նշանակության տեղեկությունների հետ և իրեն նվիրել արհեստավարժ գործունեությանը: Այդ պատճառով էլ պետական ծառայությունը պետք է ծառայողին բերի նյութական և բարոյական բավարարում: Պետական պաշտոնի դրամական բավարարման միջոցով պետությունը հատուցում է ոչ թե ծառայողի աշխատանքը, այլ՝ պետական ֆունկցիան, որն իրականացվում է որոշակի պաշտոնի մակարդակով: Պետական պաշտոնի դրամական բավարարումն իրականացվում է «հավասար ֆունկցիայի համար հավասար դրամական բավարարում» սկզբունքով:

11. Օգտագործելով համեմատախրավական մեթոդը «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ ՔԾՕ) և Օրենքի նկատմամբ, հանգում ենք այն եզրակացության, որ ՔԾՕ-ն առավել է կարգավորում ոլորտում ծագած հարաբերություններն ամբողջականությամբ, ինչը չի կարելի ասել Օրենքի մասին: Այսպես, ՔԾՕ-ի 21-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվել է «կադրային ռեզերվ», ինչը բացակայում է Օրենքում: Կամ՝ ՔԾՕ-ի 5-րդ հոդվածի «գ» կետով սահմանված է քաղաքացիների համար իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան ծառայության հավասար մատչելիության սկզբունքը, իսկ Օրենքում հավասարությունը հռչակված չէ: ՔԾՕ-ում ծառայողը դասային աստիճանից զրկվում է հստակ նշված դեպքերում, որոնց թվին են պատկանում նաև եկամուտների հայտարարագիր չներկայացնելը, օրենքով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը (աշխատավարձի իջեցում) տարվա ընթացքում կրկին կիրառելը, քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ օրենքով սահմանված կարգի խախտումը, օրենքով նախատեսված սահմանափակումները չպահպանելը, զբաղեցրած պաշտոնից ազատումը՝ Քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ՝ կարգապահական տույժի կիրառումով այս ամենը տեղ չեն գտել Օրենքում:

Էականորեն տարբերվում են ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու կառուցակարգերը: Օրենքում (հոդված 13, կետեր 1,3) նախատեսվում է պաշտոնի նշանակում մրցութային կարգով, որն անց

է կացվում փակ և (կամ) բաց մրցույթներով: Բացի պետական ծառայության կրտսեր պաշտոններից, այլ պաշտոնի զբաղեցման համար անցկացվում է փակ մրցույթ: Դրան կարող են մասնակցել տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին համապատասխանող Աշխատակազմի պետական ծառայողները: Այդպիսիների բացակայության կամ հավակնորդների չհաղթելու դեպքում, անցկացվում է բաց մրցույթ (նաև կրտսեր պաշտոնների համար): Փակ մրցույթով նշանակում չկատարելու, և Աշխատակազմում կրտսեր պաշտոնի թափուր տեղ լինելու դեպքում՝ պաշտոնները զբաղեցվում են բաց մրցույթով, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի (նախա և հետծննդյան շրջանում գտնվողի, զինծառայության, գործուղման մեջ եղած անձանց): Մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը ՔԾՕ-ով սահմանված է այլ ընթացակարգ. իրավասու պաշտոնատար անձը կարող է նշանակել համապատասխան մարմնի այն քաղաքացիական ծառայողին, ով բավարարում է սահմանված պայմաններին (թվարկված են 12-րդ հոդվածի 2-րդ կետում): Պաշտոնը կարող է զբաղեցվել նաև արտամրցութային կարգով, այն էլ միայն քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողը, ով տվյալ պաշտոնը զբաղեցնում է ժամկետային աշխատանքային պայմանագրով: Բացի այդ, թափուր պաշտոն առաջանալու և սահմանված կարգով այն չհամալրվելու դեպքում, դրա մասին համապատասխան մարմինը պարտավոր է տեղեկացնել Քաղաքացիական ծառայության խորհրդին (13-րդ հոդված): ՔԾՕ-ի 14-րդ հոդվածի 9.1, 10, 10.1 մասերում սահմանված են մասնակցի կամ հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի արդյունքների բողոքարկման իրավունքը և դրա ընթացակարգը: Գրավոր բողոքը քննության է առնում Քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ ուսումնասիրելով մասնակցի հարցերին տված պատասխանները, մրցութային հանձնաժողովի գնահատականները, դրանք համեմատելով քվերակության արդյունքների հետ և որոշելով որոշակի մասնակցի՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու հարցը: Գրավոր բողոքը քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանում է Քաղաքացիական ծառայության խորհուրդը: Բողոքարկման այս ձևը Օրենքն ընդհանրապես չի սահմանել, այլ հարցի լուծումը թողել է դատարանին:

Հարկ է նկատել, որ Օրենքով սահմանված չէ կարգապահական տույժ սահմանելու և կիրառելու ժամանակ ծառայողական քննություն անցկացնելու տարբերակը: ՔԾՕ-ի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը» նշանակվում է 4 տարի ժամկետով: Նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) այդ ժամկետը կարող է երկարաձգել մեկ անգամ ևս 4 տարի ժամկետով և կարող է աշխատել այդ պաշտոնում մինչև 65 տարին լրանալը: Ժամկետային ծառայության սկզբունքն Աշխատակազմի ղեկավարի դեպքում չի գործում՝ նա անփոխարինելի է:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, Աշխատակազմում պետական ծառայության հետ կապված շատ հարաբերությունների կարգավորումը սկզբունքորեն տարբերվում է պետական ծառայության հիմքը հանդիսացող քաղաքացիական ծառայությունից: Անհրաժեշտություն է առաջացել Օրենքը վերանայել և երկրում պետական ծառայության միասնական համակարգ ստեղծել, որտեղ ծառայությունը կհամարվի մասնագիտական գործունեություն՝ ուղղված ՀՀ օրենսդրությամբ պետական մարմնին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Այսպիսով, թեև Աշխատակազմի գործունեությունը նպաստում է խորհրդարանի և պառլամենտարիզմի կայացմանը երկրում, սակայն այն դեռևս կատարելագործման ու զարգացման կարիք ունի: Անհրաժեշտ է հստակ, համակարգված, ներդաշնակ ու որակյալ աշխատանք Աշխատակազմի ծառայողների կողմից: Հարկ է նաև ուսումնասիրել եվրոպական երկրների փորձը, մշակված համակարգերը և դրանցից առաջավորն ու օգտակարը տեղայնացնել՝ Աշխատակազմի գործունեությունը կատարելագործելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Бахрах Д. Н.*, Административное право, М., 1993.
2. *Алехин А. П., Козлов Ю. М.*, Административное право Российской Федерации. В. 2 ч., ч. 1. (сущность и основные институты административного право), М., 1995.
3. *Манохин В. М.*, Советская государственная служба, М., 1966.
4. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002, N 1:
5. Советское административное право (отв. ред.- *Лунев А.Е.*), М., 1960.
6. *Старилов Ю.Н.*, Служебное право, М., 1996.
7. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2003, N 1:
8. *Курилов В.И.*, Аттестация и личность работника в Советском трудовом праве, Владивосток, 1983.
9. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ օրենք, ընդունված է 2002 թ. փետրվարի 20-ին (30.07.2002 թ. և 18.01.2005 թ. փոփոխություններով և լրացումներով):
10. Ազգային ժողով 2005, N 5, մայիս:
11. *Դոդրոյան Շ.*, Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը, Երևան, 2005:
12. *Елчев В.А.*, Аппарат Государственный Думы и законотворческий процесс, М., 1999, с. 12.
13. Сборник законов РФ, 1996, N 27.
14. Սահմանադրական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2005:

HRANUSH HAKOBYAN

*Member of Parliament,
National Assembly of the Republic of Armenia,
Doctor of Law*

THE ROLE OF THE STAFF OF THE NATIONAL ASSEMBLY IN ENSURING ACTIVITIES OF THE PARLIAMENT

Current article reviews the activity of the state machinery of the legislative body and its role in the work organization of the National Assembly. The law on “Civil Service in the Administration of the National Assembly (hereafter «the Law was adopted in 2002. It regulates the admission, activity, discharge and other related legal issues concerning the staff of the Administration of the National Assembly of the Republic of Armenia (hereafter “the Administration”), as well as issues related to their encouragement, accountability, and social security and, etc.

The Law also anticipates that the civil service in the Administration is a professional activity, which aims at bringing the work at the National Assembly in compliance with the Constitution and the laws of the Republic of Armenia.

The author has analyzed the law and showed the shortcomings, which should be reviewed and edited for the perfection of the civil service at the Administration. Using the comparative-legal method, the author draws parallels with the RA Law, on Civil Service and mentioning that the latter is more universal, that it has passed through a number of editions and changes in accordance with the legal-empiric practice. The question of reforming the Law has already grown. The author describes the structure of the Administration, main functions of its departments, the impact of their qualification and professional skills on the general activity of the National Assembly. The author meantime introduces a number of conclusions, which can be useful both in service organization at the Administration and in the process of editing and amending the Law. The Law is added with appendices, which introduce the structure of the Administration, its evolution, committee staff structure, as well as the citizens application-complaints and the statistics of incoming and outgoing documentation of the National Assembly since 1990. It introduces also the participation of the National Assembly in the foreign policy and international structures through democratic diplomacy and the way the Administration serves the sphere. The article is an attempt of a detailed analysis of the civil service in a country with a short history of this service.

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

*Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում
ՀՀ կառավարության ներկայացուցիչ,
իրավագիտության թեկնածու*

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
(համեմատական վերլուծություն)**

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Դա նշանակում է, որ Ազգային ժողովի հիմնական և կարևոր գործառնությունն օրենքների ընդունումն է:

Օրենքների ընդունումը յուրաքանչյուր խորհրդարանի հիմնական գործառնություն է, քանի որ, որպես պետության ինքնիշխանության կրող և ժողովրդի ներկայացուցչական մարմին, խորհրդարանն ինքն է սահմանում պետական գործունեության կարևորագույն սկզբունքները, վարքագծի այն կանոնները, որոնցով նախանշվում են պետական և հասարակական կարգի բոլոր կողմերը: Դեռևս Շ. Մոնտեսքյեն և Ժ.ժ. Ռուսսոն հիմնավորել են օրենքի կարևորությունն ու գերակայությունն այն առումով, որ դրանք արտահայտում են ժողովրդի կամքն ու շահերը, կարգավորում հասարակական հարաբերությունների առավել կարևոր ոլորտները:

Հետագայում տեսաբանների կողմից առաջ է քաշվում օրենք հասկացության երկու իմաստավորում՝ ձևական և նյութական: Ձևական առումով օրենքն իրենից ներկայացնում է պետության հիմքը կազմող, սուվերենությունը կրող և ժողովրդի կամքն արտահայտող պետական մարմնի յուրաքանչյուր որոշում: Նյութական առումով օրենք է համարվում յուրաքանչյուր ակտ, որը, ըստ էության, իրենից ներկայացնում է օրենք՝ անկախ այն ընդունող մարմնից [1, էջ 201]: Նման բաժանումը պատահական չէր և նպատակ ուներ առաջին դեպքում օրենսդրական գործունեություն իրականացնելու լիազորությամբ օժտել միայն խորհրդարանին, իսկ երկրորդ դեպքում՝ նաև այլ պետական մարմինների: Այնուամենայնիվ, խորհրդարանն է բացառիկ այն մարմինը, որն իր ներկայացուցչական բնույթով պայմանավորված օրենքներ ընդունելու իրավունք պետք է ունենա:

Օրինաստեղծ գործունեությունը բազմաբովանդակ գիտելիքներ պահանջող, ինչպես նաև բոլորին հասկանալի և իրագործելի իրավական նորմերը հստակ և հակիրճ շարադրելու բարդ գործընթաց է, որը ենթադրում է նաև օրենքով ամրագրված վարքագծի կանոնները պար-

տադիր կենսագործելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ստեղծում:

Իրավունքի պատմական հուշարձանները վկայում են, որ դարեր շարունակ, մասնավորապես հայ իրավաբանները մեծ ուշադրություն են դարձրել օրենքների մշակման գործընթացին: Օրինակ՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ին ներհատուկ էր ոչ միայն հայ ժողովրդի կենսական պահանջների կարգավորման վերաբերյալ հստակ իրավակարգերը, այլև այդ ժամանակի օրենսդրական գործունեության համաշխարհային փորձը: Ճիշտ է, այն չդարձավ պաշտոնական օրենսգիրք, այնուամենայնիվ, աշխարհի բազմաթիվ հայաբնակ վայրերում գործնականում ղեկավարվում էին դրանով:

Նման երկարատև ժամանակի համար ստեղծված իրավաբանական հուշարձանների թվին է դասվում ԱՄՆի 1787 թ. Սահմանադրությունը, որը թեև մինչև օրս ենթարկվել է 27 փոփոխությունների, սակայն հիմնական սկզբունքները պահպանվել են [2, էջ 332], [3, էջ 58], [4, էջ 99]: Այդպիսին է 1804 թ. Նապոլեոնի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ ստեղծված Քաղաքացիական օրենսգիրքը: Իհարկե իրավաբանական այդ հուշարձաններից յուրաքանչյուրը կրել է համապատասխան դարաշրջանին բնորոշ հարաբերությունների, հասարակական տարբեր խավերի բարքերի և շահերի դրոշմը:

Այս իմաստով, օրենքների նախագծերի մշակման, դրա առարկայի ուսումնասիրության և վերլուծության մեթոդների և միջոցների ճիշտ ընտրությունը երաշխիք է հանդիսանում հետագայում այդ օրենքների կողմից համապատասխան ոլորտի հասարակական հարաբերությունների կարգավորման արդյունավետության համար: Այդ մեթոդների և միջոցների ամբողջությունը գրականության մեջ բնորոշվում է որպես «օրինագծերի նախապատրաստման տեխնոլոգիա» [5, էջ 42]: Այն ենթադրում է օրենքների նախագծերի նախապատրաստման որոշակի կարգ, իրավաստեղծ գործունեության գիտատեղեկատվական ապահովում, նախապատրաստված օրենքների նախագծերի փորձաքննությունների տեսակներ, ինչպես նաև տեսությամբ և պրակտիկայով մշակված օրենսդրական տեխնիկայի կանոններ. այսինքն՝ օրենքների նախագծերի նախապատրաստման և ձևակերպման իրավաբանատեխնիկական և լեզվատրամաբանական կանոններ: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ օրենքի կարգավորող հատկությունը պայմանավորված է ոչ միայն օրենքի բովանդակային կողմով, այլ նաև կառուցվածքով, լեզվով, ոճով, տրամաբանությամբ: Խոսքը վերաբերում է նրան, որ հաճախ պրակտիկայում փորձում են օրենքը ներկայացնել առավել հանդիսավոր, գեղեցիկ՝ բազմաթիվ տերմինների կիրառմամբ, որը բնականաբար դժվարացնում է օրենքի հանրամատչելիությունը:

Իր օրենսդրական լիազորություններն Ազգային ժողովն իրականացնում է Սահմանադրությամբ և կանոնակարգով նախատեսված օրենսդրական վարույթին համապատասխան, որը, որպես իրավաբանական կատեգորիա, անհրաժեշտ է հստակ սահմանազատել օրինաս-

տեղծ գործունեություն հասկացությունից: Օրենսդրական վարույթն իրենից ներկայացնում է օրենսդրական գործունեության կարգին և պայմաններին վերաբերող ինստիտուտ, այնինչ օրինաստեղծ գործունեությունն ենթադրում է ոչ միայն օրենքի ընդունման բուն կառուցակարգը, այլև օրենքի արդյունավետության գնահատման և հնարավոր փոփոխությունների, ուղղումների ամբողջ գործընթացը: Օրինաստեղծ գործունեությունն ավելի լայն, ընդգրկուն հասկացություն է, որի մեջ մտնում է նաև օրենսդրական վարույթը:

Օրենսդրական վարույթն ունի իր փուլերը, որոնք ամբողջությամբ վերցրած կազմում են օրենսդրական վարույթի բուն բովանդակությունը: Դրանք են՝

1. օրենսդրական նախաձեռնություն,
2. օրինագծի քննարկումը հանձնաժողովներում կամ խորհրդարանում,
3. օրենքի ընդունում,
4. օրենքի ստորագրում և հրապարակում:

Օրենսդրական նախաձեռնությունը հանդիսանում է օրենսդրական վարույթի առաջին փուլը, որը տարբեր կերպ է բնութագրվում: Գրականության մեջ օրենսդրական նախաձեռնությունը բնորոշվում է, որպես իրավասու սուբյեկտի կողմից օրինագծի կամ օրենսդրական նախաձեռնության պաշտոնական ներկայացումը խորհրդարանին: Այս տեսանկյունից տարբերվում են օրինագիծը՝ օրենսդրական նախաձեռնությունից: Դրանք տարբեր հասկացություններ են, ըստ հեղինակի, առաջինը ենթադրում է օրենքի տեքստն ամբողջությամբ՝ պրեամբուլայով, պարագրաֆներով, հոդվածներով և այլն, իսկ երկրորդը՝ օրինագիծ ստեղծելու վերաբերյալ միտքը, կոնցեպցիան [6, էջ 494]: Բացի դա տարանջատումը ունի նաև այլ տրամաբանություն. խորհրդարանական պրակտիկայում օրինագիծը ներկայացնում է կառավարությունը, իսկ օրենսդրական նախաձեռնությունը՝ պատգամավորները: Դասակարգման մասն տրամաբանությունն իմ կարծիքով անընդունելի է, քանի որ օրենսդրական նախաձեռնությունն ընհանրապես համեմատելի չէ օրինագծի հետ, հիմք ընդունելով, որ օրինագիծը դա օրենսդրական նախաձեռնության արդյունքն է, և անկախ օրինագծի ներկայացման ձևից, այն չի կարող նույնացվել օրենսդրական նախաձեռնության հետ: Եթե հարցին մոտենանք այդ տեսանկյունից, ապա առկա է որոշակի անհամապատասխանություն ՀՀ Սահմանադրության 75 հոդվածում, ըստ որի օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը: Այսինքն՝ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ են հանդիսանում և՛ պատգամավորները, և՛ կառավարությունը, այնինչ, ըստ վկայակոչված կարծիքի, կառավարությունը հանդես է գալիս, որպես օրինագիծ ներկայացնելու սուբյեկտ: Մոտեցումը խիստ անհամատեղելի է անգամ զոյություն ունեցող իրավակիրառական պրակտիկայի հետ: Մասնավորապես, այդ երկու հասկացությունները, մեր կարծիքով, խիստ տարանջատվում են: Այդ հասկացությունը բնորոշվում է երկու հիմնական ձևով: Առաջին, օ-

րենսդրական նախաձեռնությունն ըստ էության, դա սուբյեկտին վերապահված իրավունքն է հանդես գալու խորհրդարանում այս կամ այն հարցի կարգավորման առաջարկով՝ օրենք կամ ՀՀ Ազգային ժողովի որոշում ընդունելու եղանակով: Երկրորդ՝ օրենսդրական նախաձեռնությունը հանդիսանում է այն փաստաթուղթը, որը ներկայացնում է պատկան սուբյեկտը խորհրդարան՝ որով առաջարկվում է օրենքի կամ ՀՀ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը: Այսինքն՝ օրենսդրական նախաձեռնությունը մի դեպքում հանդիսանում է սուբյեկտի իրավունքը, մյուս դեպքում դա փաստաթուղթ է, որը հանդիսանում է այդ իրավունքի իրացման արդյունքը: Նախ, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է միայն օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրա կրող սուբյեկտներին: Մյուս կողմից, ՀՀ իրավակիրառական պրակտիկայում օրինագիծ կազմելու իրավունք ունեն ՀՀ կառավարությունը, ինչպես նաև նախարարություններն ու գերատեսչությունները: Այս իմաստով չեն կարծում, որ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտներին պետք է համեմատել օրինագիծ ներկայացնելու սուբյեկտների հետ, քանի որ վերջիններս չեն հանդիսանում օրենսդրական նախաձեռնության իրավունքի կրողներ և միայն օրինագիծը ներկայացնում են կառավարությանը, որն այն օրենսդրական նախաձեռնության իրավունքի ուժով ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովին: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ *օրենսդրական նախաձեռնությունն ըստ էության, դա սուբյեկտին վերապահված իրավունքն է հանդես գալու խորհրդարանում այս կամ այն հարցի կարգավորման առաջարկով՝ օրենք կամ ՀՀ Ազգային ժողովի որոշում ընդունելու եղանակով:*

Այս հասկացությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու օրենսդրական նախաձեռնության սուբյեկտներին:

Միջազգային պրակտիկայում առանձնացվում են օրենսդրական նախաձեռնության հետևյալ սուբյեկտները՝

1. խորհրդարանի անդամները և նրա մարմինները (խորհրդարանական նախաձեռնություն),

2. պետության կամ կառավարության գլուխը (կառավարական նախաձեռնություն),

3. դաշնային պետություններում՝ դաշնության սուբյեկտները,

4. տեղական մարմինները, հատուկ պետական հիմնարկները՝ իրենց իրավասության հարցերով (հատուկ նախաձեռնություն),

5. ընտրողների որոշակի խմբեր (ժողովրդական նախաձեռնություն):

Բազմաթիվ պետություններում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների շրջանակը սահմանափակվում է կառավարությամբ և պատգամավորներով: Օրինակ՝ Գերմանիայում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն ֆեդերալ կառավարությունը, Բունդեստագի և Բունդեսռատի պատգամավորները: Մի շարք երկրներում սուբյեկտների շրջանակը ներառում է պետական բարձրագույն մարմինները, կենտրոնական պետական հիմնարկները, իսկ շատ դեպքե-

րում նաև կրոնական և այլ հասարակական կազմակերպությունները: Օրինակ՝ Կուբայում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորները, Պետական խորհուրդը, որն այնտեղ հանդես է գալիս որպես մշտական հիմունքներով գործող իշխանության մարմին, Նախարարների խորհուրդը, Կուբայի աշխատավորական արհմիության ազգային կոմիտեն, դատախազությունը, դատարանը և ոչ պակաս քան 10.000 ընտրողներ [7, էջ 290]:

Լայն տարածում է ստացել նաև հատուկ օրենսդրական նախաձեռնությունը, որի սուբյեկտներ են, օրինակ, Իտալիայում՝ էկոնոմիկայի և աշխատանքի ազգային խորհուրդն ու մարզային խորհուրդները, Շվեյցարիայում՝ կանտոնների խորհուրդները [8, էջ 45], [9, էջ 89]: Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների լայն շրջանակ սահմանելու դեպքում վերջիններիս հնարավորություն է տրվում, բնականաբար, մասնակից դառնալու պետության կառավարման և իշխանության իրականացման գործընթացին, որը կարևոր նախապայման է ժողովրդավարության իրականացման հարցում:

Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների ցանկը հիմնականում նախատեսվում է սահմանադրություններով, իսկ շատ դեպքերում նաև կանոնակարգերով:

Մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էր օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների ընդարձակ ցանկ: Այդպիսիք էին ճանաչվում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովները, Գերագույն խորհրդի պատգամավորները, կուսակցական խմբակցությունները և պատգամավորական խմբերը, ՀՀ Նախագահը, գերագույն դատարանը, գլխավոր դատախազը, գլխավոր պետական արքիտորը և հասարակական, քաղաքական կազմակերպությունները: Իսկ Գերագույն խորհրդի կանոնակարգի 75-րդ հոդվածով սահմանվում էր, որ օրենսդրական նախաձեռնության իրավունք չունեցող պետական կամ հասարակական մարմինների կամ առանձին քաղաքացիների առաջարկությունները կարող են Գերագույն խորհուրդ մտցնել օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող մարմիններն ու անձինք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և ՀՀ կառավարությանը:

Պատգամավորն իր օրենսդրական նախաձեռնությունն իրականացնում է օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի նախապատրաստման և Ազգային ժողով ներկայացնելու միջոցով: Հոդվածի բնորոշումից ակնհայտ է, որ խոսքը գնում է ոչ թե պատգամավորների խմբի մասին, որպես նախաձեռնության սուբյեկտների, այլ մեկ պատգամավորի մասին: Պատգամավորական խմբերին և խմբակցություններին օրենսդրական նախաձեռնության իրավունք չտալը, մեր

կարծիքով, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության բացը: Խնդիրն այն է, որ արտասահմանայն շատ երկրների օրենսդրությամբ պահանջվում է, որպեսզի պատգամավորական նախաձեռնության իրավունքն իրականացվի՝ կոլեգիալ կարգով: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պատգամավորական նախաձեռնություններն ընդունվում են այն դեպքում, եթե ստորագրված են խմբակցության կան պատգամավորների առնվազն 5%-ի կողմից: Նման օրինակները բազմազան են և հիմնավորվում են երկու տեսանկյունից: Առաջին՝ այդ կարգը բացառում է պատգամավորի ոչ լուրջ մոտեցումը նախաձեռնության իրավունքի իրականացմանը, և երկրորդ՝ ներկայացնում է խմբակցության կողմնորոշումը և դերը հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում: Բացի դա ակնհայտ է, որ մեկ անձը, անգամ մասնագիտությամբ իրավաբան, մեր կարծիքով, հազիվ թե ի վիճակի լինի այնպիսի օրինագիծ ստեղծել, որոնցով կարելի լինի բավարարել հասարակական հարաբերությունների տվյալ ոլորտի կարգավորման բոլոր խնդիրները: Այդ կապակցությամբ նպատակահարմար է օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ դիտել ոչ միայն անհատ պատգամավորներին, այլև, առաջին հերթին, պատգամավորական խմբերին և խմբակցություններին:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ է հանդիսանում նաև կառավարությունը: Եվ իրականում, նույն կարգով արտասահմանյան մի շարք երկրներում օրինագծերի հիմնական ներկայացնողը կառավարությունն է, քանի որ վերջինս ավելի լայն հնարավորություն ունի հայտնաբերելու հասարակական հարաբերությունների այն թրությունները և բացերը, որոնք ենթակա են օրենսդրական կարգավորման: Գործադիր իշխանությունն ավելի զգայուն է իրադարձությունների ընթացքի նկատմամբ՝ ինչպես ամբողջությամբ հասարակության մեջ վերցրած, այնպես էլ նրա առանձին ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Պատահական չէ, որ կառավարության գործունեությունը բնորոշվում է, որպես իրավակիրառական և օրինագործադրողական: Դա բացատրվում է նրանով, որ գործառնությունները մասնավորապես վերաբերում են ընթացիկ կառավարմանը, նկատի ունենալով, որ կառավարությունը կազմակերպում է օրենքներում ձևակերպված սկզբունքային դրույթների իրագործումը, ինչը ենթադրում է բազմաթիվ որոշակի հարցերի ամենօրյա լուծում՝ հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում:

Տարբեր երկրներում կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի կապակցությամբ կան առանձնահատկություններ: Առավել կիրառություն ունի այն մոտեցումը, ըստ որի օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ է ճանաչվում ոչ թե կառավարությունը, այլ կառավարության գլուխը: Օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 39-րդ հոդվածով սահմանված է, որ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ են հանդիսանում վարչապետը և պատգամավորները: Մեկ

այլ դեպքում սահմանադրությունները կառավարության կողմից ներակայացվող նախաձեռնությունների կապակցությամբ սահմանում են որոշակի պայմաններ: Օրինակ՝ Գերմանիայի սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն, կառավարության կողմից ներկայացվող օրինագծերն առաջին հերթին ներկայացվում են Բունդեսռատին՝ նախանշելու «հողերի» կողմնորոշումը, այնուհետև, հավանության արժանացած օրինագիծն ուղարկվում է Բունդեստագ [10, էջ 102]:

ՀՀ կառավարությունն իր օրենսդրական լիազորություններն իրականացնում է նաև Ազգային ժողովի կանոնակարգին համապատասխան, որի 70-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունն օրինագիծը ներկայացնելիս սահմանում է նաև ներկայացրած նախագծերի քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Առանձնակի ուշադրության են արժանի ֆինանսական բնույթի օրենքների նախագծերը, որոնց վերաբերյալ Սահմանադրությունը պարունակում է մի դրույթ, ըստ որի պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերը Ազգային ժողովը քննարկում է կառավարության եզրակացությամբ և ընդունում պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ: Սահմանվում է նաև, որ ներկայացված օրենքի նախագիծը, եթե նախատեսում է ընթացիկ տարվա պետական բյուջեով հաստատված եկամուտների կամ ծախսերի փոփոխություն, ապա կառավարությունը դրան զուգահեռ ներկայացնում է նաև օրենքի նախագիծ՝ պետական բյուջեում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին:

Պայմանավորված ֆինանսական բնույթի օրենքների բարդությամբ, յուրաքանչյուր պետություն սահմանում է հատուկ արարողակարգ՝ նպատակ ունենալով խուսափելու բյուջեով նախատեսված պետական ծախսերն ավելացնելուց կամ պետական եկամուտները կրճատելուց: Խոսքը վերաբերում է ոչ միայն պետական բյուջեի կամ բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ներկայացմանը, որի մասին խոսել ենք վերևում, այլ ֆինանսական գործունեությանը՝ հարկային և վարկային քաղաքականության մեջ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն՝ օրինագծերը, որոնք վերաբերում են հարկեր սահմանելուն կամ վերացնելուն կամ հարկեր վճարելուց ազատելուն, պետական վարկերի տրամադրմանը, ներկայացվում են Պետական դումա միայն կառավարության կողմից:

Նման բարդ վիճակը նաև նպատակ ունի բացառելու պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնությունը լրբիստական նպատակներով կամ պետական շահերին հակադրվող նպատակներով օգտագործելու համար: Այդ տեսանկյունից կարևոր է այն հանգամանքը, որ կառավարությունն իր ներակայացրած օրենքի նախագծի առնչությամբ կարող է ղնել իր վստահության հարցը: Եվ, եթե Ազգային ժողովն որոշում չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտ-

նելու մասին, օրենքի նախագիծը համարվում է ընդունված: Այնուամենայնիվ, կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավել, քան երկու անգամ: Այս սահմանափակումը զսպիչ նշանակություն ունի, հատկապես, երբ կառավարությունը վայելում է խորհրդարանական մեծամասնության վստահությունը:

Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի առումով միջազգային պրակտիկայում կարևորվում է պետության նախագահի իրավասությունը: ԱՊՀ երկրների իրավաստեղծ գործունեության ոլորտում գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ պետության նախագահի օրենսդրական նախաձեռնության իրավունքի հարցում: Այսպես, Թուրքմենստանում, Տաջիկստանում, Վրաստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Ռուսաստանի Դաշնությունում, Մոլդովայում, Բելառուսում և Ղրղզստանում պետության նախագահը միանշանակ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի [11, էջ 304]: Մնացած երկրներում նախագահը նախաձեռնության իրավունք չունի, սակայն օրենսդրական նախաձեռնության փուլում օժտված է որոշակի լիազորություններով: Օրինակ՝ Ղազախստանում երկրի նախագահն օրենսդրական նախաձեռնության լիազորությամբ օժտված չէ, սակայն իրավունք ունի որոշելու քննարկվող օրինագծերի առաջնահերթությունը, ինչպես նաև օրինագիծը հայտարարել անհետաձգելի: Դա նշանակում է, որ խորհրդարանն այն պետք է ընդունի մեկամսյա ժամկետում, հակառակ դեպքում նախագահն իրավունք ունի այդ կապակցությամբ հրապարակել հրամանագիր, որը գործում է մինչև խորհրդարանի կողմից համապատասխան օրենքի ընդունումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նշվեց, օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ է ճանաչում միայն Ազգային ժողովի պատգամավորներին և կառավարությանը: Այստեղից հետևում է, որ ՀՀ Նախագահը չի հանդիսանում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ: Սակայն ՀՀ օրենսդրության վերլուծությունն այլ եզրահանգում է առաջադրում: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը բաժանվում է երկու մասի՝ օրենքի նախագիծ ներկայացնելու և ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք: Օրենքի նախագծի ներկայացնելու իրավունքը ՀՀ Նախագահն իրականացնում է ՀՀ կառավարության միջոցով: Ընդ որում, օրենսդրական նախաձեռնության իրավունքը ՀՀ Նախագահը կարող է իրականացնել ինչպես առանձին օրենսդրական նախաձեռնություն ներկայացնելու, այնպես էլ՝ արդեն իսկ ներկայացված օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալով: Նախ և առաջ, ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության փոխհարաբերությունների վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ կառավարության կողմից ներկայացվող յուրաքանչյուր օրինագիծ կամ պետք է համաձայնեցված լինի ՀՀ Նախագահի հետ, կամ առաջարկված լինի վերջինիս կողմից: ՀՀ Սահմանադրության դրույթների

համադրումը ուղղակի ենթադրում է ՀՀ Նախագահի հետ պարտադիր համաձայնեցման գործընթացը: Խնդիրն այն է, որ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն Հանրապետության Նախագահը նշանակում և ազատում է վարչապետին, վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին, ըստ 86-րդ հոդվածի 1 ին մասի կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Այսինքն, ՀՀ կառավարության գործունեությանը ներազդելու այս հնարավորությունների պայմաններում անժխտելի է, որ ՀՀ կառավարության բոլոր գործողությունները, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնությունները, ըստ էության, գոնե ձևական առումով պետք է համաձայնեցվեն ՀՀ Նախագահի հետ: Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը, միանշանակ է, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացվում է եթե ոչ ՀՀ Նախագահի կողմից, ապա վերջինիս ուղղակի մասնակցությամբ:

Սակայն միայն ՀՀ կառավարության կողմից առաջադրված օրենսդրական նախաձեռնություն պարունակող ՀՀ կառավարության որոշումների վավերացմամբ ՀՀ Նախագահի լիազորությունները՝ օրենսդրական նախաձեռնության մասով, չի սահմանափակվում: ՀՀ օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Նախագահն անգամ ուղղակի իրավունք ունի հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ: «ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 16 մարտի 2002 թ. թիվ 1064 հրամանագրի 12-րդ կետը սահմանում է, որ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվում են ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերը՝ օրենքների և ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծերը: Իսկ 11-րդ կետը սահմանում է, որ կառավարության քննարկման հարցերը ներկայացնում են ՀՀ Նախագահը, վարչապետը և նախարարները: Այսինքն՝ ՀՀ Նախագահը ոչ միայն ունի բուռն մասնակցություն, այլև ուղղակի իրավունք՝ ներկայացնել օրենսդրական նախագիծ: Փաստորեն ՀՀ Նախագահի կողմից նախաձեռնությունները, այդ թվում՝ և՛ օրենքների, և՛ ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծերի, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու և ՀՀ կառավարության որոշումները վավերացնելու ՀՀ Նախագահի իրավունքների իրականացումն ուղղակի ենթադրում է վերջինիս կողմից օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացումը, եթե ոչ անմիջականորեն, ապա վերոհիշյալ իրավունքների իրացմամբ պայմանավորված:

ՀՀ Նախագահի օրենսդրական նախաձեռնության իրավունքը ՀՀ Ազգային ժողովի որոշումներ ներկայացնելու համար ՀՀ կառավարության միջնորդությամբ ներկայացնելու ձևով չի սահմանափակվում: ՀՀ Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Նախագահն իրավունք ունի ուղղակիորեն ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներ-

կայացնել ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծ: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածը սահմանում է. «Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝

1. հայտարարում է համաներում,

2. վավերացնում կամ չեղյալ է հայտարարում ՀՀ միջազգային պայմանագրերը,

3. հայտարարում է պատերազմ:»

Նշված հանգամանքների վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովն ընդունում է որոշում: Այսինքն, եթե հաշվի առնենք, որ ՀՀ Ազգային ժողովի որոշման որևէ ֆորմալ ձև սահմանված չէ, ուստի ՀՀ Նախագահը, օրենսդրական նախաձեռնության կարգով, ըստ էության ներկայացվում է Ազգային ժողովի որոշման առաջարկ թվարկված երեք հանգամանքների վերաբերյալ: Ընդ որում, բացարձակապես կարևոր չէ որոշումների նախագծերի ներկայացման ֆորմատը, քանի որ բոլոր դեպքերում նախագծերն իրավական տեխնիկայի առումով ենթարկվում են փորձաքննության:

Հարկ են համարում ներկայացնել որոշ նկատառումներ նաև օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ տեղ գտած որոշ անճշտությունների մասին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը: Սակայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանվում է, որ Սահմանադրությամբ և սույն օրենքով նախատեսված դեպքերում Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի պատգամավորը, եթե Սահմանադրությամբ և սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Այս դրույթը բազմաթիվ մեկնաբանությունների տեղիք է տալիս, այնուամենայնիվ, նման սահմանափակումներն անհնաստ են համարում, քանի որ ՀՀ Սահմանադրության մեջքերված դրույթն առանց վերապահումների օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտում է պատգամավորներին և կառավարությանը հավասարապես: Այսինքն՝ երկու սուբյեկտներն իրավունք ունեն հավասարապես ներկայացնել այս կամ այն հարցի կարգավորման վերաբերյալ ինչպես օրենքի, այնպես էլ ազգային ժողովի որոշման նախագծեր, եթե կարգավորման ենթակա հարցերը չեն քննարկվում բացառապես ՀՀ Նախագահի առաջարկությամբ:

Ամփոփելով՝ նշեն, որ ՀՀ օրենսդրությունը բարեփոխման կարիք ունի այն առումով, որ անհրաժեշտ է ընդլայնել օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների շրջանակը՝ ներառելով ՀՀ Նախագահին, պատգամավորական խմբերին և խմբակցություններին, միաժամանակ, սահմանափակելով անհատ պատգամավորների օրենսդրական նախաձեռնության իրավունքը, սահմանելով, որ միայն մի քանի (օրինակ՝ 3 և ավելի) պատգամավորներ իրավունք ունենան ներկայացնելու օրենսդրական նախաձեռնություններ:

ԳՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. *Дюги Л.*, "Конституционное право" М., Издво Наука, 1908.
2. *Чиркин В.Е.*, Указ соч.
3. "Государственный строй США", М, Издво ЮЛ, 2000.
4. *Мишин А.А., Власихин В.А.*, "Конституция США. Политикоправовой комментарий" М., Издво ЮЛ. 1985.
5. *Керимов Д.А.*, "Законодательная техника" М., Издво Норма, 1998, с 42.
6. "Конституционное право зарубежных стран" Учебник, т. 3, под. ред. *Страшуна Б.А.*, М, Издво Бек, 1996.
7. *Чиркин В. Е.*, "Государствование" М., Издво Норма, 1999.
8. "Италия. Конституция и законодательные акты" М., Издво Прогресс, 1988.
9. *Левьо Ю.И.* "Парламент Швейцарии/Парламенты мира", М., Издво Наука, 1991.
10. "Федеративная Республика Германия, Конституция и законодательные акты" М., Издво Прогресс, 1991.
11. *Ковешников Е.М., Марченко М.Н., Стешенко Л.А.*, "Конституционное право стран содружества независимых государств" М., Издво Форум, 1999.

GEVORG KOSTANYAN

*The Representative of the RA Government before
the European Court of Human Rights,
Doctor of Law*

**LEGISLATIVE INITIATIVE LAW
(COMPARATIVE ANALYSIS)**

The research paper discusses an urgent and noteworthy question of constitutional law - the legislative initiative. The author conducted in-depth study on this issue, revealed the concepts of legislative process, legislative initiative, showed the formation and evolution of lawmaking and carried out comparative analysis introducing the practice of foreign states. The author focused on the issue of the subjects entitled to initiate legislation and emphasized the significance of widening the framework of subjects in RA, by including the President, deputy fractions and groups and restricting deputy's right to initiate. The author also disclosed the gaps and contradictions in RA legislation on certain issue.

ՍԱՄԿԵԼ ՍՈՒՐԱԴՅԱԼ

*ՀՀ ՊԿ ակադեմիա,
իրավագիտության թեկնածու, դոցենտ*

ԲԱՆԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՎԱՐԳԸ

1. Բանկային գործունեությունը, բանկային գործառնություններն որպես բանկային իրավունքի կարգավորման առարկա

Բանկային իրավունքը, որպես իրավունքի ճյուղ ՀՀ իրավունքի համակարգում, առանձնանում է իր ինքնուրույն կարգավորման առարկայով և կարգավորման մեթոդով:

Լայն առումով բանկային գործունեություն հասկացության մեջ կարելի է ընդգրկել այն ամենը, ինչ որ անում են բանկերը և հետևաբար բոլոր այն հարաբերությունները, որոնք առաջանում են վերջիններիս մասնակցությամբ և այդ ամենը համարել բանկային իրավունքի կարգավորման առարկա: Սակայն նման մոտեցումը ճիշտ չի կարելի համարել թեև այն պատճառով, որ բանկերը, որպես իրավաբանական անձինք, կատարում են տարբեր տեսակի գործառնություններ, որոնք անմիջական կապ չունեն բանկային գործունեության հետ (ներկազմակերպական, կառավարչական, աշխատանքային և այլն): Բանկային գործունեությունը պետք է սահմանել նախ և առաջ ելնելով սոցիալ-տնտեսական կյանքի այս կամ այն ոլորտից կամ այն հասարակական հարաբերություններից, որոնք ենթակա են կարգավորման բանկային իրավունքի նորմերով: Բանկային գործունեություն կարելի է համարել այն, երբ բանկերը և վարկային մյուս մարմիններն կատարում են այս կամ այն գործառնություններն օգտագործելով այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են՝ փողը, արժեթղթերը, և արժույթային արժեքները [1, էջ 5]:

Բանկային գործունեության մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ փողը կատարում է՝ ա) վճարման, բ) խնայողության և գ) ապրանքի (վարկի) գործառնույթ և ոչ մի դեպքում արժեքի չափորոշիչ: Փող հասկացությունն իր մեջ ընդգրկում է ինչպես կանխիկ փողը՝ թղթադրամ և մետաղադրամ, այլև անկանխիկ դրամը:

Լ. Եֆիմովան գտնում է, որ անհմաստ է փողը դիտել միայն քաղաքացիական իրավունքի տեսանկյունից, քանի որ այն հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսության հիմքը և դրամաշրջանառությունն ամբողջովին վերցրած ավելի շուտ կարգավորվում է հանրային-իրա-

վական, քան մասնավոր շահերի դիրքերից, չնայած վերջինս անշուշտ պետք է հաշվի առնվի [1, էջ 12]:

Արժեթղթերը, որպես բանկային գործունեության օբյեկտ, պետք է փողային արտահայտություն, կոորպորատիվ կամ հաշվարկային բնույթ ունենան, այլ ոչ թե ապրանքային դրսևորում, որոշակի նվազագույն շրջանառությամբ:

Բանկային գործունեությունը կարելի է ներկայացնել, որպես հատուկ սուբյեկտների գործունեության ամբողջություն, որը փողի, արժեթղթերի և արժուքային արժեքների հետ կապված իրականացվում է նրանց՝ բանկային միասնական համակարգի մասնակիցների կողմից: Այն իրենից ներկայացնում է մշտապես իրագործվող գործարքների և գործառնությունների համակարգ, որն նպատակաուղղված է շահ ստանալուն:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ 1996 թ. հունիսի 30-ի օրենքի 4-րդ հոդվածի համաձայն բանկային գործունեություն է համարվում հետևյալ գործառնությունների ամբողջությունը՝ 1) ավանդներ ընդունելը կամ դրանք ընդունելու առաջարկով հանդես գալը, 2) ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը (վարկեր ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու, ներդրումներ կատարելու միջոցով): Այն պարտադիր լիցենզավորման ենթակա գործունեություն է:

Ռուսաստանի Դաշնության «Բանկային գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն բանկային գործառնություններ կարելի է համարել՝

1. իրավաբանական և ֆիզիկական անձանց դրամական միջոցների ներգրավումն ավանդներում,

2. ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բանկային հաշիվների բացումը,

3. հաշվարկների իրականացումը ֆիզիկական և իրավաբանական անձանց հանձնարարությամբ, նրանց սպասարկումը,

4. դրամական միջոցների, մուրհակների, վճարման և հաշվարկային փաստաթղթերի ինկասացիան և դրանց դրամարկղային սպասարկումը,

5. օտարերկրյա արժույթի գնումը և վաճառքը կանխիկ և անկանխիկ ձևով, թանկարժեք մետաղների ավանդների ընդունումը և տեղաբաշխումը,

6. բանկային երաշխիքների տրամադրումը:

Բանկային գործունեությունը ձեռնարկատիրական գործունեության տեսակ է և ունի հետևյալ առանձնահատկությունները՝

▪ շրջանառությունից շահ ստանալը ոչ միայն սեփական, այլև ներգրավված միջոցները ռիսկի ենթարկելու միջոցով,

▪ ֆինանսական գործիքների շրջանառությունից շահ ստանալը, որոնք միաժամանակ հանդիսանում են պետության գոյության և նրա ինքնիշխանության ապահովման պայմանը,

▪ առաջին երկու առանձնահատկություններով պայմանավորված ձեռնարկատրական գործունեության այդ տեսակի պետական լիարժեք և մանրամասն կարգավորումը, որն առաջին հերթին ապահովում է հանրային շահերը, իսկ այնուհետև մասնավոր շահերի հաշվեկշիռը:

Բանկային գործունեությունը, որպես ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակ, ենթակա է հարկման հատուկ կանոններով: Բացի այդ տվյալ ձեռնարկատիրական գործունեությունում ներգրավված են այլ սուբյեկտների միջոցներ և այդ պատճառով պետությունը սահմանում է կոշտ տնտեսական նորմատիվներ, որոնք ապահովում են ինչպես որոշակի սուբյեկտների, այնպես էլ ողջ բանկային համակարգի և պետության շահերը:

Բանկային գործունեությունում առանձնանում են մի շարք իրավական ռեժիմներ: Ռեժիմի տակ հասկացվում է բանկային գործառնությունների և գործարքների իրականացման կարգը և սահմանված կանոնների չպահպանման հետևանքները: Ռեժիմային առաջին պահանջը բանկային գործունեության լիցենզավորումն է: Լիցենզիան տրվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Լիցենզան տրվում է առևտրային բանկի ստեղծման համար և օրենքով սահմանված դեպքերում բանկային առանձին գործառնությունների համար (օրինակ՝ արժույթային գործառնությունների համար):

Ա. Գ. Բրատկոն իր «Բանկային իրավունք» ուսումնական ձեռնարկում նշում է, որ բանկային գործունեության հասկացությունը սահմանվում է նրա էական հատկանիշներով և տարրերով: Դրանք են՝ առարկան, նպատակները, սուբյեկտները, բանկային գործունեության բովանդակությունը և իրավական կարգավորումը [2, էջ 23]:

2. Բանկային իրավահարաբերությունների էությունը և տեսակները

Բանկային իրավահարաբերություններն իրավահարաբերությունների այն տեսակն են, որոնք առաջանում են բանկային գործունեության բնագավառում և կարգավորվում են բանկային իրավունքի նորմերով: Դրանք բնորոշ են հետևյալ հատկանիշները՝

1. հատուկ սուբյեկտի՝ բանկի առկայությունը.

2. հատուկ օբյեկտի՝ ֆինանսական գործիքների առկայությունը.

3. պետության դրամավարկային քաղաքականության միջնորդավորումը բանկային իրավահարաբերությունների միջոցով, որը նշանակում է կողմերի ազատ կամահայտության բացակայությունն իրավահարաբերությունների ձևերի և դրանց իրացման կանոնների որոշման ժամանակ, ինչպես նաև պետության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն այդ իրավահարաբերություններում: Օ. Օլեյնիկի կարծիքով բանկային իրավահարաբերությունները հանրային և մասնավոր

իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ են, որոնք առաջանում են բանկային գործունեության ընթացքում [3, էջ 13]: Գ.Թոսունյանի, Ա. Վիկուլինի և Ա. Էկմալյանի տեսանկյունից բանկային իրավահարաբերություններն ունեն իրենց յուրահատուկ գծերը: Առաջին յուրահատկությունն այն է, որ դրանք ծագում են բանկային գործունեության ընթացքում, երկրորդն այն է, որ բանկային իրավահարաբերությունները կարգավորվում են հատուկ բանկային օրենսդրությամբ, երրորդ՝ բանկային իրավահարաբերություններն առավելապես խառը բնույթ են կրում՝ միաժամանակ թե հանրային-իրավական և մասնավոր իրավական, չորրորդ՝ բանկային իրավահարաբերությունները ծագում են դրամական միջոցների առկայությամբ, հինգերորդ՝ բանկային հարաբերությունների կողմերից մեկը միշտ էլ հանդիսանում է Կետրոնական բանկը կամ վարկային կազմակերպությունը [4, էջ 23-29]:

Բանկային իրավահարաբերությունները կարելի է բաժանել ելնելով տարբեր հիմքերից:

Ըստ սուբյեկտների՝ բանկային իրավահարաբերությունները կարելի է բաժանել՝

1. բանկի և հաճախորդների միջև,
2. երկու առևտրային բանկերի միջև բանկային գործառնությունների իրականացման կապակցությամբ,
3. բանկերի և միությունների, ասոցիացիաների և այլ ածանցյալ կազմավորումների միջև՝ անդամության իրավահարաբերություններ,
4. Կենտրոնական բանկի և կառավարության միջև՝ փոխադարձ ներկայացուցչական հարաբերություններ,
5. Կենտրոնական բանկի և Ազգային ժողովի միջև՝ հաշվետվություններ և նշանակումներ:

Ըստ բանկային գործառնությունների բնույթի այդ իրավահարաբերությունները լինում են՝

1. Պասիվ բանկային գործառնություններ, որտեղ բանկը հանդես է գալիս որպես պարտապան՝ բանկային ավանդի, բանկային հաշվի ինստիտուտներ, արժեթղթերի թողարկում,
2. բանկային ակտիվ գործառնություններ՝ վարկային, դրամական պահանջի զիջման պայմանագրեր,
3. միջնորդ բանկային գործառնություններ՝ հաշվարկային հարաբերություններ,
4. օժանդակ բանկային գործառնություններ՝ տեղեկատվական և այլ ծառայությունների մատուցման իրավահարաբերություններ:

Ըստ իրավահարաբերությունների բովանդակության՝ դրանք կարելի է դասակարգել՝

1. գույքային՝ կապված դրամական միջոցների, որպես գույքի տարատեսակի հետ,

2. ոչ գույքային՝ կապված բանկային գաղտնիքի ռեժիմի ապահովման, այս կամ այն անվանումների օգտագործման, բանկի համբավի պաշտպանության և այլնի հետ,

3. կազմակերպական կապված բանկի ներկազմակերպական կառուցվածքի և ամբողջությամբ վերցրած բանկային համակարգի հետ:

Բանկային իրավահարաբերությունների առաջացման հիմք կարող են հանդիսանալ՝

1. օրենքի նորմը՝ օրինակ պետության դրամավարկային քաղաքականությունն իրականացնելիս,

2. վարչական ակտը՝ օրինակ լիցենզիան տրամադրելիս, պայմանագիրը կամ միակողմ գործարքը:

3. Բանկային իրավունքի կարգավորման մեթոդը

Իրավունքի որոշակի ճյուղի նորմերի կողմից կարգավորվող հարաբերությունների առանձնահատկություններն առաջացնում են որոշակի մեթոդի կիրառման անհրաժեշտություն, որը յուրաքանչյուր ճյուղի համար առանձնահատուկ է:

Իրավական կարգավորման մեթոդի տակ իրավունքի տեսությունում սովորաբար հասկացվում է իրավական կարգավորման եղանակների և միջոցների համակցությունը, որոնք պայմանավորված են իրավական կարգավորման առարկայի օրինաչափություններով և կիրառվում են իրավունքի առանձին ճյուղում: Այն բաղկացած է երեք հիմնական տարրից՝

ա) իրավունքների և պարտականությունների առաջացման հիմքերը և դրանց փոխհարաբերությունների բնույթը,

բ) իրավունքների և պարտականությունների բովանդակության ձևավորման եղանակը,

գ) տուժամիջոցների (սանկցիաների) բնույթը, ինչպես նաև դրանց կիրառման եղանակները և ընթացակարգը:

Ա.Բրատկոյի տեսանկյունից բանկային իրավունքի կարգավորման մեթոդը իրամայական, իշխանանության-ենթակայության մեթոդն է [2, էջ 30] և հետևաբար դրանով կարգավորվող հարաբերությունները հանրային բնույթի իրավահարաբերություններ են: Մեր կարծիքով բանկային գործունեության բնագավառում առաջանում են թե՛ հանրային և թե՛ մասնավոր իրավահարաբերություններ: Իսկ բանկային իրավունքի կարգավորման առարկան հանրային բնույթի բանկային իրավահարաբերություններն են: Հետևաբար այս առումով բանկային իրավահարաբերության սուբյեկտներն են՝ ՀՀ Կենտրոնական բանկը, որպես պետաիշխանական լիազորություններով օժտված մարմին և առևտրային բանկերը: Իրավաբանական անձ հանդիսացող առևտրային բանկերը կամավոր ներգրավվում են դրամավարկային հարաբերությունների մեջ, որը ներկայացված է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ղեկավարվող բանկային համակարգով: Բանկային իրավահարա-

բերությունների առանձնահատկությունը շատ բանով կախված է դրամավարկային հարաբերությունների յուրահատկությունից: Մի կողմից բոլոր առևտրային բանկերը մասնավոր իրավահարաբերությունների սուբյեկտներ են, մյուս կողմից նրանք մտնում են հանրային-իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների մեջ: Բանկային ներհամակարգային հարաբերություններն ուղղահայաց բնույթ ունեն: Դրանց հիմքը դետերմինացիան է, իսկ քաղաքացիաիրավական հարաբերությունները՝ հորիզոնական բնույթ ունեն:

Ըստ բովանդակության իրավական կարգավորման եղանակը կարող է լինել դիսպոզիտիվ (եթե կողմերը պայմանավորվում են իրավունքի թույլատրելիության շրջանակներում իրավունքների և պարտականությունների մասին) կամ հրամայական (իմպերատիվ) (հարաբերություններ, որոնք կարգավորվում են միայն իրավունքի նորմերով): Առաջին դեպքում առկա է մասնավոր իրավունքի կարգավորման մեթոդը, որն հիմնվում է կողմերի իրավահավասարության վրա, իսկ երկրորդ դեպքում՝ հանրային իրավունքի մեթոդը, որին բնորոշ է իշխանության և ենթակայության հարաբերությունները: Բավական վիճելի է իրավաբանական գրականությունում իրավունքի մեթոդների քանակի հարցը: Իրավագետների մի մասը գտնում է, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղին բնորոշ է իրավական կարգավորման միայն մեկ մեթոդ [5], մյուսները գտնում են, որ դրանք մի քանիսն են [6, էջ 178], երրորդները գտնում են, որ մեթոդն ունի ունիվերսալ, վերճյուղային բնույթ [7, էջ 186]: Սեր կարծիքով առավել ընդունելի է վերջին տեսակետը: Հանրային իրավունքի մեթոդը բնորոշ է հանրային իրավունքի բոլոր ճյուղերին:

Իրավական գրականությունում հանրային իրավական մեթոդն անվանում են հրամայական, իշխանական մեթոդ: Այն կառուցված է հարաբերությունների մասնակիցների վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա:

5. ՀՀ բանկային իրավունքի տեղն ազգային իրավունքի համակարգում:

Իրավաբանական գրականությունում, ինչպես վերը համառոտ քննարկել ենք, առկա է երկու մոտեցում բանկային իրավունքի առնչությամբ: Հեղինակների մի մասն այն դիտարկում է, որպես իրավունքի համալիր ճյուղ: Նման մոտեցումը հիմնականում գերակշռում են ՌԴ-ի իրավաբան գիտնականների մոտ: Արևմտյան գիտնականները գտնում են, որ բանկային իրավունքը հանրային իրավունքի ինքնուրույն ճյուղ է : Կ. Գավալդան և Ժ. Ստուֆֆլեն գտնում են, որ բանկային իրավունքի կարգավորման առարկան բանկերի իրավական վիճակի որոշումն է [8, էջ 9]: Ամերիկացի իրավաբանները գտնում են, որ բանկային իրավունքը շատ բազմակողմանի տերմին է: Այն ներառում է բանկերի ոչ միայն կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքները, այլև այն նորմերի համակցությունը, որոնք կարգավորում են ֆինանսական և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը [9, էջ 5]:

Լ. Եֆիմովայի կարծիքով բանկային իրավունքն ոչ թե իրավունքի ինքնուրույն ճյուղ է, այլ ենթաճյուղ, քանի որ չունի իրեն հատուկ կարգավորման առարկա և մեթոդ [1, էջ 4]: Ռ. Քոլսը գտնում է, որ «Բանկային իրավունքը գոյություն ունի որպես հանրային և մասնավոր իրավունք... Հանրային բանկային իրավունքը ներառում է բանկային գործի հսկողությունը և նրա կազմակերպումը: ...Մասնավոր բանկային իրավունքը՝ բանկային գործարքների և պայմանագրերի իրավունքը» [10, էջ 11]: Սակայն մեր կարծիքով նշվածն առավելապես վերաբերում է բանկային իրավունք դասընթացին, այլ ոչ թե իրավունքին: Անհրաժեշտ է նշել, որ հանրային իրավունքի ճյուղերի կարգավորման հիմնական մեթոդը՝ նորմատիվ-կարգավորիչ, հրամայական մեթոդն է: Իսկ ինչ վերաբերում է կարգավորման առարկային, ապա շատ բան կախված է նրա սուբյեկտների սահմանափակ շրջանակից և բանկային իրավահարաբերությունների դրամավարկային բնույթով պայմանավորված առանձնահատկություններից: Բանկային իրավունքը, որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ, իրենից ներկայացնում է այնպիսի նորմերի համակցություն, որոնք կարգավորում են ՀՀ բանկային համակարգի կազմավորման, գործունեության և զարգացման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները, այդ թվում նաև Հայաստանի բանկի և պետական իշխանության այլ մարմինների կողմից:

Կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի բանկային իրավունքի ներքին կառուցվածքի որոշումը: Այն ներառում է երեք մակարդակ՝

ա) բանկային իրավունքի ինստիտուտներ,

բ) բանկային իրավունքի նորմեր:

Բանկային իրավունքի ինստիտուտը՝ իրավական նորմերի ենթահամակարգ է, որը կարգավորում է բանկային գործունեության բնագավառում առաջացող փոխադարձորեն իրար հետ կապված հարաբերությունների որոշակի տեսակ: Այն բաղկացած է այնպիսի ինստիտուտներից ինչպիսիք են բանկային համակարգը, ՀՀ կենտրոնական բանկի կարգավիճակը, պրուդենցիոնալ կարգավորում, պրուդենցիոնալ հսկողություն, բանկերում հաշվապահական հաշվառման իրականացման իրավական կարգավորում, բանկային հաշվի բացումը և վարում, հաշվարկներ, դրամարկղային գործառնություններ, արժույթային գործառնություններ, արժույթային վերահսկողություն, բանկային ավանդների, վարկերի, թանկարժեք մետաղների հետ կապված գործառնություններ և այլն:

Այսպիսով, բանկային իրավունքը, որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ իրենից ներկայացնում է այնպիսի նորմերի համակցություն, որոնք կարգավորում են ՀՀ բանկային համակարգի կազմավորման, գործունեության և զարգացման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները, այդ թվում նաև Հայաստանի բանկի և պետական իշխանության այլ մարմինների կողմից: Այդ

հարաբերությունները կրում են հանրային-իշխանական բնույթ, ներկայացնում են հանրային իրավական շահը և կարգավորվում են հրամայական կարգավորման մեթոդով: Բանկային իրավունքի դասընթացն ավելի լայն հասկացություն է քան բանկային իրավունքը և ներառում է ինչպես բանկային գործունեության կարգավորումը և բանկային վերահսկողությունը, այնպես էլ բանկային գործարքների և պայմանագրերի իրավունքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ефимова А.Г.*, Банковское право, М., 1994.
2. *Братко А.Г.*, Банковское право, Теория и практика, М. 2000.
3. *Олейник О.М.* „Основы банковского права“, М., Юристъ, 1977.
4. *Тосунян Г.А., Викулин А.Ю, Экмяян А.М.*, Банковское право РФ. Общая часть.
5. *Чхиквадзе В.М, Ямпольская Ц. А.*, О системе советского права, // Сов. гос. и право 1967, N 9.
6. *Алексеев С.С.*, Структура Советского права, М., 1975.
7. *Райхер В.К.* Общественно- исторические типы страхования, М., 1947.
8. *Гавальда К., Стуфле Ж.*, Банковское право, М., 1996.
9. *Поллард А. М., Пассейк Ж.Г., Эллис К.Х., Дейли Ж.П.*, Банковское право США. М., 1992.
10. *Kohls R.*, “Bankrecht”.

SAMVEL MURADYAN

Doctor of Law, associate professor

CONCEPTION AND SYSTEM OF BANKING LAW

The banking law as a branch of the law system of the RA have its own subject and method of regulation.

The banking law relations are the form of the law relations, which have arisen from banking activities and are regulated by the norms of banking law. It has the following typical features:

1. presence of special subject- the bank,
2. presence of special object-the finance instruments. They have an indirectly influence with the help of banking law relations on monetary and credit policy of government.

In theory of law under the method of regulation usually comprehended the whole means and methods, conditioned by the rules of subject of regulation and are using in separate branch of law of the law system of the RA.

The banking law as separate branch of the law system of the RA is a totality of law norms, which are regulated the public relations which have arisen during banking activities, organization and development of the banking system of the RA. This relations have a public- authority features, represent public interests and are regulated by the imperative regulating method.

The educational program of banking law is larger than the banking law as separate branch of the law. It includes the banking regulation and supervision and the banking operations and contracts.

СЕРГЕЙ ПЕЛИХ

*Заведующий кафедрой государственного
регулирувания экономики Академия управления
при Президенте Республики Беларусь,
д.э.н., профессор*

СЕРГЕЙ ДЕМКОВ

*Соискатель Академии управления при
Президенте Республики Беларусь*

СИСТЕМНЫЙ ПОДХОД К ФОРМИРОВАНИЮ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ СФЕРЫ ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКИХ СТРАН

В статье рассматривается применение системного подхода к монетарным факторам развития переходной экономики. Рассматривается практика денежно-кредитной сферы развитых стран Запада, США, Китая, стран Центральной и Восточной Европы. Рассматривается ситуация в денежно-кредитной сфере стран СНГ. Прежде всего в России, Украине, Белоруссии. В результате сравнения динамики монетарных факторов различных стран делаются выводы о путях развития этих факторов.

В истории, неизменно прослеживается тесная связь между процветанием государства, будь то Испания, Голландия, Франция, Англия и блестяще организованным денежно-кредитным обращением. Отсутствие инфляции, твердый курс национальной валюты по паритету покупательной способности, высокая монетизация народного хозяйства, низкий процент за кредит (не более 3 % годовых) обязательные атрибуты денежно-кредитной сферы этих государств. Этому способствовал золотой паритет, который позволял четко определять курс валют и другие показатели экономики. С отходом от золотого паритета в начале XX века началась эпоха нестабильности, кризисов. Великая депрессия в начале века в Америке показала ведущую, возросшую роль монетарных факторов в индустриальной экономике. Известно, что президент США Рузвельт обеспечил выход из кризиса 1929-1932 г.г. тем, что принял программу монетарной политики, в центре которой была ипотека. Л. Ерхард поднял экономику послевоенной Германии, начав с реформы денежно-кредитной сферы. Процветающей страной Швецию сделала Стокгольмская экономи-

ческая школа, так как главный ее представитель Г. Кассель научно обосновал и сумел внедрить в общественное сознание примат валютной политики в экономической жизни страны.

Когда грянули перемены в социалистическом лагере, то процессы трансформации пошли разными путями и с разной скоростью, которые объясняются опять таки монетарными факторами.

Если рассмотреть практику переходных экономик и перестройку постсоциалистических экономик, то видна большая дифференция в их результатах. По производству ВВП (валового внутреннего продукта) на душу населения образовались 4 группы. Первую группу составляет Словения, Венгрия, Чехия, Словакия, где ВВП на душу населения составляет 10 000 дол. США в год. Вторая группа включает страны Балтии, Болгарию, Польшу, Сербию и другие, которые готовятся к вступлению в ЕС.

Третью группу составляют Украина, Россия, Беларусь которые должны готовиться, по сценарию Запада, к роли сырьевых придатков Европы и США.

Четвертая группа включает постсоциалистические страны Востока – Таджикистан, Узбекистан, Киргизия и т.д. В этой группе производство ВВП на жителя составляет меньше 1000 дол. США в год.

Уместно задаться вопросом, почему при близких стартовых условиях европейские постсоциалистические страны с разной скоростью и с различными результатами трансформируют свои экономики.

Известные экономисты Дж. Кейнс, Г. Кассель, Л. Ерхард, В. Ойкен, А. Морита, М. Фридмен за каждым из которых, помимо оригинальных теоретических разработок, стоят блестящие практические достижения, однозначно утверждают «примат монетарной политики» перед всеми остальными факторами, способствующими экономическому росту экономики.

Главными параметрами монетарной сферы, которые определяют экономическое развитие, являются следующие:

Во-первых, это степень перевода вещественного национального богатства в удобную денежную форму, годную для использования в виде инвестиций, прежде всего. Обычно 90% инвестиций в экономику являются внутренними и определяющими весь ход воспроизводственного процесса. Остальные, внешние инвестиции нужны исключительно для покупки новейших технологий и изобретений. Все остальные иностранные займы, например, для выплаты зарплаты и пенсий, как это было в России, являются расточительными и ненужными. Кроме того, неплатежи в экономике есть следствие нехватки денег в обороте, что является тормозом народнохозяйственного развития. Обоснованное предложение денег делает их доступными (3-5% годовых) и не обременительными для объектов хозяйствования.

Этот важнейший показатель определяется коэффициентом монетизации экономики (отношение объема денежной массы в стране к ее ВВП за год) и объемом ресурсной базы банковской системы относительно ВВП. Это понятно, так как если ВВП – это объем товаров и услуг, произведенных нацией в течение года, то и денег должно быть столько же по сумме в стране.

Во всех развитых странах коэффициент монетизации равен 1,3-1,5 и объем ресурсов банковской сферы на 20-30% больше ВВП.

Пассивы банковской системы США и Германии относительно ВВП, %

Годы/государство	1995	1996	1997	1998	1999	2000	2003
США (включая всех институц. инвесторов)	214	221	229	238	245	255	267
Германия	223	235	244	252	275	290	305

Все это является следствием длительных усилий правительств развитых стран в продуманной трансформации своих экономик к достижению единственной цели, представить все национальные богатства в удобной для инвестиций денежной форме. Например, Японии понадобилось 25 лет после Второй мировой войны, что восстановить свой финансовый потенциал, а потом и промышленный. Для этого были созданы так называемые институциональные инвесторы: пенсионные фонды, страховые компании, трастовые компании, различные коллективные инвестиционные фонды и т.д. Очевидно, что все постсоциалистические страны стремятся достичь в денежно-кредитной сфере показателей развитых стран. Трансформация осуществляется с различной скоростью. Первая группа стран имеет монетизацию экономики в пределах 100% ВВП, вторая группа – 80-85%. Россия, Украина и Беларусь, к сожалению, пока имеют более скромные показатели – 15-25% ВВП. Поэтому банковская система наших стран имеет скромные ресурсные возможности для инвестиций, и ожидать интенсивного экономического роста не приходится.

Пассивы банковской системы Беларусь, России и Украины к ВВП, %

Годы/страны	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2003
Беларусь	13,0	13,0	30,0	35,0	37,0	32,2	35,0	37,0
Россия	30,0	28,0	38,0	38,9	34,9	34,0	30,0	34,0
Украина	37,0	46,0	66,0	-	-	-	34,0	37,5

Из таблицы видно, что банковская и кредитная системы наших стран имеют ресурсную базу около 30% от потребной. Очевидно, что большая

часть национального богатства этих стран не вовлечена в финансовый оборот. Стоимость земли никак не представлена в ресурсах банковской системы, она обычно составляет 50-60% банковских ресурсов. Точно также не представлены наши основные фонды, жилье, недра и многие другие материальные ресурсы, которые представлены в развитых странах как инвестиционные средства в удобной денежной форме. Поэтому в ближайшее время надо внедрять ипотеку, посредством которой будет достигнут значительный сдвиг в монетизации экономики, создавать фондовый рынок и институциональных инвесторов. Например, ипотека даст Белоруссии около 30 млрд. евро в ресурсную базу банковской системы к 2 млрд. евро имеющихся сейчас. Президент России Путин В.В. провозгласил внедрение ипотеки единственным пунктом своей второй предвыборной программы, которая выступит локомотивом устойчивого экономического роста России. Объемы выданных ипотечных кредитов составляют сегодня в России 0,5 млрд. дол., в то время как в США более 40 млрд. дол., а в Европе – более 30 млрд. дол.

По ипотечным схемам в России приобретается всего 1,5% жилья, тогда как в развитых странах – около 90%. Общая оценочная емкость ипотечного рынка – около 100 млрд. дол. при среднем размере кредита в 20 тыс. дол. Такие же пропорции имеются на Украине и в Белоруссии.

Во-вторых, это уровень инфляции в стране, который не должен превышать 1-2% в год. Л. Ерхард говорил, что если инфляция выше, то невозможно вести нормальную, предсказуемую экономическую деятельность. Для стран с переходной экономикой это особо острая проблема, так как начинают трансформацию они обычно с уровня цен ниже мировых. Этот уровень обычно равен отклонению курса национальной валюты от паритета покупательной способности (ППС). Для стран с переходной экономикой валютный курс к дол. США в начале занижается на 25-50%. В Росси и Белоруссии разительное отличие в несколько раз.

Динамика валютного курса и ППС по Республике Беларусь

Год	Валютный курс (НБ РБ)	ППС (бел.руб. к дол. США)	Валютный курс/ППС
1990	0,77	0,75	1,03
1992	97,4	16,4	5,94
1993	2490,7	190,82	13,05
1994	3589,76	406,15	8,84
1996	13279,0	3462,0	3,83
1998	46557,6	10167,	4,57
2000	715,8	116,58	6,01
2004	2170,0	450	4,82

Заниженный незначительно валютный курс национальной валюты в начале трансформации имеет на 1-2 года позитивное влияние на экспортно

–ориентированные отрасли, но в то же время, имеет отрицательное влияние на экономику, в силу, значительных потерь во внешнеэкономическом обмене товарами и услугами, особенно в такой открытой географически экономике как белорусская. Поэтому все страны Центральной и Восточной Европы в настоящее время привели в соответствие валютные курсы к ППС, чем значительно усилили свой экономический рост. Применяв системный подход к управлению денежно-кредитной сферой, взяв за основу Маастрихтские соглашения и рекомендации, они практически обуздали инфляцию.

Инфляция в странах Центральной и Восточной Европы в 1994-2003 гг (в процентах к предыдущему году)

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Литва	45,1	35,7	13,1	8,4	2,4	0,3	1,4	2	-1	-1,2
Латвия	-	23,1	13,1	7	2,8	3,2	1,8	3,2	1,4	1,3
Эстония	47,7	29	23,1	11,2	8,2	3,3	4	5,8	2,7	2,9
Венгрия	-	28,3	19,8	18,4	10,3	11,2	10,1	6,8	4,8	5,6
Чехия	-	-	-	10,0	6,8	2,5	4,0	4,1	-	1,0
որը 1991 թ. լուծարվեց: 1992-ից ՀՀ Էկոնոմիկայի, իսկ 1997-ից ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություններում ճյուղերի արտաքին տնտեսական կապերի համադրումը հանձնարարված էին փոխնախարարների ենթակառույցներին: Վերջապես, ՀՀ Նախագահի 2000թ. մարտի 31-ի հրամանագրի համաձայն հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգումը միաժամանակ իրականացնում է արտաքին քաղաքական գերատեսչությունը՝ ՀՀ արտգործնախարարությունը որպես գլխադասային մարմին: Արտաքին տնտեսական գործունեության վարչություններ և բաժիններ գործում են ոչ միայն տարբեր նախարարություններում, այլ նաև մինչև կառույցի ներսում (օրինակ՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում):

Ներկայումս պետական կառույցների ներսում նկատվում են կրկնողություններ ինչպես գործառույթային, այնպես էլ կազմակերպչական ու կադրային առումներով: Չնայած գոյություն ունեցող օղակների, չկա արդյունավետ գործող, հանրապետության արտաքին տնտեսական կապերը համադրող, դրանք սպասարկող և օժանդակող կենտրոնացված կառույց: Մինչև օրս ՀՀ կառավարությունը չունի հանրապետության արտաքին տնտեսական գործունեության հստակ քաղաքականություն, չի ընդունել ոլորտի զարգացման հայեցակարգ, չկան համակարգված աշխատանքի հստակ ձևակերպված առաջնահերթություններ: Գոյություն չունի անգամ արտաքին տնտեսական կապերի զարգացման հայեցակետ: Այս ամենն իր բացասական ազդեցությունն ունի հանրապետության արտաքին առևտրի ընդհանուր միտումների վրա: 1993 - 2004թթ. զգալիորեն ավելացել է տարբեր ապրանքների և ծառայությունների ներմուծումը՝ 254,2 մլն ԱՄՆ դոլարից (1993թ.) հասնելով 1,351 մլրդ ԱՄՆ դոլարի (2004թ.), մինչդեռ արտահանման ծավալներն ավելացել են անհամեմատ ավելի քիչ՝ 156,2 մլն ԱՄՆ դոլարից (1993թ.) հասնելով ընդամենը 715 մլն ԱՄՆ դոլարի(2004թ.): Այլ խոսքով, արտահանման աճի տեմպերը՝ 4,7 անգամ զգալիորեն զիջում են ներմուծման աճի տեմպերին՝ 5,4 անգամ, որի հետևանքով տեղի է ունենում արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական սալդոյի շեշտակի ավելացում: Ինչպես հետևում է գծանկար1-ից, այսօր ներմուծման ծավալները կրկնակի ավելի են արտահանման ծավալներից: Հայաստանի արտաքին առևտրի ծավալների (դրամական արտահայտությամբ) փոփոխությունները վերջին յոթ տարիներին ներկայացված են գծանկար 1-ում:

Ստեղծված պայմաններում, նպատակահարմար է ստեղծել այս ոլորտի աշխատանքների համադրմանն ու զարգացմանը կոչված պետական միասնական կառույց՝ հետևյալ հիմնավորումներով.

Գծանկար 1.

Հայաստանի արտաքին առևտուրը 1993 – 2005թթ.¹



Առաջարկվող պետական կառույցի ստեղծման անհրաժեշտությունը

- հստակորեն համադրելու արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող բոլոր կառույցների գործունեությունը և արդյունավետ կերպով համակարգելու ՀՀ արտաքին տնտեսական կապերը,
 - ձևավորելու ՀՀ արտաքին տնտեսական կապերի համապարփակ համակարգ,
 - վերացնելու անտեղի կրկնությունները պետական տարբեր օղակների կողմից,
 - մշակելու արհեստավարժ մոտեցում՝ արտաքին տնտեսական կապերի նկատմամբ:
 - Նման համակարգումը թույլ կտա ստանալ հետևյալ արդյունքները.
 - հավելյալ արդյունք՝ երկրի համեմատական առավելությունների բացահայտման և դրանց նպատակային օգտագործման շնորհիվ,
 - նոր աշխատատեղերի ստեղծում,

¹ 2005 թվականի տվյալները ներկայացված են կանխատեսումների հիման վրա՝ հաշվի առնելով 2004 թ. հունվար – դեկտեմբեր ամիսների ընդհանուր միտումները:

- պետական բյուջեի պակասորդի, արտաքին պարտքի կրճատում,
- դրամի իրական կայունացում,
- արտահանման կարողության հզորացում,
- տնտեսական, սոցիալական, քաղաքական կայուն զարգացում:

Նպատակներին հասնելու մարտավարությունը ենթադրում է

- արտաքին տնտեսական կապերի զարգացման պետական հաշվարկի և քաղաքականության մշակում,
- արտահանման ուղղվածության արտադրությունների ու ծառայությունների խթանում,
- ներքին ներդրումների խթանում, որն, իր հերթին կբերի արտաքին ներդրումների աշխուժացման,
- արտաքին առևտրի համակարգում,
- արտոնությունների, երաշխիքների և սահմանափակումների գծով համապատասխան օրենսդրական դաշտի մշակում,
- արտաքին տնտեսական կապերի դիտանցման (Monitoring) իրականացում,
- ներդրումային մարքեթինգի կազմակերպում,
- Հայաստանի և հայության մրցակցային առավելությունների արդյունավետ իրացում,
- շարունակական բնույթ կրող վերլուծությունների, ռազմավարական հետազոտությունների կազմակերպում,
- ՀՀ տարբեր օղակներում գոյություն ունեցող և տնտեսության տարբեր ճյուղերի արտաքին տնտեսական ծրագրերի համադրում,
- հորիզոնական համագործակցության անհրաժեշտ պետական աջակցություն,
- արտասահմանյան երկրների, միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքի և հարաբերությունների զարգացման որոշակի քաղաքականության մշակում և իրականացում,
- հայկական տարբեր կառույցների մեկուսի գործունեության ծրագրային համակարգում,
- արտահանման կարողությունը գովազդող առևտրային ցուցահանդեսների կազմակերպում ՀՀ-ում և արտերկրում,
- ամենամյա նպատակային գործարար համաժողովների անցկացում տարածաշրջանում և ռազմավարական դաշնակից երկրներում,
- պետական առևտրային միսիաների կազմակերպում՝ տնտեսության տարբեր ճյուղերի մրցունակության մակարդակն ապահովելու նպատակով,
- միջպետական պայմանագրերով մասնագետների փոխանակում,
- մերձավոր և հեռավոր արտերկրում ՀՀ սեփականաշնորհման ծրագրերի համակարգված մարքեթինգի իրականացում,

- ոլորտի զարգացմանը խոչընդոտող բյուրոկրատական ապարատի պարզեցում,
- համակարգի պետական ծառայողների հստակ գործառույթների և պարտականությունների սահմանում,
- արտաքին տնտեսական համակարգի յուրաքանչյուր աշխատանքից ակնկալվող արդյունքների և վարձատրության միջև ուղղակի կախվածություն սահմանում,
- պետական ծառայողների արտասահմանյան գործուղումների արդյունավետության բարձրացում,
- առևտրային կցորդների կրթում և նշանակումներ՝ ՀՀ դեսպանատներում,
- պետական կառույցին կից խորհրդատուների խորհրդի ձևավորում՝ ներգրավելով ՀՀ-ում և արտերկրում բնակվող առաջատար մասնագետների և գիտնականների:

Ի՞նչ միջոցներով, ինչպե՞ս

- կառույցի պետական ծառայողների (առավելագույնը՝ 33-35 մարդ) վարձատրությունը պետբյուջեում նախատեսել ի հաշիվ պետական այլ կառույցների արտաքին տնտեսական կապերի միմյանց գործառույթները կրկնող բաժինների ու վարչությունների ուժեղացած աշխատակազմերի կրճատման,
- կազմակերպել մասնագետների բաց մրցույթ և անաչառ ընտրություն,
- կառույցում պայմանագրային հիմունքներով աշխատանքի ընդունել մասնագետների, որոնց վարձատրությունը կտրվի երկրի արտահանման կարողության զարգացմանը նպաստող միջազգային ծրագրերից և դրամաշնորհներից ,
- պետական պատվերի շրջանակում ծրագրել նոր մասնագետների պատրաստում Հայաստանում և արտերկրում,
- արտաքին առևտրում արդյունավետ կերպով օգտագործել տարիֆային, ոչ տարիֆային կարգավորման կառուցակարգերը՝ հաշվի առնելով ԱՀԿ պահանջները և սահմանափակումների կիրառման պայմանները,
- իրականացնել արտաքին տնտեսական գործունեության որոշ ձևերի լիցենզավորում,
- նպաստել ներմուծման և արտահանման ասպարեզում ձևավորված մենաշնորհների վերացմանը և առողջ մրցակցության ծավալմանը,
- կազմակերպել ազգային կարևոր նշանակության ծրագրերի համակարգված լրբբինգ՝ ՀՀ-ում և արտերկրում,
- արդյունավետ օգտագործել Սփյուռքի ազգային, մշակութային, մասնագիտական կառույցների գործող ցանցը,

- արտահանման խթանման համար կազմակերպել EXPO ցուցահանդեսներ ԶՅ-ում,
 - առավելագույն մասնակցություն ապահովել՝ միջազգային առևտրային ցուցահանդեսներին,
 - օգտագործել առևտրաարդյունաբերական երկկողմ, բազմակողմ, տեղական և արտասահմանյան կառույցները,
 - համակարգված աշխատանքներ ծավալել ԶՅ դեսպանատների առևտրային կցորդների հետ,
 - արտաքին տնտեսական ծրագրերն իրականացնելիս օգտագործել ԶՅ-ում հավատարմագրված արտասահմանյան երկրների առևտրային բաժինների, միջազգային կազմակերպությունների, դրանց Հայաստանյան ներկայացուցչությունների ներուժը:
- Կառավարության անմիջական ղեկավարությամբ կարևոր է մշակել համակարգված ծրագիր՝ ԶՅ տնտեսական կարողությունը ներկայացնող պարբերական գործարար համաժողովներ անցկացնելու Հայաստանում և արտերկրում նպատակ ունենալով 1)առավելագույնս խթանելու տարածաշրջանային ծրագրերին և համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրումը, 2) ակտիվացնելու տնտեսական կապերն արտերկրի հայ և օտար գործարարների հետ, 3) բացահայտելու ԶՅ տնտեսության զարգացման նոր հնարավորությունները և աղբյուրները, 4) Սփյուռքի ավելի գործուն մասնակցությունն ապահովելու ԶՅ տնտեսական առաջընթացում, 5) ձևավորելու և զարգացնելու երկրի արտահանման կարողությունը:
- Հանրապետության արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգն, ընդհանուր առմամբ, կարող է հետևյալ տեսքն ունենալ.

<i>ԶՅ Նախագահ</i>
<i>ԶՅ կառավարություն</i>
<i>Արտաքին տնտեսական կապերի նախարարություն</i>
<i>Գործարարության աջակցման պետական խորհուրդ</i>
<i>Նախարարությունների արտաքին կապերի բաժիններ</i>
<i>Սփյուռքում գործող մասնագիտական և գործարար միություններ</i>
<i>Արտասահմանյան երկրների դեսպանատների առևտրային բաժիններ</i>
<i>ԶՅ-ում գործող միջազգային կազմակերպությունների գրասենյակներ</i>

Արտասահմանյան ընկերություններ

Առևտրաարդյունաբերական պալատ

Գործարարների, ձեռնարկատերերի, վաճառականների, այլ միություններ

Բարեգործական, մշակութային, մասնագիտական հիմնադրամներ

Ջարգացման հայկական գործակալություն

Խորհրդատվական ընկերություններ

Արտաքին տնտեսական կապերի կառավարման խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է որդեգրել ոչ ստանդարտ, նույնիսկ հավակնոտ ու դրական առումով ազդեցիվ տնտեսական քաղաքականություն: Հավակնոտ տնտեսական քաղաքականությունն, իր հերթին, ենթադրում է պայքար հաշտվողականության հետ, հավատ՝ մեծ ծրագրերի և դրանցից ակնկալվող արդյունքների նկատմամբ, ինչպես նաև դրանց իրագործման համար անհրաժեշտ միջոցների և մարտավարության ճիշտ ընտրություն: Հայաստանի համար նման նպատակներին միտված կարևոր քայլերից են ոչ միայն պետականորեն իրականացվող համագործակցությունը, արտասահմանյան երկրների հետ համատեղ ձեռնարկությունների հիմնումը, տեղական փոքր ձեռներեցության ծավալումը, այլև ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) ստեղծումը: Դրանց հիմնական **նպատակ պետք է դասվի** նպաստավոր պայմանների, գրավիչ դաշտի ձևավորումը տեղի և արտերկրի նյութական, տեխնոլոգիական և այլ բնույթի խոշոր ներդրումների համար, դրանք ծառայեցնելու տնտեսության արագընթաց զարգացմանը:¹ Ընդհանուր առմամբ, ԱՏԳ-երը կարելի է **դասակարգել** ըստ՝

- գործունեության բնույթի,
- ազգային և համաշխարհային շուկաներին ինտեգրման աստիճանի (արտահանման ուղղվածության, տեղում ինտեգրված),
- տարածքային - ճյուղային հատկանիշի (առևտրային, մաքսային և այլն):

ԱՏԳ-երը բնավ էլ նորույթ չեն համաշխարհային տնտեսության ներսում, իսկ Հայաստանում դրանց ձևավորմանն ուղղված առաջին քայլերն արվել են 1987-89թթ., երբ Մոսկվայում գործող Ժողովրդական տնտեսության ակադեմիայի, մասնավորապես, ակադեմիկոս Ա.Աղամ-

¹ ԱՏԳ անելով պետք է հասկանալ պետության ընդհանուր տարածքից առանձնացված մի հատված, որն ունի լիակատար ինքնուրույնություն՝ տնտեսական հարցերի լուծման մեջ, կառավարման հատուկ ռեժիմ, ազգային և միջազգային ընկերությունների տնտեսական գործունեության համար արտոնյալ պայմաններ:

բեկյանի գիտական խմբի հետ համագործակցաբար, ձևավորվեց նախաձեռնողական խումբ, որի աշխատանքների արդյունքները հավանության արժանացան ՀՀ օրվա իշխանությունների կողմից:

Հայաստանում ԱՏԳ ստեղծումը **պայմանավորված է** վերանշակման բարձր մակարդակի, որակյալ աշխատուժի (գիտատար) մասնակցությամբ թողարկվող արտադրանքի և տեխնոլոգիաների արտահանման զարգացման անհրաժեշտությամբ: ԱՏԳ կարող է դառնալ փորձարարական տարածք (դաշտ) հանրապետության մյուս տարածքի համար՝ աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակից դարձնելու նոր քաղաքականություն մշակելու և ներդրումներ ներգրավելու նպատակով: Հանրապետությունում ԱՏԳ ստեղծման **հիմնական խնդիրներ են**.

1. ՀՀ արտահանման կարողության ընդլայնումը,
2. ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացումը,
3. ներդրումների ներգրավմամբ տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և բնապահպանական հիմնահարցերի լուծումները,
4. աշխատանքի ներդրման երաշխավորված տեղերի ստեղծումը /այդ թվում ԱՏԳ-ից դուրս՝ կապված ԱՏԳ գործունեության հետ/,
5. քիչ պիտանի հողերի առավել արդյունավետ օգտագործումը,
6. տնտեսության համար բարձրորակ մասնագետների պատրաստումը,
7. ԱՏԳ օգտագործումը՝ որպես հարևան երկրների հետ տնտեսական համագործակցության ընդլայնման արագացման գործոն և երաշխիք:

Տեղի առանձնահատկություններից ելնելով՝ առավել **հեռանկարային է** ազատ մաքսային, արտահանման արտադրության, ինչպես նաև տնտեսատեխնոլոգիական զարգացման գոտիների՝ տեխնոպարկերի ձևավորումը:

Ներդրումային միջավայրի գրավչությունը Հայաստանում պայմանավորված է՝

- բարձրակարգ մասնագետներով և բարձրորակ աշխատուժով,
- աշխարհասփյուռ հայկական համայնքների հետ տնտեսական կապերով,
- ԱՊՀ շուկաներ ազատ մուտքով,
- ազգային կայուն արժույթով,
- առևտրի ազատական քաղաքականությամբ,
- զգալի թվով մարզերից մայրաքաղաքի, գործարար և հասարակական ակտիվության կենտրոնների մոտիկությամբ,
- տնտեսական և կառուցվածքային բարեփոխումներին ուղղված պետական օժանդակությամբ,
- ներդրումների ներհոսքին նպաստող օրենսդրությամբ,
- տնտեսության այնպիսի ճյուղերով, ինչպիսիք են՝ առաջավոր տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, մետալուրգիական, քիմիական,

թեթև, սննդի արտադրությունները, համակարգչային ծրագրավորումը, բանկային համակարգը, զբոսաշրջիկությունը:

Տեղի առանձնահատկություններից բխող հիմնական խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ԱՏԳ ստեղծման համար առանձնացնել հետևյալ տարածքները, վերջիններիս տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ բնույթի փաստարկներով և հիմնավորումներով:

ԱՏԳ ձևավորում Երևանի մարզում: Բացի օրվա հրամայական դասվելուց, այս ընտրությունը համապատասխանում է միջազգային ասպարեզում ընդունված դասակարգման երեք առանցքային տեսակներից մեկին (մաքսային գոտիներ, արտահանման արտադրության գոտիներ, տեխնոպարկ): Տնտեսական և քաղաքական առումով տվյալ մարզի ընտրությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է պատասխանել առնվազն երեք հարցադրման. *ինչու՞ տվյալ տարածքում, ինչպե՞ս և ի՞նչ արդյունքներ կարելի է ակնկալել*: Նախ, այսօր Երևանը գործարար աշխուժության առումով գերծանրաբեռ գոտում է հայտնվել, իսկ աղետի գոտում տնտեսության վարման համար տարրական միջոցներն անգամ բացակայում են: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ 1988թ. ավերվել է ՀՀ տնտեսության 42%-ը, որի մեծ մասը՝ Գյումրիում և հարակից բնակավայրերում: Մեր կողմից հաշվարկված է նաև, որ առաջարկվող տարածքում տնտեսության վերականգնման և զարգացման դեպքում կվերագործարկվի Հայաստանի արդյունաբերական կարողության մոտ 23-24%-ը, իսկ աշխատանքով կապահովվի երկրի գործազուրկ բնակչության 18%-ից ավելին: ԱՏԳ կարգավիճակը հնարավորություն կտա ներդրումներ ապահովել ավելի մեծ չափերով, քանի որ դրանք կազատվեն հարկային, մաքսային, այլ պարտականություններից, որոնք նախատեսված են ԱՏԳ-ից դուրս: Թեև այս առաջարկի հնարավոր ընդդիմախոսները կարող են պնդել, որ հարկերի և մաքսերի շատ տեսակներով չի համալրվի հանրապետության գանձարանը, այլ խոսքով՝ բյուջեի եկամուտների մասը, այսուհանդերձ, առավել կարևոր է, որ առաջին երկու-երեք տարիների ընթացքում գրեթե երեք անգամ կթեթևանա բյուջեի ծախսերի այն բացարձակ գումարը, որը նախատեսված է նույն տարածքում վերականգնողական, շինարարական աշխատանքների, սոցիալական տարբեր ծրագրերի իրագործման համար: Արդյունքում, հնարավոր կլինի ակնկալել հետևյալ արդյունքները.

- բնակչի նարարություն՝ ի հաշիվ ներքին և արտաքին ներդրումների,
- մարզկենտրոնը գյուղերին կապող ճանապարհների բարեկարգում,
- ենթակառուցյունների, ներառյալ հաղորդակցությունների, խմելու ջրի և ոռոգման համակարգերի վերակառուցում և զարգացում,
- լայն սպառման ապրանքների արտադրության ծավալների ավելացում աղետի գոտում, նախատեսելով նաև դրանց արտահանումը,
- սննդի և թեթև արդյունաբերության ենթաճյուղերի զարգացում,

- գյուղացիական տնտեսությունների զարգացում և մասնագիտացում,
- սովետային տնտեսության դիրքերի զգալի թուլացում՝ հարկային արտոնություններով ներքին ներդրումների խթանում,
- սոցիալական հիմնահարցերի աստիճանական հանգուցալուծումներ,
- արտագաղթի կասեցում, տեղաբնակ գործարարների ներհուք:
“Զվարթնոց” օդանավակայանի և հարակից օժանդակ տարածքների վերածումը ԱՏԳ-ի: “Ինչու”՞ հարցի պատասխանը պայմանավորված է այն նախադրյալների առկայությամբ, որոնք անհրաժեշտ են մաքսային գոտու տեխնիկատնտեսական հիմնավորման համար: Դրանցից են.
 - ժամանակակից պահանջները բավարարող բեռնատար նոր համալիրը,
 - ապամաքսեցում չանցած ապրանքների ժամանակավոր պահեստները,
 - մաքսային պահեստները և փոխադրման համալիրները,
 - տրանսպորտային և էկսպեդիցիոն ընկերությունները,
 - հավաքման և լրացուցիչ վերամշակման արտադրությունները,
 - տեսակավորման և փաթեթավորման արտադրությունները,
 - ներմուծումը փոխարինելով արտադրությունները,
 - արտահանման ուղղվածության արտադրությունները,
 - գիտատեխնիկական, պաշտպանական ոլորտի արտադրությունները,
 - ավիացիոն-տեխնոլոգիական սարքավորումների, թռիչքային գոտիների, սպասարկման հետ կապված արտադրությունները,
 - հաղորդակցությունների և կապի արտադրությունները,
 - էլեկտրոնիկայի հավաքման և սպասարկման արտադրությունները,
 - ավիացիայի և արագ սննդի սպասքի արտադրությունները,
 - տարաների, փաթեթավորման, կարի արտադրությունները:Ամերիկյան BHC և տեղի շինարարական կազմակերպությունների ջանքերով ստեղծված տեխնիկական պայմաններն այսօր տեսակահից գործնականի կարող են վերածել երկրի բարենպաստ դիրքից՝ առևտրական խաչմերուկից օգուտներ քաղելու հնարավորությունները: Մյուս կողմից, պետության կողմից ընձեռնվող մաքսային արտոնությունները դեպի Հայաստան կուղղեն բեռնափոխադրումների, ուղևորափոխադրումների հսկայական հոսքեր, որոնք կնպաստեն տնտեսության աշխուժացմանը:

Տեխնոպոլիսի (տեխնոպարկի) ստեղծում Աշտարակում: Սա առաջավոր տեխնոլոգիաների բնագավառում հանրապետության մտավոր կարողության արդյունավետ նյութականացման դրսևորումներից մեկը կարող է հանդիսանալ: Միաժամանակ, դա միջազգային ասպա-

րեզուլտ հաջող փորձություն անցած տնտեսաառևտրական գարգացման գոտու օրինակներից է: Ավելին, ծրագիրը մանրակրկիտ մշակված առաջարկությունների փաթեթ է՝ հստակ հաշվարկներով: Այն հիմնվելու է «Տրանզիտոր» գործարանի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի և ֆիզիկայի ինստիտուտի բազայի վրա և առանցքային նպատակներ է հետապնդելու՝ գիտական, առաջավոր տեխնոլոգիաների մշակման, տնտեսաառևտրային և ֆինանսական գործունեության տարբեր ձևերի ծավալումը: Ի թիվս այլ օղակների, գիտական և տեխնիկական ստորաբաժանումները պետք է ունենան գործունեության համար բարենպաստ տնտեսական և իրավական պայմաններ: Հատկանշական է, որ ըստ ծրագրի «Աշտարակի տեխնոպարկ»-ի ստեղծման առաջին հինգ տարիներին նախատեսվում է 150 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որը կստեղծի ավելի քան 5000 աշխատատեղեր՝ գիտնականների, հետազոտողների, ինժեներների, տեխնիկական աշխատողների համար: Ելնելով միջազգային ուսանելի փորձից՝ նախատեսվում է ԱՏԳ կառավարման մարմնի ստեղծում, մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտ ծրագրերի իրականացում, առանձին բանկի հիմնում, հիդրոէլեկտրակայանի կառուցում, նոր տեխնոլոգիաների նվաճումների ցուցասրահ:

Վերը նշված հիմնական առաջարկներով չեն կարող սահմանափակվել ԱՏԳ-երի ձևավորման հնարավորությունները Հայաստանում: Այսօր արդեն գործնական քայլեր են ձեռնարկվում ***Մեղրին սահմանամերձ առևտրի գոտու*** վերածելու ուղղությամբ: Մեր կողմից առանձին փաթեթ է մշակվել նաև ***գրոսաշրջիկության բնագավառում ԱՏԳ*** ստեղծելու ուղղությամբ:

TATOUL MANASSERIAN

*Member of Parliament,
National Assembly of the Republic of Armenia,
Doctor of Sciences (Economics), Professor*

**FOREIGN ECONOMIC RELATIONS
MANAGEMENT ISSUES IN ARMENIA**

Given the dynamic changes and developments in the world, economies in transition have to adapt themselves and reconstruct the overall system of economic relations internally, as well as pay proper attention to the institutional reforms aimed to establish competitive system of foreign economic relations. Armenia need to identify the comparative and absolute advantages and try to realize them efficiently in international markets through working out and implementing pro-active foreign economic policy. Among the most feasible advantages are considered to be Armenia's intellectual potential and the professional potential of the Armenian Diaspora worldwide.

Proper representation of country's export potential in various trade fairs and exhibitions, trade missions, initiation of strategic alliances and aggressive steps taken in foreign trade, as well as establishing effective structure serving international trading and participation in regional and global projects are among various tools to improve existing conditions.

In addition, one of the most effective and wide spread forms of attracting foreign investments can be the formation of free trade zones in Armenia. Those include free customs zones, free industrial zones, technoparks and others. Taking into consideration specific economic, geopolitical and related conditions, Armenia need to work out a strategy for strengthening nation's foreign economic relations and for the beeter utilization of competitive advantages locally and internationally.

СВЕТЛАНА АРУТЮНЯН

*ЕГУ, кафедра психологии,
кандидат педагогических наук,
доцент психологии*

ЕДИНСТВО ПРОЦЕССОВ СОЦИАЛИЗАЦИЯ- ИНДИВИДУАЛИЗАЦИЯ КАК ПРЕДПОСЫЛКА РАЗВИТИЯ ДУХОВНОСТИ

*... тот, кто велит нам познать
самих себя, приказывает познать
свою душу.*

Платон

Проблема соотношения процессов социализации-индивидуализации была нами рассмотрена в предыдущих статьях (см. Հոգեբանություն № 3, 4). В данной статье нами сделана попытка очертить духовные основы развития человека, поскольку результаты взаимодействия лежат в плоскости духовного развития личности.

В период развития советской психологии категория “духовность” практически не фигурировала в научном категориальном аппарате и была вытеснена из психологической проблематики. Однако, мы уверены, что прерогатива изучения духовности в первую очередь принадлежит психологии, поскольку это есть наука о душе. В связи с этим необходимо отметить, что понятие “духовность” широко использовалось в научных разработках вплоть до 30-ых годов 20-го столетия. При этом духовность рассматривалась как ключевая категория социального субъекта, отражающая его ценностно-смысловую взаимосвязь с человечеством в целом, уровень приобщения к его культурному и нравственному опыту и определялась как “индивидуальная, внутренняя направленность личности, раскрывающаяся в единстве интеллектуальной, нравственной, эстетической сфер, в творческом опыте” [1, с. 16].

В современной психологии вновь наблюдается всплеск интереса к категории “духовность” (Ф.Е.Василюк, Г.Э.Бурбулис, И.Ф.Гончаров, А.С.Зеличенко, М.С.Каган, А.М.Эткинд, Н.А.Коваль, Т.В.Холостова, В.И.Слободчиков и др.).

Обычно нормальный человек живет в двух основных реальностях: первая – это публичная, наблюдаемая жизнь, протекающая на “арене”,

вторая – это внутренняя жизнь, принадлежащая только ему. Во внешней жизни проявляются межличностные отношения человека, его роли и взаимодействия. Внутренний мир – это мир его субъективности, простирающийся во времени и не имеющий физических границ. Внутренний мир человека неосознаем, однако его можно определить через ряд понятий. В первую очередь это понятия “свобода”, “вера”, “любовь”, “совесть” и, наконец, глубинная суть человека, интегрирующая все эти понятия – “духовность”. Духовность, “формируя личность, и является тем невидимым духовным центром, вокруг которого и в котором вся суть, весь смысл существования” [1, с. 16].

Духовное развитие личности как интранаправленный процесс можно охарактеризовать следующим образом:

1. человек находится в процессе одновременного осознания своей слитности с другими людьми и своей отдельности, свободы и автономности, независимости от конкретных социальных условий, он может находиться вне общества и над ним,
2. человек, расширяя свои субъективные социальные связи и генерализируя их, реализует их в чувстве единства не только с близкими людьми, но и с дальними, с предками и потомками, при этом, осознание единства происходит не с группой или общностью, но с каждым, как с уникальной личностью, духовной ментальностью,
3. человек обращен к собственным внутренним сущностным силам как источнику решения надличностных проблем, к самореализации и самоактуализации,
4. деятельность человека носит созидательно-преобразующий характер и имеет как объективную, так и субъективную значимость,
5. направленность человека носит творческий созидательный характер.

Через категорию “духовность” представляется возможным определить уникальность отражающей способности человека и ее результата – освоения действительности. Духовность как интегративное свойство человека определяет его как универсально-уникальную целостность, объединяющую в себе как личность (социальное), так и индивидуальность (индивидуальное). Таким образом, духовное развитие есть процесс гармоничного развития человека как “конкретно-исторического единства индивидуально-неповторимого и универсально-всеобщего” [1, с. 6]. Это означает, что духовное развитие отражается в процессе бесконечного взаимодействия социальной и индивидуальной подструктур целостной личности, одновременно определяя его уникальность и универсальность.

Н.А.Коваль считает, что – это сложносконструированное качество, включающее достаточно широкий диапазон составляющих и их взаимодействие, гармонизация имеет большое значение в развитии духовности, ибо, интегрируясь, они образуют особый, относительно

самостоятельный план отражения, преобразования окружающего мира и “я” в этом мире” [1, с. 38].

И.М.Ильичева определяет духовность как “состояние расширения сознания, которое опережает возможности самоидентификации субъекта..., как самосознание, скорость погружения которого в “тело” сознания значительно опережает природенное ему стремление к самозамыканию” [2, с. 8].

“Духовность есть интегративное качество, относящееся к сфере смысложизненных ценностей, определяющих содержание, качество и направленность человеческого бытия и “образ человеческий” в каждом индивиде” [3, с. 119].

Анализируя вышеперечисленные определения духовности, представляется возможным раскрыть интра- и интернаправленность вектора развития духовности. Духовное пространство, в котором проявляется духовность человека, представляется как вертикаль, включающая добро и зло, земное и небесное, возвышенное и низменное. Если это есть вертикаль, то она может рассматриваться как отношение (социализация) и самоотношение (индивидуализация), где человек постепенно осваивает как свой внутренний, так и внешний мир и формирует отношение к себе, обществу и природе. Таким образом, мы совершенно согласны с С.Б.

Крымский, который считает, что духовность не совершается естественным путем, а духовность “есть способность переводить универсум внешнего бытия во внутреннюю вселенную личности на этической основе, способность создавать тот внутренний мир, благодаря которому реализуется тождественность человека себе, его свободы от жесткой зависимости перед постоянно меняющимися ситуациями. Духовность приводит к своего рода смысловой космогонии, соединению образа мира с нравственным законом личности” [4, с. 25].

К вопросу гармоничного взаимодействия процессов социализации и индивидуализации как показателя духовной зрелости личности обращался и В.В.Зеньковский, который описал результаты дисгармоничных взаимоотношений социального и индивидуального в личности. Согласно его мнению, результатом сверхсоциализации могут стать “мягко забытые” люди, для которых характерны ориентация на приспособление, послушание, смирение или же “злобно забытые” люди, у которых “заглушенная личная жизнь вспыхивает с огромным напряжением, и им хочется не служить обществу, а мешать, разрушать его” [5, с. 322]. Перекос в сторону индивидуализации также приводит к личностным деформациям. “Воспитывая детей в узкой среде и лишая их всяких социальных навыков, воспитывают эгоистов, погруженных в себя и социально инертных. Такие люди часто достигают огромной индивидуальной высоты, но в них всегда имеется дефект, от которого страдает не только общество, но и они сами. Они выходят социально равнодушными, социально тупыми, их мало трогает чужое горе, их не

веселит чужая радость. Погруженные в себя, они не знают высокой радости социального слияния, в своем равнодушии к социальной жизни они лишаются могучего и здорового источника духовной жизни” [5, с. 323]. Таким образом В.В.Зеньковский заключает, что лишь одновременное развитие индивидуальной силы и социальных навыков намечает пути нормального развития личности.

В гуманистической психологии оптимальным итогом терапии считается слияние идеального “Эго” и действительного “Я” (К.Роджерс, К.Хорни), человек, “поведение и сами помыслы которого сверхконвенциональны” определяется как диссоциированная личность [6, с. 156].

Ф.Е.Василюк в основе типологии жизненных миров также видит характер взаимодействия социального и индивидуального. При этом, в жизненном мире человека он выделяет два аспекта – внешний и внутренний мир. Внешний может быть легким или трудным, а внутренний – простым или сложным. Их сочетание в жизненном мире человека определяет тип его личности [2]. Исследуя характер взаимоотношений и взаимодействий социальной и индивидуальной подструктур человека, Н.А.Коваль выделяет следующие уровни духовности на основе характера взаимодействия этих подструктур:

1. агармоничный, где связи слабые или вовсе отсутствуют,
2. дисгармоничный, где связь носит противоречивый характер или отмечается доминированием определенных сфер,
3. гармоничный, где связи устойчивые и четко выраженные.

В соответствии с типом этих связей и определяется уровень развития и выраженности духовности.

В интересном ракурсе рассмотрено взаимодействие процессов социализации и индивидуализации Т.Е.Резник и Ю.М.Резник. Авторами в основу типологии положены жизненные стратегии личности, которые рассматриваются как результат взаимодействия процессов социализации и индивидуализации. “Идентификация стратегии жизни обеспечивается, с одной стороны, действием механизма типизации, а с другой стороны, механизма индивидуализации. Различие между ними состоит также в направленности (последовательности перехода) от одних структурных ориентаций к другим. Типизация означает переход от культурных и социальных ориентаций к индивидуально-субъективным (личностным) ориентациям. Напротив, индивидуализация характеризует обратный переход от личных ориентаций к социальным и культурным ориентациям в процессе выбора жизненных стратегий” [7, с. 17]. Формирование жизненных стратегий является творческим процессом, включающим ряд последовательных стадий:

1. преображение жизни (эмоционально-чувственное восприятие настоящей жизни и поиск новых образов)
2. переосмысление жизни (нахождение новых смыслов)
3. переоценивание жизни (новое соотносение с ценностями)

4. нормативно-целевая переориентация жизни.

В соответствии с тем, какую наполненность имеет каждая из перечисленных стадий, строится типология, где авторы выделяют:

- стратегию жизненного благополучия (индивидуалистические цели, не выходящие за рамки индивидуального бытия)
- стратегия жизненного благополучия (внешне заданный характер ориентаций субъекта)
- стратегия самореализации личности.

Из трех названных стратегий, только стратегия самореализации связана с духовностью, поскольку в ее основе лежит жизнетворчество. А жизнетворчество есть результат взаимопроникновения процессов социализация-индивидуализация, и их гармоничного единства, ибо, как отмечают авторы, “оно (жизнетворчество) есть разновидность творчества, для которого свойственны не только свобода и автономия субъекта, но и совместный характер жизнедеятельности” [7, с. 45-46].

Анализируя единый процесс социализации-индивидуализации можно выделить ряд категорий, являющихся его результатом. К таким понятиям можно отнести жизненный мир, смысл жизни, жизненная стратегия, жизненные цели, жизненный сценарий и т.д. Каждое из понятий имеет свое определение и функцию.

Так, жизненный мир определяется как совокупность взаимосогласованных представлений и понятий, конструирующих мир повседневной жизни, а его функция есть обеспечение согласованности бытийного пространства, единство внешнего и внутреннего. Смысл жизни есть субъективно переживаемое значение собственной жизни, а функция – включение человека в единое пространство совместного бытия (а также в единство ноосфере – биосфера). Жизненная стратегия определяется как система согласованных, иерархизированных ориентиров и приоритетов жизни и выполняет функцию организации жизни как объективно-субъективного единства бытия.

Жизненная цель есть жизнеорганизирующая ключевая идея, обеспечивающая целостность жизни. Жизненный сценарий обеспечивает ориентацию в жизни как целостном процессе, имеющем начало и конец и определяется как совокупность представлений о ключевых событиях как целостности.

Таким образом все перечисленные процессы осуществляются в единстве процесса социализация-индивидуализация и являются критерием духовной зрелости человека. На основе этого представляется возможным сделать следующие выводы и выделить особенности духовного развития человека:

- основная особенность духовного развития зрелого человека – это его интранаправленность, наполненность и целостность внутреннего бытия.

- второй особенностью является то, что если в детстве духовное развитие личности идет как взаимопроникновение двух самостоятельных линий, а именно, процесс социализации меняется под воздействием индивидуализации и наоборот, то в зрелом возрасте эти две линии как бы едины и выделить специфику каждой из них довольно сложно. Это значит, что в определенный момент развития социализация и индивидуализация сливаются в единый процесс духовного развития личности и имеют единую духовную целостность и единый итог.

- в-третьих – для зрелости характерно целостное восприятие жизни как единство прошлого, настоящего и будущего, позволяющее расширить границы внутреннего пространства, воспринимать себя не в линейном, плоскостном смысле, а в сферическом, где “Я” есть индивидуальная уникальность в пространстве и времени и одновременно “Я” – это часть биосферического и ноосферического бытия. На смену линейной концепции жизни как движения к определенной социальной перспективе приходит рассмотрение жизни как сложного многомерного пространства объективно-субъективного бытия. Жизнь приобретает не только рациональный, но и чувственный смысл, а зрелость выступает как этап одухотворения и жизнотворчества в рамках общечеловеческого пространства и времени.

Подводя итог, следует отметить, что целостность и единство процесса социализация-индивидуализация заложены в самой сущности данных процессов. Они как бы перетекают друг в друга, а условия нормального развития одного заложены внутри другого и наоборот. Человек изначально социален, и данная социальность является стимулом и причиной его индивидуализации. Развиваясь в едином пространстве этих процессов человек обретает духовную зрелость, а взаимообусловленность процессов социализации-индивидуализации является предпосылкой их интеграции в процессе духовного развития личности.

Это значит, что обретая духовность в едином процессе социализация – индивидуализация, человек одновременно через духовность доходит до гармоничного слияния этих процессов, тем самым доказывая тезис, предложенный Сартром “Человек не что иное как то, чем он делает себя сам” [3, с. 15].

ЛИТЕРАТУРА

1. **Коваль Н.А.**, Психология духовности человека. Тамбов, 1996.
2. **Ильичева И.М.**, Духовность в зеркале философо-психологических учений. Москва-Воронеж, 2003.
3. **Бувва Л.П.**, Духовность, художественно творчество, нравственность / Вопр. философии, 1992, №2,
4. **Крымский С.Б.**, Контуры духовности. Новые контексты идентификации. / Вопр. философии, 1992, №12.
5. **Зеньковский В.В.**, Психология детства. М., Academia, 1996.
6. **Маслоу А.** Новые рубежи развития человека. / Хрестоматия по гуманистической психотерапии. / Сост. Папуш М. – М.: ИОИ, 1995.
7. **Резник Т.Е., Резник Ю.М.**, Жизненные стратегии личности: поиск альтернатив. М., 1995.
8. **Василюк Ф.Е.**, Жизненный мир и кризис: типологический анализ критических ситуаций. / Психологический журнал. – 1995. – Т. 16 №3.
9. **Sartre J.P.**, Existentialism and human emotions. N.Y.: Wisdom Library.
10. **Rogers C.R.**, On becoming a person. A therapist's view of psychotherapy. Boston: Houghton Mifflin.

SVETLANA HARUTYUNYAN

*Ph.D. of Pedagogics,
Associate Professor in Psychology*

UNITY OF SOCIALIZATION-INDIVIDUALIZATION PROCESSES AS A PRECONDITION OF DEVELOPMENT OF SPIRITUALITY

All the socialization-individualization processes are carried out within the socialization-individualization process and are the criteria of a person's spiritual maturity. On this basis, it is considered possible to make the following conclusions and to emphasize the peculiarities of a person's spiritual development:

- The main peculiarity of a person's spiritual development is its introverted nature and the fullness and completeness of internal existence.
- The second peculiarity is the fact that spiritual development, which during the childhood takes place as a mutual penetration of two autonomous tracks, i.e. a process of socialization is changed under the influence of individualization, and vice-versa, at a mature age brings the two tracks together and makes it rather difficult to define the specificities of each.
- The third peculiarity is that maturity is characterized by a holistic perception of life as the unity of the past, present, and the future, which makes it possible to stretch the boundaries of internal space and to perceive one's self in a spherical, rather than linear manner, where the Self is the individual uniqueness in space and time and, at the same time, the Self is a part of the bio-spherical and noo-spherical existence.

This means that by gaining spirituality within a single space of socialization and individualization, a person reaches a harmonic merger of the two by means of spirituality, which proves Sartre's thesis that "a human is nothing but what he makes of himself" [3, p. 15].

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի
քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Քաղաքական գործընթացը քաղաքական համակարգի ինքնակազմակերպման, գործառնության ու արդիականացման և այլ համակարգերի հետ փոխհարաբերությունների ժամանակ ի հայտ եկած գործողությունները համակարգող համալիր ամբողջություն է:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող ցանկացած այլ երկրում, քաղաքական գործընթացը ծայրաստիճան բարդ, բազմաշերտ և հակասական է: Դա ուսումնասիրելու համար անհրաժեշտ է կատարել համեմատական քաղաքագիտության և անցումագիտության շրջանակներում կուտակված փորձարարական նյութի համակողմանի վերլուծություն և մշակել հասկացությունների ապարատ: Քանի որ, ինչպես ԿԱԵ (Կենտրոնական և Արևելյան Եվրոպա) և ՆԽՄ (Նախկին Խորհրդային Միություն) երկրների փորձն է վկայում, ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող հասարակություններում կերպափոխումների, նույնականացման, ժողովրդավարացման բնույթն ու էությունը հենց քաղաքական գործընթացի տրամաբանությունն է թելադրում:

Ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող հայ իրականության մեջ քաղաքական գործընթացի գերակա ազդեցությունը հասարակական կյանքի այս ոլորտների վրա պայմանավորված է նախ՝ «վազող արդիականացման» բնույթով, ապա՝ ժողովրդավարացմանը բնորոշ մի շարք կարևոր նախադրյալների (տնտեսական, մշակութային, իրավական) բացակայությամբ, որը փոխհատուցվում է քաղաքականության դերակատարների իրավիճակային վարքաբանությամբ: Վերջինս էլ որոշում է քաղաքական գործընթացի որպիսությունը՝ նրան օժտելով տարերայնության, բախումնայնության հատկանիշներով՝ իրավիճակը դարձնելով անկանխատեսելի:

Քաղաքական գործընթացի հիմնական բնութագրիչն *փոփոխությունն* է, որը ենթադրում է կառուցվածքի և գործառույթների, ինստիտուտների, մշտական ու փոփոխական բնորոշ գծերի, շրջաբերման

տեմպերի և քաղաքական երևույթների այլ չափանիշների զարգացում և արդիականացում:

XX դարի 50-ական թվականներից քաղաքական գործընթացները, որոնք ենթադրում են քաղաքական զարգացման ժողովրդավարական անցման մոդելի ներդրում, ավանդական հասարակություններում փոխելով նրանց արժեքաշահային համակարգը, միտված են ստեղծելու իրատես քաղաքական կառավարման գլոբալ համակարգ: Սակայն ժողովրդավարացող հասարակություններում քաղաքական համակարգի կերպափոխության խիստ տեմպերը վերջիններիս հանգեցրել են քաղաքական զարգացման ճգնաժամերի: Հաճախակի փոփոխությունների արդյունքում, կորցնելով հավատն ապագայի նկատմամբ, նրանք անցյալ–ներկա–ապագա եռաչափության լաբիրինթոսից չեն կարողանում դուրս գալ և որոշել «իրենց ճանապարհը» [1, էջ 5]:

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ՝ ԺՈՂՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Քաղաքական գործընթացը ձևավորվում, զարգանում և իրականություն է դառնում հասարակական կյանքի շրջանակներում: Այն քաղաքական խաղի կանոններից բացի ներառում է ազգային արժեքային համակարգ, մտահայեցողություն, ավանդույթներ, անձի սոցիալականացման աստիճան, քաղաքական և քաղաքացիական մշակույթ: Քաղաքականության տեսության մեջ կան բազմաթիվ դպրոցներ ու տեսաբաններ, որոնցից յուրաքանչյուրը քաղաքական գործընթացին իրենց մեկնաբանություններն են տվել:

Մեր կարծիքով ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող հասարակությունների քաղաքական գործընթացն ուսումնասիրելիս անհրաժեշտ է համենատական քաղաքագիտության շրջանակներում կարևորել ամերիկացի քաղաքագետ Լ.Պայի մշակած մոտեցումները:

Համենատեղով «արևմուտքի» և «ոչ արևմուտքի» քաղաքական գործընթացները՝ Լ.Պայը դրանց միջև առկա տարբերություններն առնչում է բնակչության արժեքային կողմնորոշումները և վարքաբանությունը պայմանավորող մշակութային «կողերի» առանձնահատկությունների հետ: Ընդհանրացնելով «քայլող» և «վազող» արդիականացմամբ պայմանավորված իր փորձարարական դիտարկումները՝ Պայը, Մ.Վեբերի «Իդեալական տիպերի» տեսության ոգուն համահունչ, սահմանակարգում է արևմտյան և ոչ արևմտյան քաղաքական գործընթացի չափումները: «Ոչ արևմտյան քաղաքական գործընթաց» հոդվածում Պայը փորձում է պատասխանել հետևյալ հարցին՝ «Ինչո՞ւ ժողովրդավարության գաղափարները զարգացել և զարգանում են պատմական «արմուտքի» սահմաններում, մինչդեռ եղել և մնում է խորթ «ոչ արևմտյան աշխարհի» հասարակական կեցությանը» [2]:

Հարցի պատասխանը տրված է 17 կետով, համաձայն որի ոչ արևմտյան քաղաքական գործընթացն ուսումնասիրելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

1. Քաղաքականության, հանրային ու անձնական հարաբերությունների ոլորտների միջև ոչ արևմտյան հանրություն հստակ սահմանաբաժանում չկա: Քաղաքականությունը կյանքի այլ ոլորտներից հստակ բաժանված չէ, և դրա հիմնական պատճառը քաղաքացիական հասարակության ինստիտուտների անհասուն վիճակն է կամ չձևավորվածությունը:

2. Քաղաքական կուսակցությունները հավակնում են բացարձականացնել կենսակերպի և աշխարհընկալման սեփական պատկերացումները: Վերջիններիս, ծայրահեղ, հակադիր բազմազանությունը բևեռացնում է հասարակությունը, որի անդամների աշխարհայացքային արժեքները տատանվում են կոնունիստական կարոտաբաղձությունից մինչև արմատական-ազատական ընդգրկուն շրջանագիծը:

3. Առկա են խառնակչախմբեր, իսկ սոցիալական միջավայրի նկատմամբ վերահսկողության թուլությունը կամ իսպառ բացակայությունը, սոցիալական կյանքի տարերայնությունն ու քառսային վիճակը հանգեցնում են հանցածին ահաբեկչական խմբերի ձևավորմանն ու արմատավորմանը:

4. Քաղաքական կողմնորոշումների բնույթը ենթադրում է, որ քաղաքական խմբավորումների ղեկավարները զգալի ազատություն ունեն ռազմավարության և մարտավարության որոշումներ ընդունելու մեջ: Փաստարկման անհրաժեշտություն չկա, քանի որ ոչ արևմտյան սոցիալական բոլոր կառույցներում ռազմավարության և մարտավարության որոշողը տվյալ կառույցի լիդերն է:

5. Ընդդիմադիր կուսակցությունները և իշխանության ձգտող ընտրանու խմբերը հաճախ հանդես են գալիս որպես հեղափոխական շարժումներ:

6. Դերակատարների միջև ինտեգրումը բացակայում է, ինչը հասարակությունում նոր հաղորդակցային համակարգի սաղմնայնության արդյունք է:

7. Քաղաքական գործընթացը տարբերվում է քաղաքական դերերի կատարման համար նոր տարրերի հավաքագրման զգալի ծավալներով: Ժողովրդավարացման գործընթացով պայամանավորված նախկին դերակատարներից և դերերից հրաժարումը, ինչպես նաև բազմածավալ հիմնախնդիրների միաժամանակյա լուծման հանգամանքը ձևավորում է նորանոր դերերի և գործընթացների պահանջումը:

8. Առկա են կտրուկ տարբերություններ սերունդների քաղաքական կողմնորոշումներում:

9. Ոչ արևմտյան հանրությունները տարբերվում են օրինականացված նպատակների և քաղաքական գործունեության միջոցների փոխհամաձայնեցման անարդյունավետությամբ: Խմբային և անձնական պատվախնդրություններն ու հակամարտությունները տրոհում են քա-

ղաքական դաշտը և նվազագույնի հասցնում քաղաքական փոխհամաձայնությունը (consensus):

10. Քաղաքական բանավեճի լայն տիրույթը և լարվածությունը հազվադեպ են կապված քաղաքական որոշումների ընդունման հետ: Բանավեճի առարկա հիմնախնդիրները, քաղաքական դաշտը քաղաքականության դերակատարներին մանիպուլացնելու միջոց են: Նման միջոցով «գլխավոր նպատակին հասնելուց հետո հիմնախնդիրը կարող է սառեցվել, շրջանցվել, անտեսվել, իսկ քաղաքական որոշումը՝ չընդունվել» [3, էջ 173-174]: Հիմնախնդիրների ընդգրկումն դիտարկումն իր հերթին նպաստում է քաղաքական բանավեճի ծավալների ընդարձակմանը և տարաբնույթ արժեքաշահային խմբերի բացահայտմանը:

11. Դերերի միախառնման և փոխլրացման բարձր աստիճանի պատճառով անցումային գործոնների արագ փոփոխությունների հայելին ինտենսիվ դիմակափոխությունների դիմակահանդեսն է: Տարբեր հիմնավորումներով քաղաքական դերակատարներն կարող են իրենց դերեր, գործառնություններ վերագրել կամ դրանք միախառնել, զուգահեռել, փոխլրացնել համապատասխան դիմակներով:

12. Թույլ է արտահայտված շահային խմբերի ազդեցությունը և նրանք գործառնության – մասնագիտացված դերեր են խաղում: Դրանք հիմնականում կորցնելով իրենց հանրային նշանակությունը, առանձին դերակատարների կամ փոքր խմբերի մասնավոր շահերի պաշտպանությանն են հետամուտ:

13. Ազգային ղեկավարությունը չտարբերակելով սոցիալական խմբերը, հարկադրված է ժողովրդին դիտել որպես մեկ ամբողջություն: Սոցիալական խմբերի չձևավորվածությունն էլ իր հերթին պայմանավորում է սեփական շահերի չձևավորվածություն, հետևաբար և ամբողջին՝ որպես համասեռ «միավորում» դիտարկելու անհնարինություն:

14. Ոչ արևմտյան քաղաքական գործընթացի ոչ կառուցողական բնույթը լիդերներին հարկադրում է կարևորել արտաքին և ոչ թե ներքին քաղաքականությունը:

15. Քաղաքականության մեջ զգացմունքային և խորհրդանշանային դրսևորումները երկրորդ պլան են մղում որոշակի հարցերի և ընդհանուր հիմնախնդիրների լուծման ուղիների որոնումները:

16. Մեծ է խարիզմատիկ լիդերների դերը:

17. Քաղաքական գործընթացը հիմնականում զարգանում է առանց քաղաքական բրոքերների մասնակցության: Հասարակության թույլ դերը և սոցիալական մեծ տարբերակումը (դիֆերենցացիան) հանգեցրել են քաղաքական բրոքերների բացակայության, որի պատճառով էլ ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող հասարակությունը չի կարողանում դուրս գալ քաղաքական իրականության մարզինալ արժեքավորումից:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քաղաքական գործընթացի հիմնախնդիրը ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող երկրներում վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

1. «կախյալ զարգացումը» ենթադրում է տարաբնույթ խնդիրների միաժամանակյա լուծում և փոփոխությունները կարգավորող ընտրանի, որը բարեփոխումների գաղափարախոսության նպատակամետ մշակման կարիք ունի.

2. ժողովրդավարացման մի շարք կարևոր նախադրյալների բացակայությունը (ֆինանսական, մշակութային, իրավական) փոխհատուցվում է քաղաքական գործոններով (պետություն, լիդերներ, ընտրախավեր, բյուրոկրատիա, բանակ), որոնք գրեթե միակ արդյունավետ միջոցն են բնակչության սոցիալական հավաքագրման:

3. «կախյալ զարգացման» կարգավիճակում գտնվող երկրներում գերիշխող են անցումային արժեքները, որոնք հիմնականում անտեսելով ավանդականը, ցնցակաթվածի (ֆուտուրշոկ) մեջ են դնում հասարակությանը:

Այս նկատառումներով ՀՀ քաղաքական գործընթացը կարելի է դիտարկել՝ ինչպես սոցիալական դերակատարների և քաղաքական իշխանության ներկայացուցիչների փոխազդեցության տեսանկյունից, այնպես էլ նրանց կողմից իրականացվող դերերի և գործառնությունների հիմքի վրա: Այդ փոխազդեցության բովանդակությունը ներկայանում է հետևյալ կերպ՝

ա) ՀՀ սոցիալական դերակատարների և քաղաքական ընտրանու մշակութային համակարգով,

բ) աշխարհի քաղաքական պատկերի մասին նրանց պատկերացումներով,

գ) խմբային շահերի համակարգման և զուգամիտման հնարավորություններով:

ՀՀ քաղաքական գործընթացները կարող են դիտարկվել նաև հայ հանրության մշակութային առանձնահատկությունների տեսանկյունից: Պատմականորեն հանրության (հատկապես՝ ժողովրդավարության գաղափարակրի) մշակութային անհամասեռությունները, քաղաքակրթության պատմության բանկ են «մուտքագրել» քաղաքական գործընթացի երկու տարբերակ՝ վերերյան ոգով ասած՝ երկու իդեալական տիպ՝

ա) *ոչ էթատիստական (կամ ժողովրդավարական)*. հորիզոնական տեսքով կազմակերպված քաղաքական գործընթաց, որոշիչը քաղաքացիների ակտիվությունն է, նրանց գիտակցված քաղաքական գործողությունները, որոնց օգնությամբ հնարավոր է *հսկել, վերահսկել և ազդել* իշխանության վրա,

բ) *էթատիստական (տեխնոկրատ, ընտրախավային)*. ուղղահայաց տեսքով կազմակերպված քաղաքական գործընթաց, որոշիչը քաղաքական ընտրանու և բյուրոկրատիայի արժեքաշահային կողմնորոշումներն են՝ կառավարման այն համակարգը, որի օգնությամբ իշխանություն է իրականացվում «հրաման-կատարում» սկզբունքով:

ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում քաղաքական գործընթացին՝ իր պատմական զարգացման և մտահայեցողական առանձնահատկություններով պայմանավորված՝ բնորոշ է այս երկու տիպերի ծուլումը, որն էլ անվանենք *խառը* տիպ: Վերջինս ենթադրում է, որ դերակատարներն արդյունավետ և նպատակային են գործում իրենց փոխազդեցություններում և տարբերվում աշխարհի նկատմամբ ունեցած իրենց արժեքաշահային վերաբերմունքով: Նրանք հիմք ընդունելով գլխավոր մասնակիցների ֆորմալ հավասարության և հարաբերական ինքնավարության ճանաչումը՝ հետևելով մրցակցության կամ գործակցության խաղի ընդհանուր կանոններին, հավատարմություն են ցուցաբերում *ժողովրդավարական արժեքների, բարոյականության և իրավունքի գերակայության* նկատմամբ: Նրանց գործունեության տրամաբանությունը Ռ. Դալի կարծիքով շղթա է, որն սկսվում է իրական նպատակների առաջադրումից, նրանց հասարակական նշանակություն տալուց մինչև նրանց իրացման եղանակների որոնումն ու հիմնավորումը և այն էլ արժեքների ոչ էթաստիկական համակարգով, որտեղ գերակա են ազատությունը, իրավունքը և փոխհամաձայնության տանող արժեքները: Իրատես դերակատարների՝ *քաղաքական իշխանության, կառավարության, ճնշման խմբերի* (արհմիություններ, ձեռնարկատերերի միություններ) միջև սահմանը լինում է թափանցիկ: Նման պարագաներում տրիպարտիզմի իդեալական տիպը մասնակիցների միջև կարող է ընդունել մշակութային առևտրի բնույթ, որտեղ յուրաքանչյուրը, հանուն սահմանված նպատակի, ինչ-որ բան է զոհաբերում (ազատական տարբերակ), կամ էլ քաղաքական գործընթացն իրենից ներկայացնում է սոցիալական համակարգի մասնագիտացված տարրերի գործառնական դիրքերի համաձայնեցում (պահպանողական տարբերակ): Ամերիկյան հայտնի քաղաքագետ Ռ. Դալը փոխազդեցության նմանատիպ քաղաքական վարչակարգն անվանել է պոլիարխիա [4], երբ ոչ մի ռազմավարական որոշում չի ընդունվում լիդերների, կառավարության կողմից՝ առանց արհմիությունների, գործարարների, ֆերմերների խորհրդատվության: Հորիզոնական կազմակերպված քաղաքական գործընթացի իդեալը «կլոր սեղանն է» բոլոր գլխավոր դերակատարների բազմակողմանի խորհրդատվությունը, որի օգնությամբ քաղաքական գործընթացն ինստիտուցիոնալ ձևի՝ տրիպարտիզմի (կառավարության, ձեռնարկատերերի և արհմիությունների) փոխազդեցությունն է: Արևմուտքից «ներմուծված» այս մոդելը դեռևս չի կայացել ՀՀ-ում, քանի որ բարեփոխումների հատվածայնությամբ պայմանավորված, մարզինալ դերակատարներն այն ծառայեցնում են իրենց շահերին: Արդյունքում քաղաքական գործընթացները մինչ

օրս էլ ընթանում են խառը՝ պահպանելով մերք ուղղահայաց, մերք հորիզոնական տեսքով կազմակերպվածություն:

ՀՀ քաղաքական գործընթացը կարելի է բնութագրել նաև ըստ նրա երկու ակտիվ փոխազդող բաղադրիչների՝ արժեքային (մշակութային համակարգ, գերակա նորմերի և քաղաքական կյանքի արժեքներ) և տեխնոլոգիական, որն արդյունք է քաղաքականության ոճի: ՀՀ իրականության համար արժեքային բաղադրիչը ձևավորվել է պատմականորեն: Այն քաղաքական գործընթացում որոշումների ձևավորման և ընդունման որոշակիացված արարողակարգերի հավաքակազմ է՝ պայմանավորված հայ հանրություն պատմականորեն ձևավորված և գերիշխող ավանդույթներով, մշակույթի, աշխարհի քաղաքական պատկերի ուրույն արժեքներով: ՀՀ քաղաքական գործընթացներում արժեքային բաղադրիչին լրացնում է՝ 1988-ից որդեգրված արևմտյան, այսպես կոչված որոշումների ձևավորման և ընդունման ստանդարտ ժողովրդավարական արարողակարգերի հավաքակազմը (դա էլ հենց կազմում է քաղաքականության ոճը), որը, ըստ Ջ.Ռիչարդսոնի, Գուստաֆսոնի, Ջ.Ջորդանի, հենվում է երկու չափորոշիչի վրա.

- կառավարությունն ակտիվ, թե՞ պասիվ դիրք է զբաղեցնում, պատրաստ է գործել, վերհանել և կանխատեսել հիմնահարցե՞րը, թե՞ պարզապես արձագանքում է տեղի ունեցածին,

- կառավարության հարաբերությունները քաղաքական գործընթացի մյուս մասնակիցների հետ: Այն վերաբերում է քաղաքական որոշման ընդունման եղանակին. փոխհամաձայնեցման մեթոդով, թե՞ ճնշման միջոցով է կառավարությունը ժողովրդի վզին փաթաթում իր ընդունած որոշումը [5]:

Այս հիմքերի վրա ձևավորված, ժողովրդավարական արարողակարգեր բովանդակող հայեցակարգն՝ տարբեր համամասնությամբ, առկա են ՀՀ քաղաքական գործընթացում:

Դրանք են.

- **փոխհամաձայնեցված** քաղաքական խնդիրների ակտիվ ձևակերպմամբ և լուծմամբ (թույլ է դրսևորվում),

- **ակտիվ**՝ հենված պետության ակտիվության վրա, ինչպես հիմնախնդիրների ձևակերպման, այնպես էլ սոցիալական խմբերի շահերի հարկադրված ինտեգրումում (թույլ է դրսևորվում),

- **արձագանքող**, այսինքն՝ հիմնախնդիրների առաջջաշման իմաստով պասիվ, սակայն ակտիվ՝ արդիական հիմնախնդիրների լուծման առումով, այդ իսկ պատճառով էլ՝ հենված շահագրգիռ խմբերի հակազդման հաղթահարման վրա (համեմատաբար լավ դրսևորված): Կարելի է ավելացնել նաև, որ, մտահայեցողական արժեքներով պայմանավորված, երբեմն փոխհամաձայնեցման բաղադրիչը փոխարինվում է ճնշման բաղադրիչով:

Գլոբալ միտումներից է քաղաքական կյանքում ազատական-ժողովրդավարական արժեքային մոդելի ստեղծումը, որին բնորոշ կողմերից են.

ա) քաղաքական կյանքի՝ նախկինում առանձնահատուկ դարձած ոլորտների միջև սահմանների վերացում.

բ) քաղաքական նոր ոճերի մուտքը քաղաքական կյանք (նոր սոցիալական շարժումներ, բնապահպանական, հակաառաքելական շարժումներ)՝ քաղաքական մասնակցության ոչ ստանդարտ գծերով,

գ) հատուկ քաղաքական դասի ձևավորում, որը բնութագրվում է մշակութային միասնականությամբ և բյուրոկրատիայի ու շահային խմբերի սերտաճուկ [6]:

Որպես անցումային հասարակություն՝ ՀՀ-ում բարձր է սոցիալական փոփոխությունների ընթացքը, սոցիալական ինստիտուտների շարժումակությունը, որը ոչ միայն արագացնում է խմբերի, հանրույթների, անհատների սոցիալական փոխազդեցությունը, այլև՝ ուժեղացնում զարգացման քառասյունությունը և բախումնայնությունը: Նման պարագայում կարևոր է ժողովրդավարական անցման պայմաններում հարահոս փոփոխվող սոցիալական համակարգի դինամիկ հավասարակշռության պահպանումը: Քաղաքական գործընթացի նպատակը, հասկանալի է, հանրույթի քաղաքական ամբողջականության, մշակույթի և նրա կրողների երկխոսության և փոխազդեցության գործունե համակարգի ապահովումն է: Տարբեր ենթամշակութային արժեքների և շահերի ինտեգրումը քաղաքական գործընթաց ձեռք է բերվում քաղաքական առասպելաբանության սկզբունքների միջոցով, որոնցից ամենակարևորներն են.

- **կառավարելիության** - պետական իշխանության ընդունակությունը՝ կառավարելով հասնել փոփոխությունների, վճռել արդիական հիմնախնդիրները և պահպանել համակարգի դինամիկ հավասարակշռություն,
- **ժողովրդավարական լեգիտիմության** - իշխանության ընդունակությունը՝ իր օրինականության, արդյունավետ գործունեության մասին բնակչության մոտ համոզմունք ստեղծելու կարողություն,
- **արդյունավետ վերահսկողության** - իրատես բյուրոկրատիայի առկայության պայմաններում, սոցիալական միջավայրի և իշխանության վրա վերահսկողության հնարավորություն (ՁԼՄ-ների, հարցումների, պատգամավորների վերահսկողության օգնությամբ),
- **գերիշխանության** - իշխանության համար մղվող պայքարի ենթարկում ժողովրդավար նորմերին, ընտրություններում հաղթանակածի արդար հաղթանակի ճանաչում [7]:

Հանրագումարենք. ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում տեղի ունեցող քաղաքական գործընթացները.

▪ ըստ իշխող մշակույթի արժեքների և ինքնակազմակերպման՝ ինքնահաստատման պատմական կայուն ձևերի ոչ արևմտյան տիպի քաղաքական փոխազդեցություններ են, որոնց բնորոշ չէ փոփոխել արժեքային համակարգերի քաղաքական էությունը՝ ցանկացած կերպափոխության ժամանակ,

▪ ըստ իշխանության և հասարակության փոխազդեցության բնույթի՝ դրանք *խառը* (և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական) կազմակերպված գործընթացներ են, որոնցում իշխանությունը միակողմանի սահմանում է անհրաժեշտ քաղաքական վարքաբանության կանոնները և պայմանները՝ բնակչության վրա փաթաթելով խմբային շահերով արժևորված որոշում, իր հերթին բնակչությունը կամ օտարվում է սոցիալական իրականությունից կամ պասիվ մասնակցություն է ցուցաբերում գործընթացներին,

▪ ըստ քաղաքական կառավարման ոճի՝ այն հեղափոխակաճացված է, որի արդյունքում էլ գերակա է պետության ակտիվ դերը, ինչպես հրատապ հիմնախնդիրների ձևակերպման, այնպես էլ տարբեր ճնշման խմբերի շահերի հարկադրական ինտեգրման գործում:

Քաղաքական գործընթացը Հայաստանում ներկայացնում է դերակատարների, նոր արժեքներ կրողների, արտացոլողների և իշխանության ինստիտուտների քաղաքական փոխազդեցությունների ընդարձակ խճանկար: Նրանք գործում են համաձայն այն դերերի և գործառույթների, որոնք թելադրում են արժեքաշահային համակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, քաղաքական և քաղաքացիական մշակույթների հասունության մակարդակը և այլն: Նշված սոցիալական փոփոխականներն որոշակի առանձնահատկությամբ են օժտել ՀՀ քաղաքական դերակատարներին.

ա) Քաղաքացիական հասարակության նոր ձևավորված ինստիտուտների ոչ իրատես գործունեության արդյունքում քաղաքականությունը տարանջատված չէ տնտեսությունից, մշակույթից, սոցիալական և անձնական հարաբերություններից: Այս պայմաններում քաղաքական գործընթացը բնորոշվում է քաղաքականության ամենուր թափանցելու իրողությամբ. առանց իշխանական կառույցների միջամտության տնտեսական, սոցիալական, հոգևոր զարգացման որևէ հարց չի լուծվում: Քաղաքականությունը վերահսկելու և քաղաքակրթելու կոչված քաղաքացիական հասարակության ինստիտուտներն իրենց դերն արդյունավետ չեն կատարում:

բ) Նպատակների և քաղաքական գործողությունների հարցում նրա մասնակիցների միջև փոխզիջումների բացակայությունն է: Հայաստանում փոխզիջման ավանդույթ չի եղել, և այն հնարավոր չէր արմատավորել մի քանի տարիների ընթացքում: Քաղաքական գործընթացի բախումնայնության պատճառներից մեկն էլ ազատության և ժո-

ղովրդավարության արժեքների ձևավորվող քաղաքական ուժերի տարբեր ընկալումներն են, ինչպես և բարեփոխումների գործընթացում մասնակցության և սեփական շահերի բավարարման նրանց անհավասար հնարավորությունները:

զ) Ինստիտուցիոնալ կարգի անարդյունավետությունն ու քաղաքական դերերի համատեղման ու մարզինալ փոխակերպման բարձր մակարդակն է: Քաղաքական կյանքում հայ հասարակության մասնակիցների բազմազանությունը թվացյալ է, քանի որ իրական դերն ու քաղաքական գործառույթները բավականաչափ սահմանափակ են: Որպես հաստատումն ասվածի, հավելենք, որ քաղաքական կուսակցությունները, որոնք երկրում յոթանասունից ավելի են և իրենց հնարավորություններով բավականին սահմանափակ են արտահայտում քաղաքացիական հասարակության շահերը: Նախ, որովհետև քաղաքացիական հասարակության շահերը նոր են միայն սկսում ձևավորվել, իսկ կուսակցություններն իրենք, առաջնորդներից և նրանց մերձավոր կողմնակիցներից բացի, քչերի շահերն են ներկայացնում և համակարգում: Երկրորդ՝ ժամանակակից կուսակցություններն ավելի շատ ներկայանում են ոչ այնքան որպես քաղաքացիական հասարակության հետ իշխանության կապն իրականացնող ինստիտուտներ, որքան քաղաքական գործչի շուրջ խմբված համախոհների միավորումներ:

դ) Մասնակիցների միջև անվտանգության սկզբունքների ինտեգրման բացակայություն, ինչը հետևանք է հասարակության մեջ թափանցիկ հաղորդակցության համակարգի թերզարգացվածության: Ուղղահայաց կազմակերպված քաղաքական գործընթացը գործում է իշխանության և հասարակության միջև երկխոսության միջոցով, որի ժամանակ վերջինս իր պահանջներն իշխանական կառույցներին է հասցնում ներկայացուցչության ճյուղավորված համակարգի միջոցով: Շահերի՝ նման ճյուղավորված համակարգը Հայաստանում թույլ է զարգացած, քանի որ բացակայում է քաղաքական երկխոսության ավանդույթը: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների անարդյունավետության հետևանքով իշխանական կառույցներին ուղղված քաղաքացիների պահանջների հաղորդման ճյուղավորված համակարգը չի գործում:

ե) Ակտիվ քաղաքական ոճ՝ կազմված կառավարության կողմից հասարակությանը պարտադրվող նորանուծություններից: Պետության ակտիվ դերն ինչպես խնդիրների ձևավորման, այնպես էլ տարբեր խմբերի շահերի հարկադրված ինտեգրման պարագայում բացատրվում է հասարակության մշակութադավանաբանական, սոցիալական և քաղաքական բևեռացումով: Պետությունը քաղաքական գործընթացի մասնակիցների այս տարբեր ենթամշակույթների ինտեգրումը կազմակերպում է՝ նրանց քաղաքական գործունեության որոշակի արժեքներ և ստանդարտներ պարտադրելով: Դրանով իսկ իշխանական կառույցներ

որը քաղաքականության դերակատարների վարքը դարձնում են կանխատեսելի [8]:

գ) Կառավարող ընտրանու ձեռքում քաղաքական իշխանության և բնական պաշարների չափազանց մեծ կենտրոնացումը դրդում է ընդդիմությանը հանդես գալ ոչ թե որպես քաղաքական ընդդիմախոսներ, այլ որպես հեղափոխական շարժումներ: Կառավարող ընտրանու և ընդդիմության հակամարտությունը նրանց միջև առկա մշակութաքաղաքական բազմատարրության հետևանք է, որի տարբեր խմբերը կողմնորոշվում են դեպի ինչպես ազատական, այնպես էլ սոցիալիստական կամ ավանդական արժեքները: Գաղափարական հակազդեցությունը համալրվում է տնտեսական գործոններով՝ մասնավոր սեփականություն, մրցակցություն, շուկա և այլն՝ պայմանավորված շահերի բյուրեղացման գործընթացով: Առկա սոցիալական բևեռացումը խորացնում է քաղաքական փոխազդեցության բախումնայնությունը:

Ակնհայտ է, որ ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում գերիշխում է մշակութազաղափարական շարժառիթը. կառավարող ընտրանու և ընդդիմության կողմնակիցների ինտեգրումը տեղի է ունենում ոչ թե իրատես, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմքով (լիդերների իմիջի, խորհրդանիշերի և այլնի նկատմամբ համակրանքի կամ հակակրանքի): Կառավարող ընտրանու ձգտումը՝ մենաշնորհային կերպով վերահսկել քաղաքական գործընթացին, ընդդիմության մոտ առաջ է բերում արմատական միջոցներ կիրառելու ցանկություն՝ պարտադրելու համար կառավարող ընտրանուն ճանաչելու և լեգիտիմացնելու ընդդիմությանը և քաղաքական կուրսը մշակելիս հաշվի առնելու նրա կարծիքը: Ընդ որում, անհատական և խմբային նույնականացման, ավանդական սոցիալական կապերի և ձևերի խզման հետևանքով հասարակության մեջ պահպանվող մարզինալացումը մեծացնում է քաղաքական փոխազդեցության զգացմունքային և խորհրդանշական գործոնների նշանակությունը: Դրանց գերիշխումն էլ երկրորդ պլան է մղում իրատեսական որոշումների ընդունումն ու իրագործումը: Սրանով էլ ժողովրդավարական անցման գործընթացում բացատրվում է բարեփոխումների թույլ դինամիկան ու ընդունվող քաղաքական որոշումների կատարման ցածր արդյունավետությունը [9], իսկ ընտրանու իրականացրած իշխանությունը համարվում է սոցիալական երկխոսությունից զուրկ [10]:

Հայաստանում քաղաքական գործընթացի առանձնահատկություններից ակնհայտ է, որ ժողովրդավարական անցման պայմաններում մենք կրկին բախվում ենք «վազող արդիականացման» հայկական հավերժական խնդրին, որն ուղեկցվում է «զուգահեռ» ավանդապաշտությամբ: Սա ժողովրդավարացման այնպիսի ֆենոմեն է, որն իր իրականացման ընթացքում արթնացնում է, թվում է՝ վաղուց մոռացված, սակայն իրականում խոր արմատավորված և ընդամենը «նիրհած» ավանդական արժեքային շերտերն ինչպես գաղափարախոսութ-

յան, այնպես էլ առհասարակ մտահայեցողության, ինչպես գիտակցության, այնպես էլ ենթագիտակցականի, ինչպես ընդհանուր կենսադրվածքի, այնպես էլ որոշակի, սոցիալ-քաղաքական «կենցաղի» (տեղային մենիշխանական վարչակարգերի վերացման, էթնիկ, կլանային ու կաստային կառույցների վերարտադրման և հզորացման, բնակչության ինտեգրման համընդհանուր հոգևոր և ինստիտուցիոնալ հիմքերի քայքայման) բնագավառներում [11]: Ընդ որում, ակնհայտ է, որ ժողովրդավարացումը ներքուստ աններդաշնակ է, ու նրանում առաջացել են բազում կառուցվածքային ճեղքվածքներ. ինչ-որ բան, իրոք, առաջ է ընթանում, ինչ-որ բան էլ զարգանում է ավելի շատ ինքնաբերաբար կամ նույնիսկ հետ է մղվում, բնակչության որոշ շերտեր առավելություններ են ստանում և նոր հնարավորություններ իրացնում, մինչդեռ մյուսները, շրջապատույտի արդյունքում զրկվում են մինչ այդ ունեցածից էլ: Փաստորեն, տեղի ունեցող *մասնակի ժողովրդավարացման* հենքի վրա ավանդական արժեքային շերտերի զարգացման միտումներն իրենց ազդեցությունն են թողնում ձևավորվող քաղաքական շուկայի վրա:

Քաղաքական շուկան ազատ շուկայի ինստիտուտ է, որում անհատները ձգտում են իրացնել իրենց ցանկությունները [12]: Ըստ այդմ էլ քաղաքական գործնեությունը ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում կարելի է դիտարկել որպես ձեռնարկչատիրության տարատեսակ: Նման համեմատության օրինաչափությունը հիմնավորված է այն հանգամանքով, որ շուկան իրենից ներկայացնում է մարդկային գործունեության կազմակերպման ունիվերսալ միջոց [13]: Քաղաքական շուկայում տեղի է ունենում իշխանության պաշարների փոխանակում (ապրանքներով և ծառայություններով), այստեղ կան նաև «վաճառողներ»՝ քաղաքական լիդերներ, ընտրախավեր, քաղաքական կուսակցություններ, շարժումներ, որ առաջարկում են յուրահատուկ ապրանք (քաղաքական ծրագրեր, խոստումներ, թեկնածուների անձնական հատկանիշներ) և «գնորդներ» (քաղաքացիներ, ընտրողներ, կուսակցությունների և շարժումների շարքային անդամներ), որոնք իրենց ձայների դիմաց ստանում են ակնկալվող ծառայություններ [14]:

ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում ձևավորված քաղաքական շուկան պարտավոր է փոխանակում կատարել՝ ապահովելով մասնակիցների պայմանագրային ազատություն և անվտանգություն, քաղաքական մրցակցություն: Քաղաքական շուկան միջոց է բացահայտելու մասնակիցների և պահանջումները, և հնարավորությունները, համաձայն այն տեղեկատվության, որ կարող է ընկալվել ոչ միայն որպես սպասում, այլև՝ ինչ չափով են այդ սպասումները ենթակա իրականացման:

Այս իմաստով ամիրաժեշտ է կարևորել հայ հասարակության վրա տեղեկատվական հեղափոխության երկակի և հակասական ազդեցությունը: Մի դեպքում բնակչության բարձր կրթական մակարդակը նպաստում է քաղաքական մասնակցության մշակույթի արագ, սակայն հիմ-

նականում մակերեսային հաստատմանը: Մյուս դեպքում, սոցիալական վարքի արևմտյան մոդելը, որն արտահայտվում է այնպիսի արժեքներում, ինչպիսիք են՝ մասնավոր սեփականությունը, իրավական, սոցիալական պետությունը բնակչության զգալի հատվածի համար վերացական արժեքներ են, քանի որ հասարակությունում բացակայում է անհատի ակտիվ կողմնորոշումը, իրատեսությունն ու ձեռնարկչատիրական-մախաձեռնողական ավանդույթները: Այստեղից էլ՝ ժողովրդավարացման հոգեբանական և բարոյական իրավահաջորդության խնդիրն ընկալվում է որպես ոչ թե ազգային, այլ՝ «օտարերկրյա կամ համանվորակային ազդեցություն» [15]:

Մասնատված քաղաքական մշակույթով ժողովրդավարացող հայ հանրությունը ընտրություններն ընդլայնում են մարզինալ շերտերի հնարավորությունները՝ ազդելու քաղաքականության վրա, ինչը կարող է մանիպուլացնել քաղաքական շուկան, հետևյալ երկու պատճառներով.

Առաջին. հավասարապաշտ արժեքային կողմնորոշումով մարզինալ շերտերի քանակական գերակշռության պայմաններում պահպանողական արժեքները կարող են գերակշռել ժողովրդավարականի հանդեպ:

Երկրորդ. արժեքային պառակտումը և հասարակության համար ընդունելի քաղաքական ինստիտուտների բացակայությունը նշանակում է, որ քվեարկությունը բախումների հանգուցալուծումից կարող է վերածվել ընդհարման աղբյուրի, քանի որ ընտրությունները սաստկացնում են մրցակցող ուժերի բևեռացումը:

Նման պայմաններում անհրաժեշտ է.

- որոշել, թե որքան «վտանգավոր» են պարտվող խմբերը, և դրանով պայմանավորված՝ ձգտել փոխհատուցելու նրանց պարտությունը,
- հնարավորինս դիմադրել բոլոր խմբերի ճնշմանը, հատկապես քաղաքական աջ և ձախ թևերում գտնվողներին,
- փորձել արագորեն կայունացնել տնտեսական կառույցները, ինչի հիման վրա էլ միայն հնարավոր է ճնշման այնպիսի ազդեցիկ խմբերի ձևավորումը, որոնք ընդունակ են փոխհամաձայնության գալու,
- հզորացնել ժողովրդավարական ինստիտուտները, ձևավորել բազմակարծիքության իրավունք ունեցող հասարակություն, որտեղ քաղաքական գործընթացները հանդիսանում են ճնշման խմբերի, կազմակերպված խմբային շահերի փոխազդեցության դրսևորում:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ են.

- տարբեր, հաճախ չիմաստավորված սպասումների ձևափոխում և որոշակի ծրագրի, քաղաքական կուրսի համակարգում,

- բնակչության զգալի շերտերի մոտ քաղաքական գործողության շարժառիթ ձևավորելու ունակ քաղաքական գաղափարների առկայություն,
- համատեղ քաղաքական գործողությունների համակարգում և կարգավորում,
- տնտեսական, կազմակերպչական և այլ ռեսուրսների բավականաչափ առկայություն,
- քաղաքական լիդերների հեղինակություն:
- Ի մի բերելով ասվածը, կարելի է եզրակացնել, որ քաղաքական գործընթացը ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում երկդեմ է.

Մի դեպքում քաղաքական կյանքին բնորոշ է սոցիալական խմբերի և անհատների մասնակցության ընդլայնում՝ ներկայացուցչական ժողովրդավարության ձևավորում, որն ուղեկցվում է ավանդական քաղաքական ընտրանու թուլացումով և նրա լեգիտիմության անկումով: Մյուս դեպքում՝ բացահայտվում է քաղաքական ընտրանու գործունեության մենիշխանական մեթոդները, որոնք թույլ են տալիս որոշումների ընդունման փակ բնույթի հանգամանք՝ հրամանների միակողմանի՝ վերևից ներքև շարժում: Քաղաքական վարչակարգը խառնուրդային հատուկ տարատեսակ է՝ հիմնված ժողովրդավարական ինստիտուտների, նորմերի և արժեքների՝ մենիշխանության հետ համադրության հիմքի վրա: Հայաստանում արդի քաղաքական վարչակարգի բնութագրին համադրելի է պատվիրակված ժողովրդավարության տեսությունը, որը ձևակերպել է արգենտինացի քաղաքագետ Գ.Օ'Դոննելը [16]:

Հանրագումարելով լատինամերիկյան, աֆրիկական, ԿԱԵ և ՆԽՄ երկրների փորձը՝ կարելի է փաստել, որ ժողովրդավարական անցումը գործնականում երբեք չի ուղեկցվում նոր հաստատված քաղաքական կարգի կայունությամբ: Ավելին, քաղաքական զարգացման ճգնաժամերը (լեգիտիմության, նույնականացման, շարժունակության, ներթափանցման, բախման), իշխանության՝ լրացուցիչ սոցիալական և միջազգային աջակցության տեղազին որոնումներն ժողովրդավարական անցման գործընթացին բնորոշ երևույթներ են:

ՀՀ ժողովրդավարական անցումը սոցիալ-պատմական տեքստի համակարգային զարգացման ճանապարհին բախվել է քաղաքական հովանավորչության բազմաթիվ խոչընդոտների: Քաղաքացիական հասարակության թույլ ենթակառուցվածքը և առանձին խավերի ինքնարտահայտման ուղիների բացակայությունը Հայաստանում փոխհատուցվում է այսպես կոչված բազմաթիվ «էլիտային խմբերի» ձևավորումով: Ժողովրդավարական հասարակությանը բնորոշ բազմակարծության փոխարեն ՀՀ-ում արագ տեմպերով ձևավորվում են էլիտային

մեկուսախմբեր, որոնք չեն ղեկավարվում «Հասարակական շահը հանդիսանալու բարիքն է» ժողովրդավարական կարգախոսով:

Մեր կարծիքով ՀՀ ժողովրդավարական անցման հեռանկարներն որոշվելու են հետևյալ հիմնախնդիրները լուծելու վարչակարգի հնարավորություններով՝

- *հանել* քաղաքական վերահսկումից տնտեսական պաշարների գերակշիռ մասը,

- *ստեղծել* բաց սոցիալական կառուցվածք՝ մարդկանց ինքնահաստատման, ինքնադրսևորման, ինքնաիրացման ճանապարհով,

- *հաստատել* տարբեր ուժերի միջև փոխադարձ անվտանգություն և բաց մրցակցություն ապահովող քաղաքական և քաղաքացիական մշակույթ,

- *ձևավորել* տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգ,

- *անդամագրվել* ժողովրդավարական գլոբալ քաղաքական գործընթացների կառավարման համակարգին :

Հայաստանի առջև պատմական խնդիր է ծառացել՝ հղկելով քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը, մոդելավորել ժողովրդավարական քաղաքական գործընթացներ և անցում կատարել բնականոն զարգացման: Ակնհայտորեն այս զարգացման մոդելը չի լինի ամբողջությամբ ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ էլ արևելյան՝ հովանավորչա հայրիշխանական: Միաժամանակ այն կլինի հայկական՝ սինթետիկ, որը հնարավորություն կտա, ներդաշնակվելով գլոբալացման գործընթացներին, ժողովրդավարական անցում կատարել՝ պահպանելով ազգային արժեքային համակարգի ինքնատիպությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Иноземцев В.А.**, – Пределы “догоняющего” развития. М.: Экономика, 2000.
2. Американская социологическая мысль. Тексты / Под ред. **В.И. Добренкова** – М. Издание Международного Университета бизнеса и управления, 1999.
3. **Кара-Мурза С.Г.** – Манипуляция сознанием. (серия: История России – Современный взгляд), М., Алгоритм.
4. Robert A. DAHL – Democracy and its Critics. – New Haven and London, University Press, 1989. p. 226-227, Даль Р. Демократия и ее критики/ Пер. с англ. Под ред. М. В. Ильина.- М.: Российская политическая энциклопедия¹ (РОССПЭН), 2003.
5. **Чарльз Ф. Эндрейн.** Сравнительный анализ политических систем, эффективность осуществления политического курса и социальные преобразования. Пер. с англ. М.: Изд. “ИНФРА-М”, “Весь мир”, 2000.
6. **Симонов К.В.** – Политический анализ. М.: Логос, 2002. с. 34
7. **Дегтярев А.А.** – Основы политической теории. М.: Высшая школа, 1998.
8. **Бурдые П.** – Социология политики. М., 1993.
9. **Бейнгаст Б.** – Политические институты с позиций концепции национального выбора. Политическая наука: новые направления. М., 1999.
10. **Гау Питерс Б., Райт В.** – Социальная политика и управление: вчера и сегодня. – Политическая наука: новые направления. М., 1999.
11. **Доич М.** – Разрешение конфликта Конструктивные и деструктивные процессы. // Политология: хрестоматия. (Сост. М. А. Василюк). М., 2000.
12. **Gross B.**- Political Process.- International Encyclopedia of Social Sciences. Vol. 12. (Greenstein F., Polsby N. Eds.) – N. Y. – London, 1968.
13. **Simon H.** – Administrative Behavior: The Study of Decision Making. Processes in Administrative Organizations. – N. Y., 1997.
14. **Лейпхарт А.**- Демократия в многосоставных обществах. Сравнительное исследование. М., 1997.
15. **Мельвиль А. Ю.** – Демократические транзиты. Теоретико-методологические и прикладные аспекты. – М., 1999.
16. O'Donnell G. Illusions about Consolidation. – Journal of Democracy, 1996. vol. 7, № 2, O'Donnell G. – Polyarchies and the (Un) Rule of Law in Latin America: A Partial Conclusion.– Mendez J. E., O'donnell G., Pinheiro P. S. (eds.) – The (Un) Rule of Law and the Underprivileged in Latin America. Notre Dame, IN.

MARIAM MARGARYAN

*Head of the Chair of Political
Science of the PAA of the RA.
Doctor of Philosophy*

**POLITICAL PROCESSES IN TERMS OF THE RA
DEMOCRATIC TRANSITION**

The article views political process as a complex, multilevel phenomenon with the ethno- and socio-cultural features. An analysis of political processes in non-West countries has been carried out according to American political scientist Pay's "17 points". According to the author, political processes of the Republic of Armenia, bearing chaotic and marginal characteristics of the value system transformation, don't provide the increase of democracy. In the article the author proposes to converge rational and irrational values.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՒԼՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՉԵՈՒՆԱՐԿ

Ի. Գ. Ռ., պրոֆ. **Ա. Շ. Հարությունյանի** և
տ. Գ. Ռ., պրոֆ. **Յու. Մ. Սուվարյանի**
ընդհանուր խմբագրությամբ

«Պետական մատայություն»
Երևան - 2005

ՕԳՏԱԿԱՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրերս լույս է տեսել «Հանրային քաղաքականության վերլուծություն» ուսումնական ձեռնարկը, ուր ներկայացված են հանրային քաղաքականության մեթոդաբանությունը և կառուցվածքը, հանրային քաղաքականության վերլուծության մեթոդները, մշակման սկզբունքները, փուլերը, պետական քաղաքականության օրենսդրական հիմքերը, տեղական ինքնակառավարման համակարգում վարվող քաղաքականությունը, քաղաքական համակարգի ինստիտուտները և հանրային քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում:

Հեղինակների կողմից լուսաբանվել են գիտական գրականության մեջ առկա քաղաքականության տարբեր մեկնաբանությունները, և դրանց դասակարգմամբ տրվել են սոցիոլոգիական, տնտեսագիտական, բարոյագիտական, սուբստանցիոնալ, ինստիտուցիոնալ և գործընթացային ըմբռնումների էական հատկանիշները, սահմանումները, ինչպես նաև համեմատության հիմքի վրա քննարկվել են ըմբռնման տեսանկյունից բավականին բարդ հայեցակետերի առավելություններն ու թերությունները:

Դիտարկվել են «հանրային կառավարում» և «հանրային քաղաքականություն» կատեգորիաները, քաղաքացիական հասարակության էական կողմերն ընդգրկող մոտեցումները:

Խորությամբ քննարկվել և մեկնաբանվել են հանրային քաղաքականության բովանդակությունը, պետական ու հանրային քաղաքականության ընդհանրությունները, տարբերությունները, հանրային կառավարման «սուբյեկտ» և «օբյեկտ» հասկացությունները, ներկայացվել են հանրային կառավարման համակարգի կազմավորման կառուցակարգը, հանրային կառավարման օրենսդրամորմատիվային հիմքերը, սկզբունքները, մեթոդները, պետական կառավարման գործառույթները, հանրային քաղաքականության հետազոտության և վերլուծության էությունը, ինչպես նաև կառուցվածքը և մոդելները: Մասնավորապես, կարևորվել է ժամանակակից քաղաքագիտության մեջ առանձնացվող երկու տեսական (հիմնարար) և կիրառական (գործնական) մակար-

դակները, որոնք այլ կերպ անվանվում են քաղաքականության հետազոտություն և քաղաքականության վերլուծություն:

Անդրադարձ է կատարվել նաև հանրային քաղաքականության վերլուծության իրագործման մակարդակներին (մակրոմակարդակ, միկրոմակարդակ, մեզամակարդակ), ոլորտներին (պետաիրավական, տնտեսական, սոցիալական և այլն) և ճյուղերին (տրանսպորտ, կապ, առևտուր և այլն):

Հեղինակների կողմից ուսումնասիրվել են նաև հանրային քաղաքականության վերլուծության ժամանակ օգտագործվող երկու խումբ մոդելները, որոնցից առաջինը վերաբերում է քաղաքականության վերլուծության կազմակերպմանը, իսկ երկրորդը՝ հիմնախնդիրների լուծմանը:

Գրքում մանրամասն ուսումնասիրվել են քաղաքականության վերլուծության նշանակությունը, սկզբունքները և տեղեկատվական աղբյուրները, հանրային քաղաքականության իրագործման ապահովման տրամաբանության և մեթոդաբանության հիմքի վրա ձևավորվող քաղաքականության մշակման վեց հաջորդական փուլերը: Տրվել է հիմնախնդրի սահմանումը, ներկայացվել են դրա կառուցման փուլերը: Քննարկվել են նաև ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային գնահատումը, որոշումների ընդունումը և քաղաքականության նախագծումը, մոնիտորինգը:

Գրքում ուսումնասիրվել են պետական քաղաքականության սահմանադրական և իրավական հիմքերը, պետության գործառույթները, պետական քաղաքականության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, մշակման ու իրագործման մարմինները և նրանց գործառույթները:

Ուսումնական ձեռնարկում ներկայացված է նաև քաղաքականությունը տեղական ինքնակառավարման համակարգում: Լուսաբանվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները, տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող մյուս օրենքներն ու իրավական ակտերը:

Ներկայացվել են տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման մարմինները և դրանց գործառույթները, ոլորտում վարվող քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման ոլորտները ՀՀ-ում:

Ձեռնարկում դիտարկվել են նաև քաղաքական համակարգի ինստիտուտները և հանրային քաղաքականությունը: Ուսումնասիրվել են «քաղաքական համակարգի» գործունեության սահմանադրական հիմունքներն ու էական գծերը, կուսակցությունները որպես հանրային

քաղաքականության սուբյեկտներ, քննարկվել են դրանց գործունեության սահմանադրական հիմքերը, հասարակական միավորումները (արհմիություններ, տարբեր տեսակի շարժումներ, «քաղաքացիական նախաձեռնություններ», սպառողների միություններ, բնապահպան կազմակերպություններ, մշակութային միություններ և այլն), ինչպես նաև այլ կազմակերպատիրական ձևեր ունեցող ճնշման խմբերը (առևտրային և արդյունաբերական միություններ, զանազան հիմնադրամներ, խորհրդատվական ֆիրմաներ ու քաղաքական գործողության խմբեր):

Անդրադարձ է կատարվել զանգվածային լրատվության միջոցներին, դրանց դերին ու նշանակությանը պետական և հանրային քաղաքականության մշակման և իրականացման ոլորտներում:

«Հանրային քաղաքականության վերլուծություն» ուսումնական ձեռնարկում ներկայացված է մակրոտնտեսական քաղաքականության կարևոր ուղղությունները՝ պետական գույքի մասնավորեցումը, կառուցվածքային, հարկաբյուջետային, դրամավարկային և ներդրումային քաղաքականությունը ՀՀ-ում:

Գրքում քննարկվել և մեկնաբանվել է սոցիալական քաղաքականությունը Հայաստանում, մասնավորապես, պետական քաղաքականությունը բնակչության եկամուտների, կենսաթոշակների և նպաստների ոլորտներում, ինչպես նաև պետական քաղաքականության հարցերը սոցիալական ոլորտի ճյուղերում (բնակարանային ապահովություն, կրթություն, առողջապահություն, մշակույթ և այլն):

Ձեռնարկում ամփոփված են նաև ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը և ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

Առանձին բաժնով ներկայացվել են գենդերային քաղաքականության հիմնահարցերը:

«Հանրային քաղաքականության վերլուծություն» ուսումնական ձեռնարկը հասցեագրված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, դասախոսներին, ասպիրանտներին, հանրային քաղաքականության վերլուծության հիմնախնդիրներով զբաղվողներին:

*Գառնիկ Սաֆարյան,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Վիլեն Խաչատրյան

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (*Font*): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին միջ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (*Width 14.8 cm, Height 21 cm*) չափին, ունենա լուսանցքներ՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1 (*Single*): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (*Justify*):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը (օրինակ՝ 15.04.2005 թ.):

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ *WORD* ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին *EXCEL* ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով (օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»):

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **մզացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրատարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսափվը, ամիսը, տարին: Օրինակ՝

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:

2. *Шарапова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира. "Наука", М, 1986. с. 105.

3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.

4. <http://www.oecd.org/dsti/sti>, March 1, 2001.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի **վերնագիրը 3 լեզուներով՝** հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

Խմբագրական խորհուրդ

Խմբագիր՝	ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝	ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ
Սրբագրիչ՝	ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ԱՍՅԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Չափսը՝ 70x100^{1/16}, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
ծավալը՝ 8 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ
Երևան 10, Հանրապետության 65, հեռ. 52-36-80, 52-36-00